

9(47925)
6 - 91

19/08

9p

24 JAN 2006

ՀԱՅԿԱՆ ՎԱՀՏԸ

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՌԱՋՈՐԴՈՒԹԵԱՄԲ

1912—1913 թ. թ.

ԲԱԼՔԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ

Գ.Բ.Յ

Ա. ԲՈՒՐՅԱ Ա. ԽԱՆԻ,
կոմիսար

Արմեն Սլոն,

„Արմանական ռազմական գումարություն
Անդրանիկի անձնագիրը՝
1912—1913 թ. թ.”

Եւրոպական տպարան Ա. Բ. Շահրաբրանի, Բաքաւ,

Էլեկտրովուղարկություն Ա. Շահրաբրանի, Բաքաւ,

1914.

05 SEP 2011

947.925)

Q - 91

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐՏԸ

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ

1912—1913 թ. թ.

ԲԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

ԳՐԵՑ

ԱՐՄԵՆ ՍԻԿԵՐ,

Լամբանոր

Арменъ Сюни.
„Армянская рота подъ начальствомъ
Андраника на Балканской войнѣ
1912—1913 г.г.“

Հայոց Ազգական Պատերազմունքի Հայոց Ազգական Պատերազմունքի

Ելեկտրաշաբաթ տպարան Ա. Թ. Շահբաղիանի, Բագու.

Электропечатня С. Т. Шахбагова, Баку.

1914.

26 FEB 2013

6181

ՅԱՌԱՋԱԲԵՆ

ՅԱՂԱԶԱԲԱՆ

Կատարելոց այն, ինչ որ կրոպական դիւճնագիտութիւնը այնպիսի ճարպիկութեամբ երկար տարիների ընթացքում՝ մհծ խնամքով և յետին մտքերով՝ պահպանում էր. պատերազմ՝ յայտաբարելոց Տաճկաստանի դէմ, խախտելոց «status quo-ն»...

Ում յիշողութեան մէջ թարմ չէ այս էնտուզիազմը, այն ընդհանուր ոգկորութիւնը, որով ընդունւեց ամբողջ քաղաքակիրթ ազգերի կողմից այդ պատերազմի յայտարարութիւնը. ով չէր հասկանում, որ հատել, սպառել են տառապող ժողովուրդների համբերութիւնը, զոհողութիւնները. բաժակը վաղուց արդէն լցւել՝ թափում է բոլոր կողմերից... Մի վախ, մի երկիւղ կար միայն—զուցէ Բալքանեան փոքր ազգերը չկարողանան դիմագրել տաճիկ կոչւած ահեղ, անօրէն, վայրագ գաղանին, գուցէ անյաջողութեան հանգիպեն խիզախ, քաջ գաղափարականները հանդէպ վայրենի, արիւնուշտ, ոխերիմ թշնամուն... Այդ էր պատճառը, որ բոլոր ազատասէր, քաղաքակիրթ ազգերը սրտատրով հետեւում էին այդ, հերոսական պատերազմին և պատրաստ էին ամենքն էլ օգնութեան գալու ով ինչով կարող էր. հարուստները իրենց քսակներով, աղքատները իրենց անձերով, ազգերը իրենց համակրութիւնով, որը նոյնպէս մեծ նեցուկ էր սարքի պատռութեան համար կուողներին:

Հայ ազգը, որ հոգով ու մարմնով կռւողների
կողմն էր, որ տեսդով և սրտի տրոփիւնով հետևում էր



4 842-89

փոքր ազգերի մեծ զոհաբեր ճիգերին, և սրտի կոկիծով ափսոսում էր, որ ինքն էլ իր աշխարհագրական դիրքի շնորհիւ զրկւած է իւր ամբողջութեամբ այդ մեծ թատերաբեմի վրայ մասնակցութիւն ունենալուց, որպէս ազգ, որպէս դաշնակից,—այնուամենայնիւ նա, հայ ազգը չէր կարող մնալ որպէս պաղարիւն, խաղաղ հանգիստես իւր աշքերի առաջ կատարւող պատմական անցքերին, չէր կարող մնալ անվրդով՝ ծովածաւալ ալեկոծ ոգերութեան—սարուկ մակեդոնական ժողովրդի ազտապրութեան—առաջ...

Այդ էր պատճառը, որ գեր պատերազմի նախօրեակին հարիւրաւոր հայ անկիւններից ցանկացողներ եղան հարիւրներով ու հազարներով թռչել, անցնել պատերազմի գաշտը, կուել՝ միւսների հետ կողք-կողքի՝ ստրկի ազատութեան համար: Բայց, գժբախտաբար, ինչ որ զիւնագիտական և քաղաքական պատճառներով ցանկալի չեղաւ գործին լայն ծաւալ տալու, և նա գարձաւ մասնաւոր, անհատական բնաւորութիւն կրող գործ...

Սակայն բուլղար կառավարութիւնը սկզբից մինչև վերջ գործին նայել է շատ լուրջ և ազգային տեսակտից. և հենց այդ պատճառով էլ Հայկական վաշտը (Արմանական ռոտա) կրել է ազգային բնաւորութիւն, ունենալով իւր ազգային գրաւակը, իւր հայկական կազմակերպութիւնը, այսինքն՝ հայ սպայզիադապետը, հայ ենթասպաները և հայ լեզով վարժութիւնները՝ ըլունակաները:

Հայկական ազգային վաշտի՝ որպէս կատարեալ հայկական բնաւորութիւն ունեցող մի միութեան մասնակցութիւնը Բալքանեան պատերազմին մի պատմական խոշոր փաստ է մեզ համար, և մենք իրաւունք ունինք թէ պարծենալու և թէ արձանագրելու այդ փաստը ի գիտութիւն ամբողջ հայ ազգի և ապագայ սերունդների:

Ահա այդ է, որ մեզ դրդում է գրիչ վերցնել և հասարակութեանը ներկայացնել մեր այս համեստ աշխատութիւնը, հաւտացած լինելով, որ դէպի մեզ բոլորն էլ ներողամիտ պիտի գտնւին, քանի որ մեր գրիչը անզօր գտնւեց Հայկական վաշտի ցանկալի նկարագիրը տալու: Յուսով ենք, որ կը ներւին մեր բոլոր թերութիւնները, քանի որ մենք, որպէս ականատես Հայկական վաշտի գործունէութեան, ցանկացանք միայն լոյս աշխարհ հանել նրա գործունէութիւնը և մեզ հետ մեր հայրենակիցներին էլ խնդակից ու մասնակից անել այն քաղցր բոպէներին, որ զգացել ենք մենք պատերազմի գաշտերում՝ տեսնելով մեր սերելի ընկերների և եղբայրների քաջութիւնը և այլազգիներից լսելով նրանց կատարած զոհողութիւնների և քաջութիւնների գովասնքները և արժանաւոր գնահատութիւնները: Ո՞րն է զրանից աւելի բարձր, զրանից աւելի քաղցր բաւականութիւնը. ո՞րն է զրանից աւելի հպարտ, աւելի դուրեկան ցանկութիւնը:

Ահա այդ է պատճառը, որ մենք գրիչ ենք վերցնում լոյս աշխարհ գուրս բերելու Հայկական վաշտի գործերը: Մենք, որ սկզբից մինչև վերջ եղել ենք նրանց հետ, ուրախացել և տիրել նրանց հետ, տանջւել և հրաւել նրանց ցաւերով և ուրախութիւններով. մենք, որ պահապան հրեշտակի պէս հետեւել ենք նրանց ամեն մի քայլին և ուր որ ձեռք չի հասնէլ խօսքով կամ գործով ենք պաշտպան կամ թարգման հանդիսացել նրանց ցաւերին, նրանց զարդերին և ուրախութիւններին թէ մեծերի և թէ օտարների առաջ,—այս օր էլ նոյնպէս մեր այդ համեստ գիրն ենք կատարում զարձեալ յանուն ազգային գաղափարի, յանուն ազգային պատուի, յանուն ազգային պարտականութեան:

Օտար երկնքի տակ, մի հեռաւոր և խուլ անկիւնում ենք գրում այս տողերը, և մենք իքներս էլ գրում ենք, որ մեր թոյլ գրիչը գժւարանում է, անզօր

Է արտայալտելու այն, ինչ որ եռում, բորբոքւում է մեր հոգու մէջ, որ մեր գրչով չպէտքէ գրւէր Հայ-կական վաշտի փառաւոր պատմութիւնը, բայց մենք հնազանդուում ենք նախախնամութեան առաջ, և նախօրօք համոզւած լինելով ընթերցողների ներողամտութեան վրայ, կատարում ենք մեր սրբազն պարտականութիւնը:

ՕՐԻՏԵՐՆԱԿԱՐԳԻ

ՏԱՑԿԱԿԱՆ ԼՈՒԾԸ

Տաճկական լրւծը... Ո՞ր հայը չգիտէ, թէ
որքան ծանր, որքան դժոխային է այդ լուծը:
Ո՞ր հայը չէ լսել այդ լծի տակ տանջւող ժողովրդի հեծկլտանքը, լացն ու կոծը, անթիւ և
անտանելի տանջանքները. ո՞ր հայը չէ տեսել
իւր աչքերով այդ տաժանակիր լծի տակ
մաշւող, արնաքամ եղող զոհերին՝ քաղցած ու
ծարաւ, անտեկ, անտիրական, մերկ ու տկլոր,
երկըէ երկիր թափառելիս, ցաւ ու կրակ հաց
մուրայիս...

Սասունի կոտորածները, Պոլսի արիւնհեղութիւնները, Աղանայի ջարդերը, հարիւր հազարաւոր անթիւ, անմեղ գոհերի գերմարդկային տանջանքները, ճիշերն ու աղաղակները որ հայի սիրաը չեն այրել, կսկծացրել, բորբոքել. որ հայի ականջները չեն խլացրել, շշմեցրել, արիւնը երակներում սառցրել, կանգնեցրել:

Կարմիր սուլթանի դժոխք գարձած դըախ-
տանման երկիրը՝ չքնաղ Հայաստանը իր անա-
պատ գարձած պաղաբեր դաշտերով, իր կարմիր
արիւնով ներկւած գետերով, լաց ու շիւանով

բռնւած դիւղերով ու քաղաքներով, ուր զըժ-
բախտ մայրն է լացում իւր խողխողւած զաւակ-
ների դիակների և բռնաբարւած, անտատւած աղ-
ջկանց և հարսների վրայ, — որին չէ ծանօթ այդ
գժբախտ, հարստահարւած, տանջանքների և
թալանների, կախաղանների և հալածանքների,
սուզի և լացի երկիրը:

Տանջանք չմնաց, որ կրեց հայ ժողովուրդը,
դառնութիւն չը մնաց, որ քաշեց հայ ժողո-
վուրդը, հայ խաղաղ ու աշխատասէր ժողովուր-
դը դարերի, երկար դարերի ընթացքում. և նրա
միակ փափազն այն էր, որ հանգիստ ապրի իր
պապերի հողի վրայ, հայրենական յարկի տակ,
իսկ այդ էլ կարմիր սուլթաններին շատ էր
թւում, չափազանց մեծ արտօնութիւն էր
երկում:

Սակայն եկան նոր ժամանակներ, նոր կար-
գեր, և սուլթանների երկրումն էլ, կարծես, փայ-
լեց ազատութեան արշալոյսը, փայլեց, ուղար-
կեց մի քանի ճառագայթներ ազատութեան ծա-
րաւ, հալ ու մաշ եղած գժբախտ ժողովուրդնե-
րին, վառեց նրանց յուսահատ, խաւար սրտերի
մէջ մօտալուտ ազատութեան փայլուն ճրագը
նոր, ազատ և երջանիկ կեանքի համար, բայց և
խկոյն մարեց, խաւարեց՝ նորից ծովարցունք,
նորից արիւն-կոտորած սփոելով երկրի բոլոր ան-
կիւններում՝ վանից Բիթլիս, Բիթլիսից Աղանա,
Աղանայից Մակեդոնիա—Շախիպ և Կոչան... Նո-
րից դաւադրութիւններ, կոտորածներ, թալան-

ներ երկրի չորս կողմերում: Խաւարի ոյժերը,
արիւնով մնւած, արիւնով մեծացած հրէշները չեն
կարող հաշտւել խաղաղ ապրուստի անկոտորած
և անջարդ կեանքի հետ, անընդունակ են ապրե-
լու մարդավայել կերպով, որովհետեւ ի բնէ գազան-
ներ են և պէտքէ մնան գազաններ՝ մարդկային
կերպարանքով և մարդկանց համար պատուհաս:

Ահա այդպիսի լծի, տաճկական լծի տակ
տառապում էին Փոքր-Ասիայում հայ ազգը, իսկ
Բալքաննեան թերակղզու վրայ մակեդոնական
ժողովուրդը,— երկու գժբախտ բախտակից քոյ-
րեր, երկուսն էլ չնաշխարհիկ գեղեցկութիւնով,
որի պատճառով բոլոր հարևանների ագահ և
վաւշոտ աչքերը յառած էին գէպի այդ անմեղ,
հեզ ու խոնարհ կոյսերը՝ Հայաստան ու Մակե-
դոնիա:

Բայց Մակեդոնիան աւելի երջանիկ էր, քան
իւր գժբախտ քոյրը. նրա չորս կողմը բնակւում
էին իւր ցեղակիցները, ազատ եղբայրները,
որոնք գիշեր ու ցերեկ, առաւօտ ու իրիկուն
մտածում, խորհում էին իրենց քրոջ դառն վի-
ճակի մասին և լուս ու մունջ, անդադար պատ-
րաստում էին մի օր, մի յաջող ժամանակ ոտքի
ենելու, իրենց քրոջն ազատելու տաճկի ծանր
լծի տակից:

Եւ եկաւ այդ յաջող բոպէն. հասաւ ազա-
տութեան այդ տեհնչալի ժամը: Կարմիր գազա-
նը պատերազմի բռնւեց Իտալիայի հետ, որը
ձգձգւեց, բարդութիւններ առաջ բերեց և աւե-

ի անխուսափելի դարձրեց ընդհանուր Բալքան-
եան պատերազմի բռնկումը... Շտիպ և կոչան
քաղաքներում ոռոմքների պայթիւնը, կարծես,
վերջին կաթիւն էր լցած ու լքած բաժակի մէջ
և միւնոյն ժամանակ ազգանշան Բալքանեան
ազգերի համար շատրւել, չկորցնել ոսկի ժամա-
նակը: Շտապով կազմւեց և կնքւեց Բալքանեան
դաշնակցութիւնը, որը և ոգեսրած ազգերի
բուռն զգացմունքներին և ցանկութիւններին
բաւականութիւն տալու համար՝ պատերազմ
յայտարարեց Տաճկաստանին, իւր հնդադարեան
արիւնուշտ, ոմերիմ թշնամուն:

Դղրդաց երկինք, Դղրդաց երկիր, ինչպէս
մի մարդ ոտքի ելան դաշնակից ազգերը, կազմ
ու պատրաստ պատերազմի դաշտ նետեցին
առիւծների պէս, ուրախոզուարթ, երդ ու պա-
րով. իսկ Տաճկաստանը, դեռ գոռող ու անխոհեմ,
հեգնում, ծաղրում էր նրանց:

Բայց հասան առաջին յաղթութիւնների
ձայները, եկան տաճկաց բանակների խայտառակ
փախուստների և գերութիւնների լուրերը, ամ-
բողջ աշխարհը լայն շունչ քաշեց, չծածկելով իւր
ուրախութիւնն ու բաւականութիւնը: Շփոթւեց
տաճիկը, գլուխը կորցրեց, աեսաւ որ սրով ու
հրով, ուժով և գոռողութիւնով էլ չի կարողա-
նալու երկիւղ, սարսափ տարածել և ազգել
ազատածարաւ, անձնազոհ ժողովուրդների վրայ
և դիմեց իւր սովորական, խարդախ միջոցին—
բանակցութիւններին, երկար ու բարակ խորհր-

դակցութիւններին, միշտ յոյս դնելով դիպւած-
ների, դաշնակիցների մէջ ցանւող անհամաձայ-
նութիւնների վրայ: Աչինչ սակայն չօգնեց. և
ստիպւեց պատերազմի երնել դաշնակիցների
դէմ-յանդիման, կուի դաշտը դուրս գալ փորձե-
լու իր առասպելական, անհամար, բայց մութ
ոյժերը:

Բալքանեան թերակզբին իւր բոլոր տարա-
ծութեան վրայ՝ Սև ծովից մինչև Եգէեան ծովը,
Մարմարա ծովից մինչև Աղրիատիկը դղբդում,
որոտում էր հազարաւոր թնդանօթների տհեղ
գոռումից, երբ ծնունդ առաւ Հայկական վաշտը,
որպէս փոքրիկ ազբիւր՝ զնալու միանալու
մարդկային ծով-բանակներին՝ օգնութիւն հաս-
ցնելու իւր փոքրիկ թւով, բայց մեծ ոգեսրու-
թիւնով, իւր փոքր ուժով, բայց անյաղթ ոզով
և անվեհեր ու հնդադարեան վրէժինդրութիւնով
վառւած սրտով:

II

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՇՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

1.

1912 թիւ սեպտեմբերի 17-ին Բուլղարիան,
նրա հետ և միւս Բալքանեան պետութիւնները
յայտարարեցին ընդհանուր մորթիկացիս—զինա-
ւորումն: Թէ ինչպիսի ոգեսրութիւն էր տիրում
ամեն տեղ, և ինչպիսի ուրախութեամբ ընդու-

նեց ժողովուրդը այդ զինաւորումը, պարզ ապացոյց է այն, որ ամբողջ Բուլղարիան երկու օրուայ մէջ կազմ ու պատրաստ՝ բանակների բաժանեց, իսկ մինչև 5—6 օր հասան Բուլղարիայի սահմաններից դուրս գտնւողները. և այդպիսով, գեռ մինչև պատերազմի յայտարարութիւնը, զօրքը պատրաստ, դիրքեր բռնած, անհամբեր հրամանի էր սպասում ջախջախելու թշնամու գլուխը:

Եւ այդ հրամանը եկաւ. հոկտեմբերի 5-ին յայտարարւեց պատերազմը և հենց առաջին իսկ օրերում բուլղարների զէնքը փառքով ծածկւեց, նրանց արագ ու գաղտնապահ գործողութիւնները տւեցին փառաւոր յաղթութիւններ և հիացրին ամբողջ աշխարհը. Կիրկ-Քիլիսէ, Լուլէ-Բուրգաս անմահացրին բուլղար զինւորի անունը, նրա պաղարիւն քաջութիւնը, նրա անձնուրաց առաջսաղացումը, միշտ «յառաջ», «յառաջ դանակով»—„Հառեծք, հա հոյե!“: Եւ ամբողջ աշխարհը ծափահարում էր այդ քաջերին, որոնք մինչև այդ ժամանակ անյայտ, խաղաղ գիւղացիներ էին և ապրում էին իրենց առօրեայ չարքաշ կեանքով:

Այդ ժամանակ ես տաճկաց մայրաքաղաքումն էի գտնւում: Մեռել պալանձւել էր սուլթանների գեղեցիկ քաղաքը. ահը, սարսափը պատել էր ամենքին: Ծածուկ, փափսալով էին յայտնում միմեանց պատերազմի նորութիւնները, և նրանք չէին կարողանում իրենց ուրախու-

թիւնը ծածկել դաշնակիցների յաջողութեան առթիւ, երկիւղածութեամբ չորս կողմերն էին դիտում, մի գուցէ լրտեսները հետեւն: Քաղաքում տիրում էր կատարեալ մեռելութիւն. ոգևորութեան, ուրախութեան նշոյլ անգամ չէր երկում:

Բուլղարների արագ, անսպասելի և անզուսպ գրոհի տակ, բուլղար զինւորի «դանակի»*) առաջ չի կարողացել դիմագրել տաճիկ զօրքը, փախուստի է դիմել՝ ջարդւած, գզգզւած, անկարգ և անկանոն դրութեան մէջ: Հիւրանոցները, քարաւանսարանները լիքն են մուսաֆիրներով՝ հիւրերով—փախստական Աղրիանապոլսից և Եւրոպական Տաճկաստանի այլ տեղերից: Նոցա պատմածները, նոցա դրութիւնը ան և սարսափ են ազգում ամեն տեղ, ամենքի վրայ: Անա թէ ինչու է մեռել, ինչու է լոել սուլթանների քաղաքը, քաղաքների թագաւորը:

Իսկ երբ մի օր լուր տարածւեց, թէ բուլղարական բանակը հասել և պաշարել է մայրաքաղաքից 20 վերստ հեռաւ ուղարկեան վրայ գըտնւող Զօռլուն, աննկարագրելի սարսափ տիրեց ամենքին: Լաց, կոծ էր, որ լսում էր շատ տեղերից, ընդհանուր իրարանցում, յուսահատութիւն... Եւ լուրերը՝ մէկը միւսից վատ՝ բերնէ բերան էին անցնում (որովհետեւ ցենզուրան չէր թողնում ոչինչ տպել), աւելի բարդացնում դրութիւնը, աւելի յուսահատեցնում բնակչու-

*) Բուլղարական հրացանը տինի (շտիկ) տեղ դանակ ունի ծայրին:

թիւնը. սուտը ճշմարտից ջոկելն անհնար էր շատ անդամ:

Տաճիկը շանթահար, զլուխը կորցրած, յաղթած, ցիրացան, փախստական. «քաջ տաճկական բանակը» անարգւած, իւր հմայքը, անյաղթելիութիւնը, հին փառքը կորցրած — ահա ինչն էր մեռցրել, սպանել մայրաքաղաքի ոգևորութիւնը, ահա ինչն էր պատճառը ոչ տաճիկ խաւերի ուրախութեան ու հրճւանքի:

Այդ ճակատագրական դրութեան մէջ թուղեցի ևս Տաճկաստանի մայրաքաղաքը և անցայ Բուլղարիա:

Կատարեալ ուրիշ տեսարան, բոլորովին ուրիշ պատկեր, ուրիշ տպաւորութիւն:

Հենց որ Դամուք գետի ափը հասայ և մտայ Բուլղարիա գնացող մի շոգենաւ, մնացի զարմացած. կարծես, շոգենաւի վրայ հարսանեաց հանդէս էր կատարւում, մեծ ինջոյք կար. երգ, երաժշտութիւն, պար, ճառաբանութիւն, կենաց բաժակներ, ծիծաղ, ինդութիւն, անսահման, անզուսպ ուրախութիւն էր, որ լւում էր նաւի ամեն մի սենեակից, ամեն մի նկուզից: Որոտընդոստ կեցցէներ և ուսաներ էր, որ թընդացնում էին օդը շոգենաւից և ցամաքից, ուր խոնւած ժողովուրդը դիմաւորում էր նորեկներին:


Մեծ գժւարութեամբ տեղ գտայ շոգենաւի մէջ. բաւական ժամանակ մնացել էի շւարած, ոչինչ չէի հասկանում, չէի կարողանում ու չըս

հաւաքել, այնքան տեսարանը սրտաշարժ, ոգեուրիչ, անկեղծ և մխիթարական էր: Շոգենաւը ծայրէ ծայր լիքն էր ուրիշ երկիրներից հայրենիք շտապող պահեստի զինւորներով. դրանք էին ուրախութիւն անում, որ պատրաստ են մեռնելու հայրենիքի համար, որ վերջապէս հնարաւորութիւն են ստանում ստրուկ եղբօր ազատութեան համար կուելու, զոհւելու: Մեռնելու այդպիսի պատրաստականութիւն, այդպիսի ոգեորութիւն ես ոչ թէ չէի տեսել, այլ չէի էլ երեակայել: Ահա դրանց էին ոգեորւած կեցցէներով ընդունում ամեն տեղ, ուր որ հասնում էր շոգենաւը: Բուռն, խլացուցիչ, արբեցնող ոգեորութիւն...

Պոլսի թշւառ պատկերը, անատոլիցի տաճիկ զինւորների փադիշահին երկար կեանք մաղթող խզճուկ աղաղակները, որոնք մի կատարեալ դիսոնանս էին լուռ փողոցների ամայութեան մէջ, իսկոյն չքացան իմ յիշողութիւնից. ես էլ բռնկւեցի այդ երիտասարդ, անձներ, գաղափարական ոգեորութեամբ:

— Կեցցէ Բուլղարիան, կեցցէ Մակեդոնիան:

Հասանք Ռուշուկ, ուր ոգեորութիւնը, կարծես, հասաւ իւր գագաթնակէտին թէ դիմաւորողների և թէ եկողների կողմից: — Այժմ էր երբ յիշում եմ այդ բողեները, հաւատս չէ գտվու, թէ այդպիսի ուրախութիւն, այդպիսի սրտակցութիւն, համերաշխութիւն, իրաւ, կա-



բող է տեղի ունենալ-մի պատերազմի առթիւ. պատերազմի, որը շատ-շատերից պէտք է իլէ իրենց հարազատներին, իրենց սիրելիներին, իրենց կերակրովներին։ Ի՞նչ փոյթ, բայց չէ՛ որ կազատի իրենց եղբայրը, հինգ դարուց ի վեր տաճկի ծանր լծի տակ տանջւող, մարդկային իրաւունքներից զուրկ դժբախտ մակեդոնացին։

Նոյնը, ինչ որ շոգենաւի մէջն էր, կրկնում էր երկաթուղու գնացքում, էլի նոյն ուրախութիւնը, նոյն ոգեօրութիւնը։ Սակայն գիւղերը և կայարանները դասարկ էին. երեսում էին կանայք միայն, որոնք ձեռնքերը կրծքներին ծալած, տիսուր ու տրտում կանգնած՝ դիտում էին գնացքը և թախծոտ երեսով իրենց հեռու գնացած ամուսիններին ու որդիներին էին յիշում։ Բացի կանանցից, ծերունիներն էին, որ զինւոր դարձած, հրացանն ուսին, երիտասարդացած, վստահօրէն քայլում էին՝ գծի վրայ պահապանի դեր կատարելով։ Եւ այսպէս, ծերերն անգամ իրենց ցուպերը հրացանների էին փոխել։

Երբեմն պատահում էինք սայլերի անվերջ քարաւանների, որոնք պատերազմական մթերքներ էին տանում բանակների համար, իսկ ընդհանրապէս ամայութիւն էր տիրում չորս կողմում, որովհետեւ բոլոր տղամարդիկ գնացել հեռացել էին երկրից պատերազմի դաշտ, թողել էին դաշտային գործ, վար ու ցանք, տնային աշխատանք և դուրս եկել ընդհանուր գործի համար իրենց ծիրեն ծախտանք ծիրենով, եղներով և սայլերով օգնելու

կռւողներին, անհրաժեշտ նիւթերը մատակարարելու նրանց։ Ամայութիւն էր, բայց ոչ մեռելութիւն. միայն գործունէութեան դաշտն ու եղանակն էր փոխւած, նոր, անսովոր ասպարէզ բացւած։

2.

Հոկտեմբերի 16-ն էր. ուշ գիշերին ես հասայ բուլղարական մայրաքաղաքը — Սոֆիա։ Հիւրանոցներում տեղ չկար, շատ դռներ բաղիկուց յետոյ, հազիւ մէկ հիւրանոցում մի սենեակ գտայ։

Միւս առաւօտ շատ վաղ արթնացայ, որովհետեւ փողոցից լսող աղաղակները, ձայները, երգերը և երաժշտութիւնը չէին թողնում, որ մարդ քնի։ Դուրս ելայ փողոց. զօրամասերը մուղիկայով գնում են հա գնում։ Զինւորներ, նորեկներ փողոցներով գէս ու գէն են անցնում. լրագրավաճառ փոքր երեխաներ իրենց զիւ ձայնով ականջներ են խլացնում. սայլեր, կառքեր, շարժում, շարժում... եռում են փողոցները։

Հարց ու փորձ անելով գնացի Ղուկաս Մինասեանի սրճատունը, ուր պէտք է գտնէի մեր հոչակաւոր Անդրանիկին։ Մի գաւաթ տաճկական սուրճ պատւիրեցի ծառային և հարցնելով տեղեկացայ, որ Անդրանիկը սրճարանումն է։ Մըճարանը լիքն էր ժողովրդով, որը ոգեորւած՝ քաղաքական գրութիւնն էր քննադատում։ Ծառային խնդրեցի, որ յայտնի Անդրանիկին, թէ

կամենում եմ նրան տեսնել կարեռը գործով։
Չանցաւ մի քանի բոպէ, սեղանիս մօտեցան եր-
կու անձնաւորութիւն։ մէկը բարձրահասակ,
յաղթանդամ և շնորհալի կազմւածքով, գեղեցիկ
և ազդու գէմքով, արծւի աչքերով, որոնց մէջ
կրակ, ոյժ, կամք և վճռականութիւն էր փայ-
լում, —իսկ միւսը կարճահասակ, գեղնած գէմքով,
մեղմ և անուշ քայլւածքով մի պարոն։ Ի՞նչ ասել
կուզի, որ առաջինն էր սարերի արծիւը, քաջ
Անդրանիկը։ Նրա հանդիպումը ահազին տպաւո-
րութիւն թողեց ինձ վրայ։ Իսկապէս քաջի, ան-
վախի, անսասանի և իշխողի, հպատակեցնողի
ներգործութիւն է անում Անդրանիկը իւր ամ-
բողջ կազմւածքով, իւր ամբողջ էութեամբ, իւր
վառվառն, կրակու աչքերով։ Միւսը սրճարա-
նապետ Ղուկաս Մինասեանն էր։

Այդտեղ երկար չխօսեցինք. չէր էլ սիրում
Անդրանիկը երկար խօսել, դատել. նա գործի
մարդ էր, կենդանի գործի, իսկ երկուսիս գործն
էլ շատ պարզ էր—եկել էինք կամաւոր օգնու-
թիւն հասցնելու բարեկամ ժողովրդին։ Միայն
այնքան իմացայ, որ կայ մի ամբողջ կամաւո-
րութիւն, որի մէջ է հայ խումբը՝ թւով 200—
250 մարդ։ Բնական էր, որ ես էլ, իբրև հայ և
նոյն նպատակով եկած, պէտքէ մտնէի Անդրա-
նիկի խմբի մէջ։ Ժամանակ չկորցրինք, իսկոյն
շտապեցինք կամաւորութեան շտաբը—գրւելու։
Հայկական խումբը երրորդ բրիգադայի մէջ էր,
ուստի իսկոյն դիմեցինք այդ բրիգադայի հրամա-

նատար փոխ-գնդապետ Ալէքսանդր Պրոտոգե-
րավին։ Շտաբը լիքն էր մարդկանցով, ներս ու
դուրս անելը չէր դադարում, հագուստեղին էին
տանում, բերում։ Եռում էր աշխատանքը, տի-
րում էր աղմուկ, իրարանցում։

Պրոտոգերովը Անդրանիկին տեսնելուն պէս
մօտեցաւ և սիրալիք բարեկց։ Երբ ինձ ներկայա-
ցրին և բացատրեցին գալուս նպատակը, նա
չափազանց ուրախացաւ և իսկոյն ինձ տարաւ
ներկայացրեց գեներալին։ Դուրս եկաւ, որ ես
շատ յարմար ժամանակ եմ եկել, այլ կերպ
շատ նեղութիւն պէտքէ կրէին, որովհետեւ ամբողջ
բրիգադան կազմ և սլատրաստ է ամեն բոպէ ճա-
նապարհ ընկնելու, բայց պակասում է միայն...
բժիշկը. այնպէս որ Պրոտոգերովը վճռական կեր-
պով մերժեց ինձ միայն հայկական վաշտի վրայ
կարգել, կարգեց ամբողջ բրիգադայի վրայ։

— Հայկական վաշտն էլ իմ բրիգադայի
մէջ է. միաժամանակ կը լիք թէ հայկական վաշ-
տի և թէ ամբողջ բրիգադայի բժիշկ, այլապէս
առանց բժշկի պէտքէ մնայինք, — ասում էր Պրո-
տոգերովը, որ շատ լաւ ոռւսերէն էր խօսում։
Նա այնքան դուրեկան և համակրելի մարդ էր,
որ անհնարին էր նրա ասածը չկատարել։ Այդ-
պէս էլ եղաւ. գեներալը տեղնուտեղը ստորա-
գրեց հրամանը և ես հենց նոյն ըոպէին մտայ
պաշտօնիս մէջ։

Պրոտոգերովը հրաւիրեց մեզ միասին մեծ
հրապարակը գնալ, ուր կամաւորները վարժու-

թիւններ են կատարում։ Ինչ ասել կուզի, որ ես իսկոյն համաձայնւցի, քանի որ փափագում էի որքան կարելի է շուտով տեսնել կամաւորներին, որոնց թուռն էին և մեր հայերը։

Ճանապարհին Պրոտոգերովը շտապով ծանօթացրեց ինձ կամաւորների կազմակերպութեան հետ, որի ամենաեռանգուն կազմակերպողներից մէկն էլ ինքն էր։

3.

Պրոտոգերովը, ինչպէս վերև ասացի, փոխգնդապետ էր և ծագում էր Մակեդոնիայի Օխրիդ քաղաքից։ Նա իւր ամբողջ կեանքը նւիրել էր իւր հայրենիքի ազատութեան գործին, և այդ պատճառով քանիցս անգամ թողած իւր զինւորական պաշտօնը՝ խմբեր կազմակերպելով անցել է Մակեդոնիա և այնտեղ կոիւ մղել տաճիկ զինւորների և բաշիբոզուկների դէմ։ Երեք անգամ անցել է նա սահմանը և ամեն անգամ էլ կատաղի կոիւներ է ունեցել տաճիկ զօրքերի հետ, նոյնիսկ երեք էլ վէրք է ստացել, վերջին անգամին շատ ծանը, այնպէս որ հազիւ գերի բոնւելուց ազատւել է իւր մի զինւորի ձեռքով, որը իւր ուսերի վրայ ամբողջ երկու օրւայ ճանապարհ տարել է իւր սիրելի խմբապետին—վոյզոդային։ Նա 49 տարեկան, վեղեցիկ տղամարդ էր, չունէր այս աշխարհում և ոչ ոք. հոգեպէս և մարմապէս անձնատուր էր եղած մակեդոնական դատին և մեծ ազգեցութիւն ունէր

բոլոր խաւերում։ Նրա ահազին ծանօթութիւնները և ժողովրդականութիւնը ոչ ոք չունէր։

Շատ կրթւած և պատրաստւած մարդ էր. ապրել էր երկար ժամանակ արտասահմանում և գիտէր լեզուներ։

Վերջին դէպքերի ժամանակ մեծ դեր է խաղացել. կազմակերպել է Սոֆիայի մէջ ահազին միախնդցոյցեր, ժողովներ է կայացրել երկրի բոլոր քաղաքների պատգամաւորների ժամանակցութեամբ, որոնք ամեն տեղ վերջացել են միենոյն օդը թնդացնող պահանջով—պատերազմ։ Այնպէս որ կառավարութիւնը, որ սկզբում տատանւում էր այդ ճակատագրական քայլն անելու, ստիպեց նրան թողնել զինւորական ծառայութիւնը. և Պրոտոգերովն իսկոյն փոխեց հազուստը և աւելի մեծ եռանգով անձնատուր եղաւ իւր զաղափարի իրագործմանը։ Մակեդոնական կոմիտէն ընդհանուր ժողով գումարեց Սոֆիայում նոյն Պրոտոգերովի և նրա ընկերների նախաձեռնութեամբ։ Փողովի մէջ արտասահմած ճառերը արդէն ոչ թէ յեղափոխական, այլ ապստամբական էին։ «Թող ժագաւորն իմանայ, որ եթէ պատերազմ չյայտարարի, նրա համար կայարանում պատրաստ է գնացքը, բարնվ թող գնայ այնտեղ, որտեղից եկել է», ասում էր հոետորներից մէկը, աւելի մեղմ կերպով արտայայտելով այն, ինչ որ ուրիշները բացարձակ էին պահանջում՝ «պատերազմ կամ ներքին յեղափոխութիւն»։

Այդ ժողովների, ցոյցերի, ճառերի հետևանքըն այն եղաւ, որ կառավարութիւնը թողեց իւր տատանւող դիրքը և կտրուկ միջոցներ ձեռք առնելով՝ արագ-արագ սկսեց պատերազմի պատրաստել: Այդ օգոստոսին էր, իսկ սեպտեմբերի 17-ին ընդհանուր զինակոչի հրովարտակը դուրս եկաւ:

Պրոտոգերովը, որ այդպիսով հասաւ իւր նպատակին, զինւորական նախարարի մօտ կանչեց և նրան առաջարկեց մակեդոնացիներից կազմակերպել մի օժանդակիչ զօրամաս, որի ծախքերի մի մասը պիտի հոգար կառաւարութիւնը, իսկ միւս մասը Բուլղարիայի մակեդոնացի տարրը և հասարակութիւնը: Ինչ ասել կուզէ, որ ցնծութեամբ ընդունեց այդ առաջարկը, և աշխարհիս բոլոր կողմերից սկսեցին օգնութեան դալ թէ դրամով և թէ իրենց անձով դժբախտ Մակեդոնիայի ցիրուցան եղած զաւակները: Կազմեց կոմիտէ, որը կոչեր արաւ հասարակութեան և, առհասարակ, գործի գլուխն անցաւ: Ժողովւեց մեծ գումար, և մօտ 12 – 15 հազար էլ երիտասարդներ՝ ամեն դասի և դասակարգի՝ մտան որպէս կամաւորներ:

Ահա այդ ընդհանուր ոգևորութեան ժամանակ էր, որ Բուլղարիայի հայերն էլ վճռեցին իրենց մասն ունենալ այդ կամաւոր օգնութեան զործի մէջ: Հայ երիտասարդները, որոնք Բուլղարիայում ապաստան էին գտել և օրէնքով ազատ էին զինւորագրութիւնից, հարիւրներով թափւեցին

Սովիա, կամենալով կամաւոր մտնել, պատերազմի դաշտ գնալ: Հայ վաճառականութիւնը նոյնպէս վճռեց մասնակցել ընդհանուր գործին նիւթական օժանդակութեամբ:

Բայց երբ սարերի արծիւ, ասլան-բալասի քաջ Անդրանիկը Վառնայից սլացաւ ու Սովիա հասաւ, գրութիւնը իսկոյն փոխւեց. հայերը վճռեցին մի առանձին վաշտ (ռոտա) կազմակերպել և զնել Անդրանիկի տրամադրութեան տակ: Կարելի՞ էր միթէ ուրիշ կերպ. Անդրանիկը գնայ պատերազմ և չունենայ գոնէ մի վաշտ հայ քաջեր... Սկսւեցին բանակցութիւններ Պրոտոգերովի հետ, որը և իսկոյն համաձայնւեց և սարքեց գործը. վաշտը բաղկացած կը լինի միայն հայերից, հայ սպայից, հայ ենթասպաներից և կը պահպանւի մասամբ հայ ժողովրդի դրամական օժանդակութիւնով. Անդրանիկն էլ կը լինի վաշտի հոգին, նրա փառքն ու պարձանը, նրա բարձրագոյն իշխանաւորը: Անդրանիկին առաջարկեց գանել մի հայ սպայ և ներկայացնել՝ ի հաստատութիւն: Այդպիսին էլ շուտով ներկայացաւ և պատշաճաւոր կերպով նշանակւեց ու հաստատեց: Դա բուլղարական պահեստի ենթասպաների դպրոցն աւարտած և պող-պորուչիկ կարգւած Գարեգին Նժդեհն էր՝ երկար գանգոսւր մազերով, գեղեցիկ գէմքով, ոհ, կը առա, փայլուն աչքերով, նուրբ կազմւածքով մի 24 տարեկան վառվուսն երիտասարդ՝ կեանքը գաղափարին նւիրած, ստրկի ազատութեան հա-

մար տանջւած և տանջւելիս, մարմնով փխրուն,
բայց հոգով տոկուն, ընկերի համար մեռած,
ամեն ըոսէ պատրաստ իւր անձը զոհելու, ամեն-
քին սիրելի Գարեգին Նժդեհը:

Հայ հասարակութիւնն էլ իւր կողմից մի
մարմին ընտրեց, որը սկսեց դրամ ժողովել և
հագուստի, ոտամանների հարկաւոր պատրաս-
տութիւնները տեսնել: Կանայք էլ նմանապէս
անմասն չմնացին, նրանք էլ իրանց կողմից սպի-
տակեղէնի և այլ բաների հոգու քաշեցին, իսկ
օրիորդները իրենց ձեռքով գործեցին մի ազ-
գային դրօշակ, որպէսզի ասես թէ արձագանդ
տան բանաստեղծի խօսքերին, թէ

Ահա, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լւացի:

Այդպիսով հայ օրիորդները դրօշ գործեցին,
տւին իրենց եղբայրներին, որ գնան մեռնեն
Մակեդոնիայի ազատութեան համար, որովհետև
«ամենայն տեղ մահը մի է, մարդ մի անդամ
պիտ մեռնի»...

4.

Հրապարակը, որ մի ընդարձակ տեղ էր,
լիքն էր մարդկանցով, որոնք զինավարժութիւն-
ներ էին անում: Առանց հրացանների էին բո-
լորն էլ, և այդ էր, որ մեծ ցաւ էր պատճառում

Հայոց առօդ
ամենքին: Բուլղարիան զէնք չունէր, պակասում
էր 100,000 հրացան, բայց պատւիրել էին Աւ-
ստրիայում և սրտատրով ամեն օր, ամեն ըոսէ
սպասում էին ստանալուն:

Յանկարծ հայերէն լսեցի «մէկ, երկու. մէկ,
երկու». դրանք հայերն էին վարժութիւններ
կատարում հրապարակի մի մասում իրենց ենթա-
սպանների ղեկավարութեամբ փոքրիկ խմբակնե-
րով, իսկ նրանց հրամանատարը իր շուրջը հա-
ւաքած զինուորներին, կանոններ էր սովորեցնում:
Երազ չէր այդ, այլ կատարեալ իրականութիւն...

Նկատելով Պրոտոգերովին՝ հրամանատարն
իսկոյն «հանգիստ» գոչեց. իսկոյն ամենքն
իրենց տեղերում հանգիստ կանգնեցին: Հրամա-
նատարը սիրալիր բարևեց հայերին, որոնք պա-
տասխաննեցին նրան հայերէն՝ «բարի եկար, պա-
րոն փոխգնդապետ»:

Մի հայեացք ծգեցի ես ամբողջ վաշտի վրայ.
Ինչ տղերք, ասլաններ, սարեր. կրակ էր ցայ-
տում նրանց աչքերից, իսկ հաստատ, հպարտ-
շարժումները կեանք, կենդանութիւն, քաջու-
թիւն էին արտայայտում...

Պրոտոգերովը անցաւ միւս խմբերին տես-
նելու. ես մնացի հայերի մօտ՝ նայելու, անվերջ
նայելու և դիտելու նրանց: Վաղուցւայ ծանօթ
էինք նրանց հրամանատարի հետ, այնպէս որ
միմեանց հանդիպեցինք սիրով, եղբայրաբար:

Տղերքը, որոնք թւով մօտ 230 էին (ցան-
կացողներ թէե շատ կային, բայց չէին լնդուն-

ლուმ, ირიყჩხოს მწ ქავთღ ღათ ირჩენები 150—
160 მარტ ყხველს ისნენარ. მწავნ ჩაქერების ხენ
შიკლასტრები ასტელების ისნენალ. ყრანგ ზეც ეხოს
ფარდას 275), გაროსნასეგების ჩრენგ ქარძოლ-
შენენერები: ზეც ჩამარანათავარებ ჩათაჭებ ერ-
ლორების მწათხელ և «აღას ჩხერებ ათავა, მარცა»
ფიზელოჭ ააგელოს თავათ სრანგ ყხველს ჰავაპა-
მანს. ზა მწ ფალეთ ხელ, ისრ ააფილ ხენ სრანგ:
უნებ ხელის ჩახერების სრანგ:

5.

Կամաւորները մեծ մասամբ բաղկացած լինելով Մակեդոնիայի և Ադրիանոպոլսի վիլայէթի բուլղարներից, կամաւորութիւնն էլ ընդունեց այդ անունը, այսինքն սկսեց կոչւել Մակեդոնիօ-Օդրինեան կամաւորութիւն (Македоно-одринско ополчение).

Ինչպէս վերև ասացինք, բուլղար կառավա-
րութիւնը սիրով ընդունեց հայերի առաջարկը՝
կազմակերպել մի գուտ հայկական վաշտ հայկա-
կան սպայական կազմով և դրօշակով։ Եւ ահա
կամաւորութեան հրամանատար գեներալ Գենեւ
հոկտեմբերի 3-ին 1912 թ. հրամանի մէջ հե-
տևեալ առզերը նւիրեց հայ գնդին.

Հրաման

Մակեդոնիա-Օդրիխնեան կամաւորութեան

Nº 2

'Ե ք. Սովիտ, 3 հոկտեմբերի 1912 թ.

§ 8. Իւր կամքով հերկայացած, ռուսա-
հպատակ, պահեստի ենթասպաների դպրոցի
պահեստի ենթասպայ Գալեգին Նժդեհին
հրամայում եմ հաշւել կամաւորութեան մէջ
սոյն տարւայ սեպտեմբերի 23-ից։ Նոյն
մարդուն եմ յանձնաբարում հայ կամաւոր-
ներից կազմակերպել մի հայկական վաշտ։

Կամաւորութեան հրամանատար՝
(ստոր.) գեներալ-մայիօր Գենե.

Շաբի կառավարիչ

(ստ.) ընդհանուր շտարի մայեօր Դարվինով.

Հոկտեմբերի 8-ին հայկական վաշտն արդէն կազմ ու պատրաստ էր և հենց այդ օրն էլ նրա հրամանատար Գարեգին Նժդեհն այդ մասին գեկուցեց իւր բարձր իշխանութեան հետեւալ կերպով.

Մակեդոնո-Օդրինեան

կամաւորութեան

հայկական վաշտ.

No 1

Կամաւորութեան

Հրամանատարին,

այստեղ

Տարբերակ 8-ին հոկտեմբերի 1912 թ.

Unſichtb.

ԳԵՂՈՒՋՈՒՄ.

Զեկուցանում եմ Զեզ, պարոն գեներալ, որ
այսօր կազմակերպեցի հայկական վաշտը՝ բաղ-
կացած մի սպայից և 230 կամաւորներից:

Նոյն թվից վաշտը կերակուր է ստանուս
VIII կոստուրեան դրուժինայից:
Վաշտի հրամանատար՝
պող-պորուչիկ Գարեգին Նժդեհ.

Հոկտեմբերի 8-ին խուռն բազմութեան ներկայութեամբ հայկական եկեղեցու մէջ կայացաւ դրօշակի օծումը։ Վաշտի հրամանատարը մի կրակոտ ճառ արտասանեց զինուրներին, ասելով, թէ պէտքէ երդւենք, որ թշնամին երբէք մեր մէջքը չի տեսնելու, որ մեր կրծքերը և ճակատներն ենք դէմ անելու թշնամու գնտակներին։ և վերջացրեց հետեւալ խօսքերով. «Մեր դրօշակի առաջին օծումը կատարւեց այստեղ, եկեղեցական արարողութեամբ, իսկ երկրորդ և իսկական օծումը կը կատարւի կուի դաշտում թնդանօթների և հրացանների նւագի տակ»։

Իսկ երբ հոկտեմբերի 16-ին վերջնականապէս կազմակերպւեց Պրոտոպերովի երրորդ բրիգատան, հայկական վաշտը մտաւ նրա մէջ՝ կազմելով տասներկուերորդ դրուժինայի երկրորդ վաշտը։ Ահա և այդ դրուժինայի առաջին հրամանը, որի մէջ յիշւում է և հայկական վաշտի մասին։

Հրաման

12-րդ Լողէնգրադեան դրուժինային.

№ 1.

Սովիա, 20 հոկտեմբերի 1912 թ.

§ 5. Երկրորդ (հայկական) վաշտի հրամանատար եմ նշանակում պող-պորուչիկ Գարեգին Նժդեհին։

Դրուժինայի հրամանատար՝
պող-պորուչիկ Կունեւ.

Այդպիսով ուրեմն, հայկական վաշտը կազմ և պատրաստ, որպէս միութիւն, մտաւ Մակեդոնո-Օդրինեան կամաւորութեան երրորդ բրիգադի տասներկուերորդ դրուժինայի մէջ, նրա երկրորդ վաշտը կազմելով և բաղկացած էր 230 կամաւորներից, մէկ սպայից և մէկ «վօյ-վուկա»-հերոսապետ Անդրանիկից։ Եթէ մինչև այժմ Տաճկաստանի դէմ պատերազմի դաշտ էին դուրս եկել չորս դաշնակից պետութիւններ՝ Բուլղարիա, Սերբիա, Աւ լեռն և Յունաստան, այդ օրւանից արդէն դաշնակից ազգերի թիւը դարձաւ հինգ, որովհետեւ հայ ազգն էլ պաշտօնական կերպով՝ իւր որդիների մասնակցութեամբ՝ մտաւ այդ դաշնակցութեան մէջ իւր դարաւոր կատաղի և վայրենի թշնամու դէմ, որ իւր տիրապետութեան ամբողջ ընթացքում այրւած գիւղերի միով և ծխով է խաւարեցրել հայոց երկինքը, իւր վայրագութիւններով և գաղանութիւններով արեան ծով է գարձրել հայոց երկրը, իւր դժոխային դաւադրութիւններով և տանջանքներով աշխարհի չորս կողմն է ցըել թափառական, մուրացկան հայ ժողովուրդը, որ

քաղցր Հայրենիքի կարօտն է քաշում օտար եր-
կի բներում, օտար երկնքի տակ:

«Հայրենիքի ծուխն անգամ քաղցր և դու-
րեկան է մեզ համար»... Ահա, հայրենիքի, այդ
«ծուխի» համար է, որ ազգեր զինւեցին և Տաճ-
կաստանի դէմ ելան ազատելու մակեդոնացինե-
րին, թոյլ տալու նրանց ազատ ապրել իրենց
հայրենի յարկի տակ, պապական օջախի շուրջը
և ազատօրէն շնչել այդ օջախի «ծուխը»... Հայն
էլ, որ նոյն գրութեան մէջ էր, նոյն գաղափարը,
նոյն իդէան ունէր, միացաւ նրանց իւր հոգու
ամբողջ գորութեամբ՝ փաստօրէն մի վաշտ
կտրիճներ ուղարկելով պատերազմի դաշտը:

Տաճկաստանի լծի տակ հեծող և տառա-
պող հինգ ազգութիւններ պատերազմի ելան
իրենց տանջողի, իրենց արիւնը քամողի դէմ,
ելան խիզախօրէն, որ ջախջախեն, փշրեն անի-
րաւ գազանի գլուխը և ազատեն ստրուկ եղբօրը,
որովհետեւ համոզւած էին, որ միութեան մէջ է
ոյժը:

III

Անցան մի քանի օրեր. Մեր համբերութիւնը
սպասել էր. մեր խօսակցութեան առարկան միշտ
միւնոյն էր, թէ երբ ենք, վերջապէս, ճանա-
պարհ ընկնելու դէպի դաշտ... Օրական երկու-
երեք անգամ գնում էինք շտաբ իմանալու, թէ
երբ պիտի ուղերուենք: Մեզ թւում էր, թէ

պատերազմը վերջանալու է առանց մեր մաս-
նակցութեան, որ ժամանակ չենք ունենալու
նոյնիսկ Սոֆիայից էլ դուրս գալու. գոնէ խա-
ղաղութիւնը թող մեզ պատերազմի ճանապարհին
կտնի... Փոխ-գնդապետ Պրոտոգերովը, որին
միշտ գիմում էինք միւնոյն գնալու հարցով,
մտախոհ կերպով միշտ պատասխանում էր, թէ
երկի վաղը դուրս կը գանք: Փաստն այն էր,
որ հրացանները դեռ չեին հասել և մեր սպասե-
լու պատճառն այդ էր, բայց մեզ չեին ասում,
ի հարկէ, այլ պատճառաբանում էին, թէ դեռ
պատրաստ չեն և այն... Տանջւում էին իրենք,
բայց տանջում էին և մեզ...

Վերջապէս հոկտեմբերի 22-ի երեկոյեան
Պրոտոգերովը յայտնեց, որ վաղը, 23-ին, ամ-
բողջ երրորդ բրիգադն պէտք է ոտքով ճանա-
պարհ ընկնէ դէպի կուագաշտ անյայտ ուղղու-
թեամբ: Նոյն օրն ամեն հրամանատար կլստանայ
իւր մարշրուտը...

Լուրը կայծակի արագութեամբ հասաւ
ամենքի ականջին, թնդացրեց քաղաքը, ոտքի
կանգնեցրեց բոլորին:


Հայկական վաշտն էլ այդ երեկոյեան իւր
բոլոր պատրաստութիւնները տեսաւ, իւր պա-
կասները հնար եղածին շափ լրացրեց և անհամ-
բեր սպասում էր վաղւայ օրւան: Առաւօտեան
վաղ բոլորն էլ կազմ ու պատրաստ վերկացան և
շարւեցին դպրոցի բակում, ուր նրանց հրամա-
նատարը վերջին ստուգումն էր կատարում: Բո-

լորն էլ ուրախ, երջանիկ էին, որ վերջապէս գնում են...

Ժամի 8-ին եկաւ Անդրանիկը՝ գառան մորթու փափախը գլխին, երկարավիզ կօշիկները ոտներին, անբաժան մառզէրն էլ կողքին կապած. գեղեցիկ և ոգևորւած, կտրուկ և վճռական։ Տիկիններն ու օրիորդները ծաղիկներով զարդարեցին թէ նրան՝ վաղեմի հերոսին, թէ միւսներին՝ ապագայ հերոսներին։

Խումբը փողոց գուրս եկաւ և կարգով շարւեց մայթի վրայ, խառն ի խուռն բազմութեան ներկայութեամբ։ Երաժշտութիւնը խմբի գլուխն անցաւ և սկսեց նւագել։ Խումբը շարժւեց՝ իւր գլուխ ունենալով Անդրանիկին և Գալեգինին, որը իւր նոր սպայական գեղեցիկ զգեստով աւելի երկնային քերովքէի էր նման իւր գեղեցկութիւնով և երկար գանգուր մազերով. կատարեալ քերովքէ, երկար, շողշողուն սուրը ձեռին...

Զինւորական քայլով, համերաշխ, աշխոյժ և լուրջ, ազգային դրօշակը լայն պարզած՝ գնում էին տղերքը փողոցներով դէպի «Ազատարար թագաւորի» (Ալէքսանդր Բ.) արձանը, ուր վճռել էին մի եղայրական ցոյց կատարել։ Հենց որ հասան արձանին, կարգով շըջապատեցին նրան։ Գարեգինը բարձրացաւ արձանի ոտքերի մօտ և մի զգացւած ճառ արտասանեց համերաշխութեան, եղայրութեան մասին, որ բուռն ոգևորութեամբ ընդունեց ուկնդիր բազմաթիւ հասարակութեան կողմից։ Կեցցէների



Անգիալի փողոցինում 23-ին հոկտեմբերի 1912 թ.

և ուռաների աղաղակները մինչև երկինք էին
հասնում:

Յետոյ խումբը գնաց նկարւեց և ապա որոշ-
ւած ժամին եկաւ պայմանաւորւած տեղը, ուր
հայ գաղութը սպասում էր նրան՝ վերջին անգամ
հրաժեշտ տալու և վերջին անգամ իւր աչքով
տեսնելու հայկական վաշտը և լսելու հրաման-
ները: Ամենքն էլ իրանց հետ որևէ բան էին
բերել տղաներին բաժանելու համար՝ քաղցրե-
ղէն, ծխախոտ, ծաղիկներ և այլն:

Եկաւ դրուժինայի հրամանատարը, ստուգեց
վաշտը և հրամայեց ճանապարհ ընկնել: Բողէն
պատմական էր և փառաւոր: Տղերքը գեղեցիկ
շարւած, իսկական զինւորների պէս լուրջ և հաս-
տառ՝ կտտարում էին իրենց հրամանատարի
հրամանները, որը նրանց շարում էր «պոխողնա-
կոլոնայի» համար: Եւ վերջապէս, երբ հնչեց
վերջին կոմանդան՝ «Ճախ թևետ առաջ—մարշ», —
կեցցէները թնդացրին օդը, ծաղիկները թափւե-
ցին տղերանց զլխին, «ցտեսութիւն», «բարի
ճանապարհ»), «բարով յետ գաք» բացականչու-
թիւնները խառնւեցին, կորան տղերանց ներդաշ-
նակ, քաղցր քայլերգի հնչիւնների մէջ... Ուրախ,
զւարթ, քայլում էին տղերքը երգելով հայկա-
կան երգեր, իսկ ժողովրդի խուռն բազմութիւնը
հետևում էր նրանց գեռ երկար ժամանակ, մին-
չև որ արդէն քաղաքը մնաց նրանց յետևում,
հեռու, որովհետև տղերքը ովերութիւնից քայ-
լում էին շատ արագ և չէին նկատում, որ այդ-

պիսով արդէն անցել են մի քանի քիլոմետր
առանց շունչ առնելու անգամ:

Օրը գեղեցիկ էր ու պայծառ, արեգակն էլ
փայլում էր երկնքում, թէև չէր այրում սովորա-
կան տաքութիւնով, որովհետեւ տարւայ ցուրտ
ժամանակն էր. երբեմն փչում էր հիւսիսային
սառը քամին:

IV.

Մեր բրիգադան պէտք է սաքով դնար մինչև
Սերամբէյ կոչւած երկաթուղու կայարանը, ուր
գնացք պիտի նստէր և գէպի կուի դաշտ ճա-
նապարհէր: Սովորայից մինչև Սերամբէյ կը լինի
120 քիլոմետրից էլ աւելի: Աւելացնեմ, որ այդ
բոլոր տեղերը գեռ Բուլղարիայի սահմաններումն
են և որ մեր ճանապարհը անցնում էր բուլղա-
րական գիւղերով և քաղաքներով, ինչպէս՝ Պան-
չարեւո, Սամոկով, Դոլնա-Բանիա և այլն:

Առաջին օրը, երբ ուշ գիշերին հասանք
նշանակած գիւղը, ուր պէտք է գիշերէինք, ար-
դէն սասաիկ ցուրտ էր, իսկ առաւօտեան ար-
դէն անձրևախան ձիւն էր եկել, որից ցեխ էր
գոյացել ճանապարհներին և քայլելը գժւարացրել:

Սակայն գեռ ամենքն էլ անտրառնչ, արագ
քայլում էին, չնայած որ առք հազուստ չու-
նէին. կառավարութիւնը ոչ ոքի ոչինչ չէր բա-
ժանել չունենալու պատճառով: Իսկ արեինքն *)
այնքան վատ էին, որ արդէն ծակւել, փուլ էին

*) Բուլղարական գորքը մեծ մասամբ տրեխ է հագնում:

եկել, և շատերն արդէն կիսաբորիկ էին քայլում,
բայց քայլում էին՝ ոչ մի բանի վրայ ուշադրու-
թիւն չդարձնելով:

Որովհետեւ մեր կամաւորութեան մէջ գեռ
մեծ կարգ ու կանոն չկար, սպաներն անփորձ, պա-
հեսաից կանչւածներ էին, ուստի գեռ ոչ ուտելն
էր կանոնաւոր, ոչ գնալը, ոչ էլ նոյն իսկ հան-
գստանալը: Պակասութիւններ շատ կային, ոչ մի
ծառայութիւն գեռ իւր նորմալ, կանոնաւոր ճա-
նապարհը չէր մտել. օրինակ՝ տեսնեում ես մի
վաշտ արդէն պառկում է քնելու, իսկ միւսը
գեռ կերակուր չէ կերել. մէկը իւր խոհարարնե-
րին առաջ է ուղարկել և վաղօրօք տաք կերա-
կուր է պատրաստել տւել իւր վաշտի համար,
իսկ միւսը ցամաք հացով և պանրով է անցկա-
ցնում օրը...

Մեր տղերքն էլ են մեծ նեղութիւններ և
զրկանքներ կրել թէ կերակրի և թէ ուրիշ յարմա-
րութիւնների կողմից. սակայն տրամադրութիւնն
այնպէս էր, որ ցամաք հաց ունենալուց էլ իրենց
երջանիկ էին զգում և ուրախ ու զւարթ երգեր
էին երգում: Բայց դժբախտութիւնը նրանումն է,
որ այդ ցամաք, սև հացն էլ էր շատ անգամ
բացակայում: Տրտունջ, դժգոհութիւն չէր լսում:

Եղանակը քանի գնաց վատացաւ. տեղացին
անձրւ ու ձիւն. սասաիկ ցեխը պատեց ճանա-
պարհները և անհնարին դարձրեց քայլելը, իսկ
մի ամբողջ օր, երբ բարձրանում էինք մի ե-
ռան վրայով, ցրտի և ձիւնի ազգեցութեան տակ

Ճանապարհը սառել էր և ոտք կոխել չէր վիճում,
խկոյն մարդ սայթաքում, ընկնում էր՝ շատ
անգամ ճանապարհից դուրս զորուելով... Պէտք էր
տեսնել՝ ինչ սիրով և կարեկցւթեամբ տղերքը
օգնում էին միմեանց, պահպանում և հսկում
իրար։ Այդպիսի մի ժամանակ խմբապետներից
մէկը վայր է ընկնում և ոտքը վասառմ, այսպէս
որ ցափց չի կարողանում քայլել։ Տղերքը նրան
իրենց թերի վրայ են տանում։ Եթէ մէկը յոգ-
նած յետ էր մնում, միշտ ընկերներից մէկը կամ
երկուսը մնում էին նրա մօտ և, կամաց-կամաց
քայլելով, բերում հասցնում էին գիշերատեղին.
Թէս այդ վասառմ էր դիսցիպլինային, բայց ան-
հրաժեշտ էր ստեղծւած պայմանների շնորհիւ։
Իրենց ընկերութեամբ, ալտրուիզմով հայերը
բոլորի կողմից աչքի ընկան։ Այն քաղաքները և
գիշերը, ուր գիշերում էինք, համարեա դա-
տարկ էին և ուտելու ու խմելու ոչինչ չէր ճար-
ուում նրանց մէջ. մեղանից առաջ այն տեղերով
ամբողջ գնդեր, ամբողջ զօրամասեր էին անցած
և բոլորը վերցրած, կերած, վերջացրած։

Սամոկով քաղաքում մի հատիկ հայ արհես-
տաւոր գտնւեց, որը եկաւ ներկայացաւ Անդրա-
նիկին և աղաչեց, որ պատիւ անի գիշերը նրա
տանը անցկացնի, որ և ընդունեց Անդրանիկը։
Խեղճ բանւորը պատրաստութիւն էր տեսել վայ-
ելուչ կերպով հիւրասիրելու իւր բարձր հիւրին,
իսկ նրա կինը, մեր համեստ, խոնարհ հայ կինը,
ջուր էր պատրաստել հերոսի ոտները լւանալու։

Ամսի 26-ին, ճաշից յետոյ, վերջապէս մեծ
նեղութիւններով հասանք երկաթուղու գծին։
Շոգեկառքի սուլրցը երբ լաեցինք, կարծես, մեր
ոտքերի ցաւը, յոգնածութիւնը խկոյն անհե-
տացան և մեր կրած նեղութիւնները մոռացու-
թեան արւեցին։ Թէս անձրես մերթ կտրում,
մերթ վերսկսում էր, սակայն հնար եղաւ
պատսպարել գիշական խրճիթներում և քիչ
թէ շատ չորացնել թաց հագուստները։
Երկու օր սպասեցինք այդ կայարանում
անգործ գրութեան մէջ. միայն մի յիմնակ զին-
որ ուղարկւեց Փիլիպպէ՝ թագուհուց կամաւ-
րութեան դրօշակն ընդունելու, որը գործել էր
ինքը թագուհին։ Դրօշակի հետ էր և կամաւ-
րութեան երաժշտախումբը, որը դրօշակի հետ
միասին մտաւ մեր բրիգադայի մէջ։
Կէս-գիշերին մենք էլ գնացք նստեցինք և
ճանապարհ ընկանք։ Գնացքը ծայրէ ի ծայր լիքն
էր, շարժւելու և շունչ առնելու հնարաւորու-
թիւն չկար. բայց ուրախ էին տղերքը, կատակ,
երգ թնդացնում էին վագոնները, մինչև որ կա-
մաց-կամաց բոլորն էլ յոգնածութիւնից լոեցին
և քնով անցան։

Անձրես շարունակում էր տեղալ միւս առա-
ւոտեան, երբ հասանք Տըռնովօ-Սէյմէն քաղաքը,
ուր նորից պէտք է հրաժեշտ տայինք երկաթու-
ղուն և երկար ժամանակով անջատւէինք նրանից.
ով զիտէ, զուցէ մեղանից շատերն էլ բախտ
չունենային երբէք լսելու նրա զիլ և կենդանա-

ցնող սուլուցը, ծանր տնքոցը։ Այստեղ վերջապէս պէտք է բաժանէին հրացանները, որոնք եկել և մեզ էին սպասում։ Ո՞րպիսի ուրախութիւն, որպիսի ոգևորութիւն։ առանց հրացանի կատարեալ ուրիշ զգացմունք է զգում մարդ, իսկ հրացանով այլ զգացմունք է թագաւորում նրա մէջ—իսկական զինուր, իսկական կուող։

Հացի վրայ այնպէս չէին թափւում տղերքը, ինչպէս թափւեցին հրացանների պահեստի վրայ. ամենքն էլ միանգամից էին կամենում վերցնել, այնքան անհամբեր էին։

Երբ բաժանեցին հրացանները և 150-ական փամփուշտ, հրաման եկաւ ճանապարհը շարունակել, չնայած անձրեւ էր տեղում։ Երկու օր շարունակ անձրեի տակ, սաստիկ ցեխերի և մթութեան մէջ, մեծ դժւարութիւններից և անյարմարութիւններից յետոյ հասանք Խասկով քաղաքը, ուր մի օր հանգիստ պէտք է առնէինք։ Սաստիկ ցեխ կար քաղաքում, անտանելի ցեխ։ Այսպէս թէ այնպէս, բաւական մեծ քաղաք էր, կարելի էր պատսպարւել և ուտելու որևէ բան ճարել։

V.

ԶՈՐԱԿԱՆԴԻՍ ԵՒ ԵՐԴՈՒՄ

Միւս օրը եղանակը պարզւեց. արեգակը ծագեց, բայց փչում էր ուժեղ քամի. Քաղաքից դուրս փառաւոր զօրահանդէս սարքւեց, որից յետոյ մաղթանք կատարւեց և ապա բոլոր զին-

ւորները երդւեցին հաւատարիմ. ծառայութեան համար։ Պրոտոգերովը մի ազդու ճառով բացատրեց զինուորի կոչումը և պարտականութիւնները։ Յետոյ ամենքն անցան դրօշակի տակից և համբուրեցին նրա ծալքերը և մօտը պահած Աւետարանը։ Զօրահանդէսից յետոյ, երեկոյեան, մի հիւրանոցում մեծաւորները մի թեթե բանկետ սարքեցին, որին ներկայ էր և գեներալը։ Հրաւիրւած էր նոյնպէս Անդրանիկը։

Միւս առաւօտեան վաղ պէտք է շարունակէինք ճանապարհը. Ժամի 8-ը դեռ չկար, երբ բոլորն էլ կարգով դուրս ելան քաղաքից՝ երգելով զինուորական երգեր։ Ժողովուրդը ցնծութեամբ բարի ճանապարհ էր մաղթում գնացողներին։

Յայսնի էր, որ այդ օրը մինչև կէսօր պէտք է հասնենք և անցնենք տաճկաց սահմանը։ Ուրեմն մի քանի ժամից յետոյ թշնամու հողի վրայ պէտք է գտնուէինք, ամեն տեղից և ամեն ըոսէ պէտք է սպասէինք թշնամու յարձակմանը կամ նրա նամարդ գնդակին։ Վաշտերը շարժւում էին գեռ սովորական կարգով, միայն սահմանը անցնելուց պէտք է ձեռք առնէին զգուշութեան արտակարգ միջոցներ։

Ժամի 12-ն էր, երբ մենք մտանք վերջին բուղարական գիւղը, սահմանի վրայ. այդտեղից միայն մի ժամ ճանապարհ է մինչև սահմանը։ Բոլորն էլ քայլում էին զւարթ և հանգիստ։

Դեռ սահմանին չհասած՝ պատահեց մի փոք-

ըրկ միջնադէպ. տասներկուերորդ դրուժինայի մակեդոնական երրորդ վաշտի հրամանատարն էր պոդ-պորուչիկ թորգոմը, ազգով հայ: Նա շատ խստապահանջ և ջղային երիտասարդ էր: Երբ զինւորները անցնելիս են լինում մի ազդիւրի մօտից, ծարաւածները կամենում են իջնել ջուր խմելու. Թորգոմը չի թոյլատրում և նոյն իսկ կամենում է զէնքի ուժի դիմել: Այդտեղ իրաւանցում է ընկնում և զինւորական դիսցիստինայից դեռ գաղափար չունեցող մի քանի երիտասարդներ յարձակուում են, թորգոմի վրայ, և ով գիտէ, ինչով պէտք է վերջանար միջնադէպը, եթէ չհամնէին հայ տղերքը և չպաշտպանէին թորգոմին և չվերականգնէին կարգը:

Երբ բրիգադայի հրամանատարը լուր է առնում այդ անցքի մասին, իսկոյն և եթ տեղն ու տեղը քննում է գործը և կատարում է գատաստանը՝ 50 փայտ զարկել տալով յանցաւորին, որը, դժբախտաբար, ինչպէս պարզում է, անցեալում Պրոտոգերովի հետ Մակեդոնիա անցնող հայդուկներից մէկն էր:

— Աւելի լաւ, — կարծես արդարանում էր խղճահարւած, սովորաբար բարի և մեղմ Պրոտոգերովը, — թող դաս լինի քեզ և քո ընկերների համար:

VI.

Ահա և սահմանագլխի մաքսատունը, որի կառավարիչը մեզ սիրալիք կերպով հիւրասիրում

է սուրճով: Մի քանի ըոպէ ևս, և մենք անցնում ենք սահմանը: Պատկերը իսկոյն փոխում է. բուլղարների կողմից սայլի ճանապարհը հասնում է ձիշտ մինչև սահմանը, իսկ տաճկաց հողում արդէն ճանապարհը չի հարթւած, այնտեղ աւելի շաւլիներ են. ոչ մի խնամք ոչ մի կողմում չի երևում:

Մտանք առաջին տաճկական գիւղը — Այդուրմուշ, որի բնակիչները փախել էին՝ թողնելով համարեա բոլոր կայք ու գոյքը: Աւերւած, թալանւած տներ, ցիրուցան արւած իրեղէններ, կատարեալ անտէրութիւն, որովհետեւ բուլղար գօրքը շտապով անցել էր այդ գիւղից և ժամանակ չէր ունեցել աւելի երկար զբաղւելու գիւղով, իսկ բուլղար գիւղացիք դեռ չէին վստահանում ազտօրէն թալանի գալու: Ինչ ասել կուզէ, որ ամեն ինչ տակն ու վրայ էր արւած՝ դրամ կամ արժէքաւոր իր գտնելու նպատակով. իսկ տաճկաց մաքսատան թղթերը և դէքէրները ցըւել, լցըւել էին ամբողջ լայնածաւալ գաշտը:

Մենք հաստատւեցինք մզկիթի մէջ, որի զիմին արդէն ծածանւում էր կարմիր դրօշակը և փայտէ խաչը:

Մեծ խարոյկ վառեցինք և շուրջը նստած համ տաքանում, համ էլ քաղցր զրուցում էինք. իսկ հեռւից մերթ ընկ մերթ քամին բերում, մեր ականջներին էր հասցնում թնդանօթների խուլ ձայնը:

Միւս առաւօտը շատ վաղ ճանապարհ ըն-

կանք։ Դեռ ցուրտ էր, այնպէս որ զինւորները քայլում էին արագ-արագ։ Շարժւում էինք խիստ զինւորական կարգով, համաձայն թշնամու հողի վրայ ունենալիք դործելակերպին։ Առաջից գնում էին ուժեղացրած շղթաները, որոնք տեղի մանրագնին քննութիւնն էին կատարում ամեն ուղղութեամբ, իսկ յետեից գալիս էր «ճակատի սիւնը» (челна колона). Նրանից յետոյ՝ գլխաւոր ոյժերը (главни силы)։ Դրուժինաները և վաշտերը հերթով էին կատարում այդ ծառայութիւնները։

Սնցանք շատ գիւղեր, որոնք դատարկւած, կիսաթալան դրութեան մէջ էին։ Մեծ-մեծ շէն գիւղեր, հարուստ բնակչութեամբ, այժմ մնացել էին լուռ ու մունջ դրութեան մէջ. ոչ մի կտուրից ծուխ չէր բարձրանում, ոչ մի տեղից ձայն չէր լսում։ Տաւար, ոչխար նոյնպէս չէին երեւում։ Միայն ճանապարհներին ցեխի մէջ այստեղ ու այնտեղ անասունների լէշերն էին ընկած, իսկ ճանապարհների ամբողջ տարածութեան վրայ ամեն քայլափոխում կարելի էր տեսնել ցեխի մէջ թափւած, անձրեկից թրջւած վերմակներ, կանանց և տղամարդկանց հագուստներ, վերնազգեստներ, հաւի փետուրներ և այլն։—Երեսում էր, որ մասսամբ փախչողներն են ձգել մասսամբ էլ տաք շոր չունեցող զինւորները, որոնց ծանր է թւացել վերմակը կամ վերնազգեստը, որը առաջուց դուր էր եկել աշքին։ Մի քանի գիւղերում պատահեցինք մի քանի թա-

փառական շների, որոնք մարդ տեսնելուց փախչում, անհետանում էին, և որոնք սաստիկ նիհարել, լղարել էին։

Առանց որևէ միջնադէպի մենք նոյն օրը հասանք կը զայլի, որը Արդա գետի վրայ մի բաւականին մեծ տաճկական քաղաք էր՝ նեղ, կեղաստու փողոցներով, բայց որն ունէր լաւ շինութիւններ և շատ հարուստ բնակչութիւն, Բնակիչները թողել էին իրենց ամբողջ ունեցածը և վախել, նոյն իսկ թանկագին իրերը, զարդարանքները, արծաթեղէնը չէին կարողացել վերցնել իրենց հետ։ Զնայած որ մի շաբաթից աւել էր, ինչ փախել էին, սակայն աներից շատերը գեռ անձեռնմխելի էին մնացած. մարդ չկար, որ թալանէր, իսկ զօրքը, քիչ լինելու պատճառով, շտապով առաջ էր ուղարկւած հետապնդելու փախչողներին։

Որ տուն մտնում էիր, լիքն էր ցորենով, գարով, ծխախոտով և այլ իրեղէններով. շարժական կայքով, կահ-կարասիքով և շորեղէնով։

Մենք տեղաւորւեցինք դատարկ տներում և քիչ հանգիստ առանք երկար ճանապարհի յոդնածութիւնից։ Իսկ շատերը ցրւեցին քաղաքի մէջ և զբունում էին փողոցից-փողոց։

Ուշ երեկոյեան յայտնւեց, որ մեր կամաւորութեան վրայ պարտականութիւնն է դրւում լեռնային թնդանօթաձիգ զօրքերի հետ միասին մաքրել ամբողջ Աղբիանոպոլսի վիլայէթը տաճիկ զօրքերից և բաշիբողուկներից և քշել նրանց

մինչև Մարմարա ծովը, որի համար մեր կամաւորութիւնը բաժանւեց երեք սիւների, որ երեք տարբեր ճանապարհներով քշն թշնամուն և միանան միմեանց հետ միմիայն Գիւմուրջինա կոչւած քաղաքում:

Հայկական վաշտը տամներկուերորդ գրուժինայի հետ մտաւ ձախակողմեան սիւնի մէջ, որը միւս ուժերից մի օր յետոյ պէտք է դուրս գար կըոջալի քաղաքից. ուստի հրաման ստացաւ հրացաններով զինավարժութիւններ կատարել քաղաքից դուրս և հրացանաձգութիւն բանալ նշանի վրայ:

Ես, որ շարժւում էի բրիգադայի գլխաւոր ուժերի և շտաբի հետ, ճանապարհւեցի միւս օրը, նոյեմբերի 3-ին, կենտրոնական սիւնի հետեւ երբ վաղ առաւօտեան մենք դուրս էինք գալիս քաղաքից, զօրանոցների յետեւում ժողովւել էին քառասուն հոգուց աւելի բաշիբոզուկներ, որոնք գեներալի հրամանով, որպէս լրտեսներ և զինւորներ, մահւան պատժի էին դատապարտած: Զիաւոր զինւորները իրենց սրերով պատրաստւել էին նրանց գլխատելու, որ և կատարեցին մեր անցնելուց յետոյ... Մեր բրիգադայի զինւորներից մէկը, Օդեսսայում գաղտնի ոստիկանութեան մէջ ծառայած մի բուլղարացի, զնացել ինդրել պաղատել էր, որ իրեն էլ թոյլ տան մի քանիսի «գլուխը թոցնել», բայց զինւորները թոյլ չէին տել...

VII.

ԱՐԱՋԻՆ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

Շուտով մենք շեղւեցինք խճուղուց, որը տանում էր կրոջալիից մինչև Գիւմուրջինա, և մտանք ձորերի և լեռների մէջ: Շարժւում էինք շատ գանդաղ, որովհետեւ մեր ստացած տեղեկութիւնների հիման վրայ թշնամին գտնւում էր ոչ հեռու մեղանից, իսկ բաշիբոզուկները ամեն տեղ կարող էին անհանգստացնել մեզ: Եւ արգարե, մի երկուերեք ժամ առաջ գնալուց յետոյ, յանկարծ գետի միւս կողմի սարի յետերց դուրս եկան տաճիկներ և կրակեցին մեզ վրայ: Իսկոյն գիրքեր բռնեցին մեր զինւորները. նոյն իսկ հարկ եղաւ դիմել թնգանօթների ուժին:

Բում, բամ, բում, որոտում էին թնդանօթները: Հրացանաձգութիւնը շատ թեթև և կարձատեւ եղաւ, որովհետեւ բաշիբոզուկները թողեցին և փախան:

Ես մտել էի մի քարի յետև և կարդում էի քրանսերէն լեզով մի գիրք:

Շուտով էլի սկսեցինք կամաց-կամաց առաջ գնալ: Հասնելով շատ սրբնթաց Արդա գետին, զինւորները հանեցին իրենց ոտնամանները և վեր բաշեցին վարտիկները. բայց գետը շատ խոր մինելու պատճառով բոլորն էլ համարեա թրջւեցին, մինչև անդամ ես, որ ձիով էի:

Մութն արգէն ընկել էր և ոչինչ չէր երեւում. համարեա դա եղաւ պատճառը, որ գետի

Երկու ափերի վրայ գտնւող մարագները և գիւղական տները իսկոյն կրակւցին համ լոյս անելու, համ էլ թրջած շորերը չորացնելու համար։ Բաւական ժամանակ տևեց գետն անցնելը։ Սարսափելի մուլթ էր գիշերը։ Զնայելով վրան, շարունակեցինք մեր ճանապարհը, որն անցնում էր մի շատ նեղ և զառիվայր ձորի միջով։ Ամեն մի քայլափոխի վրայ ստիպւած էինք լինում կանգ առնել. թնդանօթները և նրանց մթերքները տեղափոխող ձիաներից շատերը վայր էին ընկնում, կամ նրանց բեռն էր գլորւում. պէտք է սպասէինք ամենքս էլ մինչև նորից բեռնեն և ապա քարաւանը շարժւի։

Կէս գիշերին հեռւում լսեցինք կանանց և երեխաների լաց, աղաղակ, իսկ յետոյ երևացին ճրագներ և լսւեց շների հաջոց։ Գիւղեր էին, որոնց բնակիչները փախչում էին անտառները և լեռները. բայց իզուր, որովհետև կամաւորների շղթան այնպէս էր առաջանում, որ հազիւ թէ մարդ կարողանար աննկատելի մնալ կամ փախչել։

Թնդանօթաձիգների սպան խնդրեց փոխնդապեախն, որ կին և երեխայ չսպանւեն... Մարդ ուղարկւեց, որ հանգստացնի փախչողներին և համոզի վերագանալ իրենց տները։

Որովհետև մենք անցել էինք որոշած ճանապարհը, ուստի կանգ առանք գիշերելու համար։ Միայն միւս առաւօտը տեսայ, որ մենք գիշերել ենք մի փոքրիկ գիւղում, որի մէջ աղամարդիկ չէին երես։

Հենց պատրաստում էինք առաջ վնալու, յանկարծ առաջին շղթաների կողմից լաւեցին հրացանի մի քանի ձայներ. չանցաւ մի քանի բոպէ, որ հրացանաձգութիւնը դարձաւ ընդհանուր, ուժեղացաւ այն աստիճան, որ նրան մասնակցեցին գնդակացիրները (պուլեմետъ) և թնդանօթները՝ իրար խառնելով իրենց որոտները։ Բում, բամ. պուկան-պուկան-պուկան... տգը-տգը-տգը...

Բանից երեաց, որ մենք ներքե, ձորի միշն ենք եղել, իսկ վերև սարի գլխին երևացել են 30—40 բաշիբոզուկներ և կրակ են բացել մեղ վրայ՝ վիրաւորելով երկու կամաւոր, մէկը ոտքից, միւսը գլխից, որոնց հենց այդաեղ, գնդակների և թնդանօթների երաժշտութեան տակ կապեցի։ Բոլորն էլ շնորհաւորում էին միմեանց, որ վերջապէս բախտ ունեցանք կուի արժանանալու և վիրաւոր ունենալու։

Բաշիբոզուկները փախուստի գիմեցին, բայց նրանցից մի քանիսը գերի ընկան։ Այդ գէպքը պատճառ եղաւ, որ բոլոր գիւղերը խստիւ խուզարկւեն և բոլոր տղամարդիկ գերի բռնւեն. իսկ կանայք և երեխայք առժամանակ մնացին անձեռնմխելի։ Երբ մենք անցնում էինք գիւղի միջով, ես բացի մի դուռ և տեսայ նրա յետեւում, տան բակի մէջ արեան մէջ թաւալում է մի ծերուկ՝ վիրաւորւած գլխից. իսկ պատշգամբում, պատի մօտ, լեղապատառ, երկիւղից պատի գոյն ստացած, շարւած մի քանի հոգի սպասում

որ մազերը պոկելիս սաստիկ ցաւ զգաց տաճիկը, բայց նա աչքն անդամ «Ճպեց», երեսի վրայ ոչ մի շարժում անդամ չնշմարւեց: Թւով վեց հոգի էին գերիները, որոնք մի երկու ժամից յետոյ էլ չէին ծանրաբեռնում, մեղ իրենց ներկայութեամբ...

Նոյն օրը երեկոյեան, այսինքն նոյեմբերի 4-ին, մեր սիւնը հասաւ Մեստանլու քաղաքի մօտերքը, ուր ձախակողմեան սիւնը ամբողջ օրով կուփ էր բռնւել տաճիկ զօրքի հետ: Մենք պէտք է սպանայինք թշնամու «Փլանգին» (զօրաթեին), կողքից հարւածելով նրան և կտրելով նրա ձանապարհը. սակայն տաճիկները վռագ յետ նահանջեցին գիշեր ժամանակը, այնպէս որ միւս առաւօտ մենք ստիպւած էինք շտապով հետապնդելու նրան: Մեստանլու քաղաքը ծխի մէջ էր, ինչպէս և բոլոր այն գիւղերը, որոնց միջով անցնում էինք: Ինչ որ ուտելու բան էին գտնում զինւորները, մասամբ վերցնում և մեծ մասամբ էլ ոչնչացնում էին, որովհետեւ տանել անհնարին էր շալակները առանց այն էլ ծանր լինելու պատճառով: Օրինակ, պարկը լիքը պահով կամ իւղով գուրս էին քաշում փողոց, մի քիչ վերցնում, մնացածը ոտի տակ տալիս, թափում գետին: Ամենից շատ որոնում էին մեղը և դոշաբ, որոնց համար յաճախ կոխւներ էին ծագում զինւորների մէջ: Երկու հոգի զինւորներից յանկարծամահ եղան շատ մեղը ուտելուց և վրան ջուր խմելուց: Մէկին ես ինքս անձամբ

են իրենց ճակատագրին... ես արագութեամբ ծածկեցի դուռը, որպէսզի զինւորները չտեսնեն, գուցէ կենդանի մնան: Այդ սրտաճմլիկ պատկերը իսկոյն յիշեցրեց ինձ մեր խեղճ հայ մայրերի և քոյրերի կրութիւնը, որոնք նոյն այդ օրհասական վիճակի մէջ զո՞ն էին գնում բաշիբողուկների վայրագութիւններին: Գիւղի տները շուտով ծածկեցի թանձնեցին թանձը ծխով և կրակը սկսեց ճարճատել, բոցեր արձակել, կլանել ոչնչացնել տուն, կայք, բարիք՝ չարքաշ աշխատանքի արդիւնքները:

Երբ բարձրացանք արի գագաթը, որտեղից պէտք է իջնէինք վար, մեր անցած ձորն արդէն լցւել էր թանձը ծխով. այրում էին մի քանի գիւղեր:

Մեզ հետ տանում էինք գերիներ՝ բարձրահասակ, ամուր կազմւածքով տղամարդիկ: Նրանցից մէկը, մի գեղեցիկ երիտասարդ, բայլում էր գլուխը բարձր պահած, հպարտորէն: Երեկի նա գիտէր, որ իրան մահ է սպասում, կամենում էր մեռնել որպէս հպարտ, աղայ տաճիկ: Բայց կամաւորներից մէկը, կարծես, նկատեց նրա այդ հպարտութիւնը, կարդաց նրա սրտի մէջ այդ ցանկութիւնը և յետեից տւեց նրա վզակոթին, հրամայելով «գլուխը գետին խոնարհել»: Կամաւորներից միւսը բռնեց միւս գերու մօրուքից և սաստիկ քաշելով, պոկեց մի փունջ մազ, հայհոյեց նրան, ասելով, թէ նա զինւոր է, որովհետեւ մօտը հրացան են գտել: Ենթադրում եմ,

հաղիւ հազ կեանքիւ եմ բերել հենց ճանապարհի վրայ:

Յորեն, գարի, ալիւր և այլն թափւած էին ամեն քայլի վրայ, նոյնպէս և տնային իրեր. մի խօսքով, կատարեալ ալան-թալանի աշխարհ էր, որովհետեւ բնակչութիւնը թողնելով ամեն ինչ, մինչև անգամ տաւար ու ոչխար՝ փախել էր աղաւելու իւր կեանքը: Բայց թալանելու համար ժամանակ ու հսարաւորութիւն չկար, ուստի կրակն էր, որ լափում և մաքրում էր ամեն ինչ: Շէն ամարաթներ, գեղեցիկ տներ՝ ներքին յարկից մինչև վերին յարկը լիքը թանկագին ծխախտով և այլ մթերքներով և, որ գլխաւորն է, մեզ պէտքական ցորնով, գարով և խոտով,— ամեն ինչ կրակի ճարակ էր դառնում. ով էր մտածում ապագայի համար, ով էր կարծում, թէ կը գայ ժամանակ, կափսոսանք կրակւած տներին, երբ ցրտից պատսպարւելու տեղ չունենանք, կափսոսանք փչացրած ցորենին, երբ ուտելու հաց չունենանք, կափսոսանք այլւած խոտի գեղերին, երբ մեր ձիերը կը մնան քաղցած:

Խաչակրաց արշաւանք էր տաճկաց տիրապետութեան դէմ, ժողովրդական պատերազմ էր ատելի ժողովրդի դէմ, և ոչ ոք մտքովն անգամ չէր անցկացնում թշնամու հացից նոյն իսկ օգտւել. եղբայրների արիւնով էր շաղախած այդ հացը, հարամ էր այդ հացը...

Ահա թէ ինչու մեր կամաւորները, կարելի է տսել, աւելի վրէժ էին լուծում՝ կրակելով,

ոչնչացնելով գիւղեր ու քաղաքներ. վրէժ, որ հինգ դարուց ի վեր բուն է դրել նրանց սրտերում, մաշել, կրծել է նրանց հոգին:

Բացի այդ, հրդեհելը, բնաջինջ անելլ ունէր և պատերազմական նշանակութիւն: Իմ կարծիքով բուղարների ծրագիրը պահանջում էր այդ կողմերը բոլորովին մաքրել տաճիկ տարրից, բնաջինջ անել, եթէ կարելի է, բոլորին, որպէսզի հեշտութեամբ կարելի լինի տիրապետել երկրին և որ գլխաւորն է, առաջնապացութեան ժամանակ իրենց յետեռում չթողնել թշնամի տարրեր, որ կարողանային օգտւել հանգամանքներից և նեղութիւններ, վտանգներ, առաջնունէին: Երկրորդ գործնական օգուտն այն էր, որ կրոջալիից երեք ուղղութիւններով դուրս եկած զօրամասերը այս լեռնային երկրի մէջ հրդեհի միջոցով հեշտութեամբ կարողանում էին որոշել միմեանց գտնւած տեղը և ըստ այնով դեկավարում իրենց ընթացքը: Ցերեկը ծուխն էր մեր ազգանշանը, իսկ գիշերը—հրդեհների բոցերը, կարմիր կրակի լեզուները, որոնք պրօժեկտօրների պէս լուսաւորում էին սար ու ձոր: Գիշերւայ տեսարանը մի արտակարգ տեսարան էր. երեք ուղղութեամբ վառւած հարիւրաւոր գիւղեր այրւում են անընդհատ. մերթ սաստկանում էր կրակը, մերթ մարում մի տեղ, իսկ մի այլ տեղում նորը փայլում, նորը վառւում, բոցեր արձակում: Բոցավառւել էին Բալքանները, հրավառութիւն էր Բալքաններում:

Միւս օրը, նոյեմբերի 5-ին, վերջապէս հասանք թշնամու ետկից. բայց կռւի բռնւելու ըոպէին այնպիսի սարսափելի որոտումներ սկըսւեցին, մի այնպիսի սարսափելի անձրև տեղաց, որ անհնարին դարձաւ առաջ գնալը. հեղեղը չէր թողնում ոչ միայն մարդկանց, այլ և ձիերին անգամ առաջ շարժւելու: Թշնամին օգտւելով այդ հանգամանքից, խճուղիով արագ առաջ գնաց՝ թողնելով մեզ իւր բանակը բոլոր մթերքներով:

Մենք քիչ ժամանակ կորցրինք այդտեղ, այն էլ առաջին «տրօֆէյները» դիտելու վրայ. շուտով սկսեցինք հետապնդել թշնամուն: Անձրևն էլ դատարեց և, ինչպէս սովորաբար լինում է հեղեղից յետոյ, արեգակը նորից փայլեց երկընքում: Այժմ գնում ենք խճուղիով, որը կամաց կամաց վեր է բարձրանում:

Երկու ժամից յետոյ, երեկոյեան ճիշտ ժամի հինգ և կիսին մեր ճակատի մասերը հասնում են թշնամուն: Նա դիրքեր բռնելով շրջակայքի և խճուղու վրայ իշխող սարի ամենաբարձր տեղերում, փոսեր էր փորել, մէջը մտել և մեզ էր սպասում:

Առաջին մասերը սկսեցին հրացանաձգութիւն, իսկ մնացած մասերը «օրօգների» հետ մնացին խճուղու վրայ՝ կարգադրութիւնների սպասելու: Քանի գնաց, հրացանաձգութիւնը սաստկացաւ և վերջացաւ միայն այն ժամանակ, երբ թանձը խաւարը պատեց երկինք ու երկիր,

սար ու ձոր, և ամեն ինչ կորաւ խաւարի մէջ: Օգտւելով խաւարից, մեր գլխաւոր ոյժերը առաջ են անցնում, յարմար դիրքեր բռնում և յաջորդ օրւայ համար պատրաստում:

Մեր շտաբը իւր աստիճանաւորներով իջել էր խճուղու տակը՝ մի բլուրի ետև, որ հնար ունենայ կրակ վառելու, որովհետեւ հրաման էր եկել հենց այնտեղ անցկացնելու գիշերը:

Մեր շտաբի օրօղի գլխաւորը, որ այդ կողմերում ապրող մակեդոնացի էր և յայտնի էր աւազակ վասիլ անունով, անյայտանալով, մի 15—20 ըոպէից յետոյ որտեղից որ է խճուղով վիր էր քշում մի հօտ ոչխար, որ և իսկոյն բաժանեց բոլոր մասերի մէջ: Շուտով ամենքն էլ ոչխար էին խորովում ընթրիքի համար:

Ես նստած էի կրակի մօտ և սպասում էի խորովածի հասնելուն, երբ յանկարծ ականջիս հասաւ Անդրանիկի ձայնը, որ տաճկերէն ասում էր մէկին. «Միթէ տաճկից մարդ կը վախենայ. միամիտ մնացէք, իսկոյն կը փախցնենք նրան»:

— Անդրանիկ, դժու ես, ժուր ես գնում, — իսկոյն ձայն տվի և շտապեցի դէպի նրան:

— Բարձր, բժիշկ, ոնց ես, առաջ ես: Մենք էլ աղաների հետ այս ըոպէիս հասանք այստեղից քիչ հեռու գտնւող մի գիւղ. տղերքը հանգստանում են, իսկ ես չկարողացայ համբերել. լսեցի հրացանի ձայներ և եկայ տեսնելու ինչ կայ այստեղ:

Հարցու փորձ արի տղաների մասին, իրենց
կատարած մարքից:

— Ամենքի սիրան էլ շատ է վառւած, — վեր-
ջացրեց Անդրանիկը իւր համառօտ պատմու-
թիւնը:

Ես էլ տւի նրան բոլոր հարկաւոր տեղեկու-
թիւնները և նա գնաց առաջին դիրքերը՝ տեղն
ու տեղը իմանալու դրութիւնը:

Երբ մենք կրակի շուրջը նստած ուտում
էինք գառան չաղ խորովածը, Անդրանիկը վերա-
դառնալիս նոյն տեղում ձայն տւեց ինձ, որով
հետեւ մթութեան մէջ ոչինչ չէր երևում: Նա աշ-
քով տեսել էր ամեն բան և այժմ վերադառ-
նում էր տղաների մօտ քիչ հանդստանալու:

Չանցած կէս ժամ, յանկարծ լսեցինք, որ
խճուղիով զօրք է անցնում. ոտքերի ձայն և
գէնքերի շառաչիւն էր լսւում: Անդրանիկը նո-
րից ծանօթ տեղին մօտենալով՝ ձայն տւեց ինձ:
Պարզւեց, որ հենց որ տղերքը պատրաստել
էին գառը խորովելու, գեներալից հրաման է եկել
անմիջապէս դիրքերի առաջին շարքերը գնալ
որպէս զի վաղ առաւտեան ամբողջ բրիգադայով
դուրս գննդեն թշնամուն իւր բռնած ամուր
դիրքերից:

Շարան-շարան գնում էին տղերքը լուռ ու
լուրջ, վստահ քայլելով իրենց սիրելի հրամանա-
տարների յետեից:

Երկար ժամանակ լուռ դիտում էի նրանց
և քիչ էր մնում արտասէիւ: Բուր են գնում

այդպիսի պատրաստակամութեամբ, առանց տըր-
տունջի, առանց ափսոսանքի:

Յաջողութիւն մաղթեցի բոլորին. Անդրանի-
կին էլ խնդրեցի հնարաւորութեան չափ պահ-
պանել իրեն, վտանգի չենթարկել իւր կեանքը:

— Ոչինչ խոստանալ չեմ կարող, կուի մէջ
մարդ իւր անձի մասին չէ որ պէտք է մտածէ,
— պատասխանեց նա:

Մենք բաժանւեցինք: Ծանը էր բոպէն,
որովհետեւ այդ քաջ և անձնւէր մարդը այնքան
պաշտելի, համակրելի էր դարձել ինձ համար:

Ասա և վերջին շարքերն անհետացան խա-
ւարի մէջ, ահա վերջապէս վաշտի սանկտարները՝
Սրամը և բուլղարացի Դիմիտրը, որին սովորա-
բար «Փելզեր» են կոչում, չնայելով արհեստով
դրաշար է և բժշկութեան մասին ոչ մի գաղա-
փար չունի. Նա հանդամանքների շնորհիւ է
միայն դարձել «սանիտար» — գթութեան եղբայր:
Նրանք էլ գնացին, անհետացան խաւարի մէջ,
մի տեսակ դառնութիւն, մի կոկիծ թողնելով
սրտիս մէջ:

Ես վերագարձայ կրակի մօտ և պատրաստ-
ւեցի քնելու, բայց երկար ժամանակ քունս չէր
տանում. աչքիս առաջով դեռ անցնում էին մեր
տղերքը իրենց խիտ և անվերջ շարքերով:

ՈՒԶՈՒՆ-ՀԱՄԻԴՊԵՐԻ ԿՐԻՒԾ

Ուզուն-Համիդպեր լեռնաշղթան... Ուը Համիդի անունը, այնտեղ էլ հայի արիւնը... Ուզուգեան Բաքրամների ամենաբարձր լեռնաշղթաներից մէկն է Ուզուն-Համիդպերը, որ իշխում է մօտակայ բոլոր լեռների վրայ աչալուրջ պահապանի պէս և դիտում է բոլոր ճանապարհներն ու լեռնային շաւիդները - չի անցնում արդեօք անխոհեմ և դաւադիր «չետնիկը» նրանցով:

Այստեղ իրենց հայրենիքի ազատութեան համար կռւող մակեդոնացի կամաւորներին և նրանց հետ էլ հայերին վիճակւեց կատաղի կերպով ընդհարւել դարաւոր թշնամու հետ, որը դիրքեր պատրաստած, բարձր սարերի գլխին փոսեր փորած և մէջը պատսպարւած սպասում էր՝ իւր զոհերին ծուղակի մէջ զցելու տեսնչով ու սպատակով:

Առաւօտեան թսնձը գոլորշին, որ պատել էր լեռները և ձորերը, գեռ չէր անհետացել. դեռ սար ու ձոր, լեռ ու բլուր չէին երևում այդ մառախուղի մէջ, երբ սկսւեց կռիւր. սկսւեցին հրացանների անկանոն տրաքոցները: Բուղդարիայի զօրքի մէջ չի ընդունւած համագարկը, այլ մասնակի հրացանաձգութիւնը:

Հենց որ արեգակի առաջին ճառագայթները շողողացին լեռների գագաթների վրայ և լուսա-

ւորեցին կռւի դաշտը, իսկոյն և եթ թշնամիները միմեանց ողջունեցին թնդանօթների որոտով:

— Բում, բամ, — որոտացին մեր կողմից լեռնային փոքրիկ թնդանօթները:

— Բում, բամ, բում, բամ, — պատասխանեցին թշնամու արագածիկ կրուպեան թնդանօթները...

Որովհետեւ ես բաւական հեռու էի կռւողներից և այդ պատճառով չէի կարող հետեւ նրանց գործողութիւններին, ուստի կռւի նկարագրութիւնը տալիս եմ օգտեւելով այն պատմութիւններից, որ արել են ինձ բազմաթիւ պաշտօնական անձինք և մասնաւորապէս մեր ընկերները՝ Անդրանիկ, Գարեգին և ուրիշներ: Բացի այդ ես կարգացել եմ բոլոր հրամանատարների ներկայացրած զեկուցումները և առհասարակ ամենամանրամասն կերպով ծանօթացել եմ և հետաքրքրւել այդ անցքով: Այնուամենայնիւ ես բարւոք եմ համարում առաջ բերել այստեղ մեր հայկական վաշտի գործունէութիւնը այնպէս, ինչպէս այդ ներկայացրել է վաշտի ֆելդշեր Դիմիտրը, որ մեր խնդիրքով զրի է անցկացրել այդ օրւայ անցքերը և յանձնել մեզ դեռ Մարմարա ծովի ափին, Պանադոս գիւղում: Թողօտարը խօսէ մեր հայերի ցոյց տւած քաջութեան մասին, թողօտարը անաշառ կերպով դատէ և գնահատէ մեր հայերի զործունէութիւնը: Եթէ մենք ասենք որևէ աւել բան, զուցէ չափանցութիւն, կողմնապահութիւն համարւի:

“....Քնդակները կարկափ պէս տեղացին վաշտի գլխին... կոիւն սկսեց:

Պոդ-պորուչիկ Գարեգինը հայեացքը զցեց իւր կոլոնայի վրայ, որ տեսնի արդեօք չի խանգարւած նրա կարգը և չի այլայլած որեւէ մէկը:

Բոլորովին: Կամաւորները հանգիստ կերպով հետեւում էին իրենց հրամանատարին և սպասում նրա հրամաններին:

Հրամանատարը ժամանակ չկորցրեց, իւր յետեկից տարաւ ամբողջ վաշտը, թագցրեց բնական պատճենների՝ բլուրների յետեւում և այնտեղից, առանց զոհեր տալու, թշնամու ուժեղ կրակի տակ՝ հասաւ Մակագ-Թէֆէին, ուր Անդրանիկը իւր 14 կարիճներով արդէն սպասում էր նրան:

Այդեղից թշնամին արդէն նկատեց վաշտի շարժումները և սկսեց ուժեղ կերպով սմբակոծել Թէֆէն: Գնդակների սուլոցը նմանում էր բներից դուրս ելած հազարաւոր օձերի Փշոցներին:

Ամենքն էլ պէտք է պառկէին. բաւական էր որ մէկը մի քիչ բարձրացնէր գլուխը, որ վիրաւոր ընկնէր թշնամու գնդակներից, որոնք թափւում էին կարկափ պէս և յամառ կերպով զոհեր որոնում:

Առաջիւազումը անհնարին էր, մինչև որ թշնամին չվոնդւէր իւր լեռան գագաթից և մինչև որ չառնւէին նրա գլխաւոր դիրքերը 768 ոտն. բարձրութեան վրայ: Թէև առաջին դիրքերի

հեռաւորութիւնը 1200 քայլ հազիւ լինէր, սակայն նրանք գտնւում էին բազմաթիւ բլուրների յետեւում, այնպէս որ թշնամին իշխում էր նրանց վրայ և շարունակ ոմբակոծում:

Սակայն վաշտը նպատակ է դնում առնել գլխաւոր դիրքերը: Երկու յիսնակ շղթաների են բաժանւում և առաջ ուղարկուում: Հրացանաձգութիւնը սաստիկ ուժեղանում է երկու կողմից է:

Հայկական վաշտից դէպի աջ դիրք է բռնած նոյն դրուժինայի երրորդ վաշտը պոդ-պորուչիկ թորգոմի հրամանատարութեան տակ, իսկ դէպի ձախ կողմը գտնւում են Պրիլեպեան տասներորդ դրուժինան և գնդակացիրը, որ կամաւորների հետ հաւասար իւր մոնուան գնդինգոցով ուղարկում էր իւր գնդակները թշնամուն. բայց նա փայլում է արեգակի լոյսի տակ, այնպէս որ հեռւից անշուշտ նկատելի է:

Այդ հանգամանքը չվրիպեց Անդրանիկի սուր հայեացքից և դիտողութիւնից և նա իսկոյն սպայի ուշադրութիւնը դարձրեց այդ վտանգաւոր հանգամանքի վրայ, բայց արդէն ուշ էր: Թշնամու ուռմբները մէկը միւսի յետեկից սկսեցին ընկնել գնդակացիրի չորս կողմերում. նրանցից մէկն ընկաւ ձիշտ գնդակացիրի վրայ... շպրտեց նրան շատ հեռու, կոտրելով նրա վահանը, և տեղն ու տեղը ծառայողներից երկուսին սպանեց, իսկ չորսին ծանր վիրաւորեց՝ կտրատելով նրանց ոտքերը: Միւս ծառայողները փախչում են հեռու, իսկ հարևան զինւորների մէջ իրարան-

ցում է ընկնում։ Զախ կողմի զինւորները թողնում իրենց դիրքերը և խմբովին յետ են նահանջում՝ իրենց հետ մղելով և յետիում գտնուղ շարքերը... Ալիքի յորձանքը հասնում է ամենքին, բարձրանում է իրարանցում, հրամանչելում, չկայ մէկը, որ անկարգութեան առաջն առնէ. թշնամին էլ նկատելով այդ՝ աւելի է սաստկացնում կրակը և շրապնելներով համարեա լցնում է այդ տարածութիւնը։ Զինորները սարսափած դէս ու դէն են ընկնում՝ չկարողանալով որոշել՝ որտեղ է աւելի ապահով...

Ռոպէն կրիտիքական էր։

Այդ իրարանցումի, տատանման և սարսափի միջոցին լուեց պոդ-պորուչիկ Գարեգինի ջղային ձայնը. «կանզնիր», և առաջնետւեց վերականգնելու կարգը։ Նա իւր սրով կտրեց յետ նահանջողների առաջը, կանզնեցրեց նրանց և միւս կամտորների օգնութիւնմբ բոլորովին կանզնեցրեց փախչողներին։ Յետոյ սուրը բարձր բոնած՝ «յառաջ» գոչեց և ինքն առաջ անցաւ։

— Զեր սրի շողախն ամբողջապէս երեան է հանում՝ ձեր ոյժն ու կարողութիւնը, — նկատեց հեռից մի սպայ։

Իսկ նա ոչ մի ուշագրութիւն չդարձնելով այդ գովասանքին՝ շարունակեց իւր հրամանները, մինչև որ զինւորները նորից գրաւեցին առաջւայ դիրքերը և բաց արին ուժեղ կրակ։

Թշնամու կողմից կրակը սկսեց մեղմանալ, իսկ մի քիչ յետոյ համարեա դադարեց։

Դրութիւնը փրկւած էր, կարգը վերականգնած, դիրքերն էլ պահպանւած։

Բայց դեռ ոչ ոք ժամանակ չունեցաւ հաշիւ տալու իրեն անցածի մասին, որ նորից գոռացին թնդանօթները և լուցին հրացանների համազարկերը, որոնք քանի գնում մօտենում էին։

Ակներն էր, որ թշնամին հակահարւած է սկսում։

Թշնամին մօտենում է...

Վաշտի կէսը սաստկացնում է կրակը, իսկ միւս կէսը հրացանների դանակներն է դնում և սղասում է թշնամուն դանակամարտի համար։

— Ուռա, — գոչում են կամաւորները։

— Ուռա, — լսում է աջ ու ձախ կողմից։

— Ուռա, ուռա, — շարունակում են ոգեռիչ աղաղակները։

— Յառաջ, դանակներնվ, — լսում է տասներորդ զբուժինայի հրամանատարի ոգեռիչ հրամանը...

— Յառաջ, դանակներնվ, — կրկնում են բոլոր մասերը և բուլղարական «Շումի, Մարիցա» (Յուգովիր, Մարիցա) քայլերգը երգում։ Նւագախումբը յափշտակելով այդ երգը՝ սկսում է նւագել։ Մի կատարեալ քառու. նւագ, երգ, կցկտուր հրամաններ, հազարաւոր գնդակների սուլոցներ, թնդանօթների ահեղ գոռում-գոչիւն...

Թշնամին յետ է գնում՝ չկարողանալով դուրս բերել կամաւորներին իրենց դիրքերից։

Այդ գըոհի միջոցին հայերն ունենում են երեք զոհ, մէկը սպանւած և երկուաը վիրաւոր: Երբ սպանւածին փոխաղլեցին ապահով տեղ, համարեա ամենքը գնացին իրենց ընկերին տեսնելու վերջին անգամ: Իսկ Գարեգինը սասափիկ յուղւած՝ համբուրեց ընկած հերոսի սառը ճառատը և դառնալով իւր զինորներին ասաց.

«Զինւոր ընկերներ. ես չեմ անիծում այն ըովէն, որ նա ընկաւ պատերազմի դաշտում. նա առաջինը չէ և ոչ էլ վերջինը նրանցից, որոնք իրենց կամքով եկել են զոհւելու Մակեդոնիայի ազատութեան սեղանի առաջ: Բայց ես ձեզ կոչում եմ դէպի վրէժինդրութիւն, վրէժինդիր լինել ձեր սիրելի ընկերոջ համար, վրէժինդիր լինել մակեդոնական և հայկական ժողովուրդների բոլոր զոհերի համար, որոնք հեծում են տաճկական սև լծի տակ... Յառաջ...»:

— Յառաջ,—գոչում են կամաւորները և վազում մտնում առաջին շարքերի շղթաների մէջ:

Իսկ տաճիկները նորից շարունակում են ումբակոծել զոհեր փնտուելով իրենց գնդակների համար: Երկու կողմի թնդանօթաձգութեան և հրացանաձութեան խլացուցիչ աղմուկի մէջ, այնտեղ, ուր մահն էր բանեցնում իւր հնձող մանգաղը,—յոգնած զինորների ականչներին յանկարծ հնչում է մի հայկական երգի ձայն:

Թշնամու վրայ ոգեսրւած յարձակում գործելու միջոցին մէկ կամաւոր վիրաւորւած էր ուստքից շրապնելի գնդակով: Սանիտարները կանգ-

նեցնում են արիւնը և կապում խոր վէրքը, իսկ նա երջանիկ, որ վիրաւորւել է ընդդէմ անգութ բոնակալութեան մղող ազատարար կուի մէջ, երգում է իւր ոգեսրւած հոգու բոլոր լարերով:

Իւր աշակերտին հասած այդ դժբախտութիւնից զգացւած և նրա ցոյց տւած հերոսութիւնից ուրախացած՝ Գարեգինը թնդանօթների և հրացանների դժոխային կրակի տակ ժամանակ է գտնում մի երկող գրելու բոլոր վիրաւորւածներին:

«Սիրելի ընկերներ. համբուրում եմ ձեր սուրբ վէրքերը. Կեցցէ Մակեդոնիայի ազատութեան համար մղող կոփւը: Դուք պատով կատարեցիք ձեր պարտքը: — Գարեգին»:

Իսկ վիրաւորւածները, ուրախ և երջանիկ, խկոյն պատասխանում են նրան.

«Սիրելի հրամանատար, մենք համբուրեցինք քո նամակը: Երբ առողջանան մեր վէրքերը, մենք պատրաստ ենք նորից կուի դուրս գալու մեր եղբայրների թշնամու դէմ: Կեցցեն հայ կամաւորները»:

Մահացուցիչ կրակը աւելի և աւելի էր զոհեր խլում շարքերից: Մինչև կէս օր սպանւածների թիւը հասնում էր չորսի, իսկ վիրաւորւածներինը՝ եօթի:

Դիրքը պաշտպանւում է յամառօրէն, չնայած թշնամու սաստիկ ոմբակոծութեան: Հայկական վաշտը ամենավտանգաւոր տեղն է բոնած,

նա կուռում է ամենամեծ քաջութեամբ և տալիս
է ամենից շատ զոհեր: Նրա հասցէին ամբողջ
դիրքի վրայ բերնից բերան անցնում է շնորհա-
ւորական աղաղակը:

— Բրաւօ, հայեր, բրաւօ:

«Բրավո, արmenց, բրավո!»

Սակայն մինչև կէս օր մի քայլ անգամ
առաջ գնալ անհնարին եղաւ. միշտ կուռում էին
միենոյն տեղը: Բայց անհրաժեշտ է քշել թշնա-
մուն, որ պատսպարւած լինելով փոսերի մէջ
իւր կրակով մեծ վնասներ է պատճառում մեզ:

Այժմ Անդրամնիկը՝ առասպելական հայ հե-
րոսը, որ սաստիկ հրացանաձգութեան ժամանակ
կատարեալ հանդատութեամբ առաջ էր գնում
թշնամու գնդակների տարափի տակ, այժմ իւր
14 որսկան գնդակածիկների (սրբութեան) հետ
առաջ խաղաց յարձակւելու «տրանշէյների» մէջ
պատսպարւած թշնամու վրայ: Օգտւելով որպէս
բնական պատսպարան կանգնած ըլուրներից,
փոքրաթիւ չետան մօտեցաւ թշնամուն, որը
նկատեց նրան ժամի մօտ երկուսին: Սկսեց
սաստիկ հրացանաձգութիւն, որ տեսեց մինչև
ժամի չորս և կէսը: Անդրամնիկը իւր փոքրիկ
չետայով շատ եռանդուն կերպով կուռում էր
թշնամու դէմ, մինչև որ վերջինս՝ զարմացած
այդպիսի համարձակութիւնից՝ կորցրեց յաղթելու
լոյսը և սկսեց թողնել դիրքերը: Մինչև այստեղ
յաղթութիւնը կատարեալ էր: Բայց Անդրամնիկը
իւր 14 հոգով անակրող էր հալածել յետ նահան-

ջող թշնամուն, ուստի վաշտը Գարեգինի հրամա-
նատարութեամբ առաջ գնաց գրաւելու գլխաւոր
դիրքը՝ «768 ոտն. բարձրութիւնը»*):

Արդէն երեկոյեան մութը պատել էր սար
ու ձոր և կուագաշտը. բոլոր կողմերից ոյժն ու
կրակը կենտրոնացրել էին այդ բարձրութեան
դէմ: Կամաւորները հրացանների գանակները
գրած, շղթայ կազմած, կամաց-կամաց առաջա-
նում են՝ 768 ոտն. բարձրութեանը մօտենալով:
Ընդհանուր աղմուկի մէջ մերթ ընդ մերթ լսում
է հրամանատարի ոգեսրիչ հրամանը՝ յառաջ,
յառաջ:

— Յառաջ, յառաջ, — որպէս արձագանգ լը-
ւում է վաշտի յետեից. դա բրիգագայի հրամա-
նատար փոխ-գնդապետ Պրոտոգերովն է, որ իր
կողմից նոյնպէս ոգեսրում է հայերին՝ «յառաջ»
(Բրաչն!) գոշելով:

— Յառաջ, — ձայնակցեցին կամաւորները և
առաջ գնացին: Սակայն անտանելի էր թշնամու
կրակը և անհնարին մի վաշտով դրաւել բար-
ձրութիւնը: Բրիգագայի հրամանատարը տեսնե-
լով այդ, հրամայեց Գարեգինին իր տղերանցով
պահել գոնէ գրաւած տեղերը, իսկ ինքը գնաց
օգնութիւն բերելու:

Միւս վաշտերը շատ էին հեռու մնացել. Վ
հայերը մենակ շատ էին առաջացել և այդ պատ-

*) Մի սար, որ ըստ քարտէզի 768 ոտն. բարձրութիւն
ուներ ծովի մակերևոյթից:

Ճառով թշնամու կրակի ամբողջ ոյժը կենտրոնացած էր նրանց վրայ:

Սակայն երբ խաւարը աւելի թանձրացաւ, Գարեգինը չսպասեց հրամանատարի խոստացած օգնութեան գալուն, այլ գրոհի դիմեց իւր վաշտով. զգուշութեամբ և լուսթեամբ կամաւորները կամաց-կամաց մօտենում էին թշնամու փոսերին:

Երբ կամաւորներին մի քանի տասնեակ քայլ էր մնում մինչև թշնամու դիրքերը, յանկարծ բարձրացաւ սարսափելի հրացանաձդութիւն. թշնամին նկատել էր մօտեցողներին: Էլ մտածելու կամ սպասելու ժամանակը չէր...

— Յառաջ, — լսեց հրամանատարի ծանօթձայնը:

— Յառաջ, դանակներնիվ. „Հա որեմ, հա հօյք!“

Եւ կամաւորների շղթան միահամուռ և զօրաւոր «ուռամ, յառաջ դանակներով» գոչելով, յարձակւեց թշնամու վրայ...

Մի քանի ըոպէ միայն տևեց ձեռնամարտը. Թշնամին փախաւ, չկարողանալով դիմանալ անգուստ գրոհին, վաշտը գրաւեց նրա ուժեղ վերը, որը մի ամբողջ օր պահեց մեր ամբողջ բրիգադյի առաջխաղացումը:

Նորից ոգեսրւած և զօրեղ «ուռան» լցրեց սար ու ձոր իւր արձագանքներով, յայտարարելով ամեն տեղ տարած կատարեալ յաղթութեան լուրը:

Սակայն դեռ ռւրախանալու ժամանակը չէր: Վաշտի հրամանատարը հաւաքեց ցիր ու ցան եղած զինւորներին և հրամայեց իսկոյն դիրքեր վորել, որ անհրաժեշտ էր որևէ անսակնեալ վորձանքի առաջն առնելու տեսակէտից. գուցէ յաղթւած թշնամին գիշերւայ միջոցին վորձ անէ նորից գրաւելու իւր դիրքերը:

Հենց այդ ժամանակ այդտեղ հասաւ բրիգադյի աղիւտանստ պորուչիկ Մանովսկին և շնորհաւորեց Գարեգինին հայկական վաշտի կատարած յաղթութեան համար: Եկան հասան միւս վաշտերն ևս: Մինչև առաւօտ կամաւորներն անցկացրին աշալուրջ հսկողութեամբ և ամեն մի ըոպէ պատրաստ էին յետ մղելու թշնամու անակնկալ յարձակումները»:

2.

Այսպէս է նկարագրում Ուզուն-Համիդլերի կոիւը ականատեսը՝ հայկական վաշտի սանիտար բուլղար Դիմիտրը, որ մի զարդացած և շնորհալի պատանի է, արհեստով գրաշար: Նա բացի սանիտար լինելուց վարում էր և հայկական վաշտի գրագրի պաշտօնը, պահելով նրա պաշտօնական գրագրութիւնները և մանրամասնօրէն արձանագրում վաշտի գործողութիւնները օրագրի մէջ, որից յետոյ կազմւում էին պաշտօնական զեկուցումները: Այդ օրագիրները պարտաւորական էին և այժմ էլ պահելում են կամաւորւթեան արխիւում:

Այժմ՝ Դիմիարի անաշառութիւնը պարզելու
համար տեսնենք ուրիշներն ինչպէս են նկարա-
գրում միևնույն դէպքը:

Ինչպէս ասացի վերևում, նոյեմբերի 6-ի
կոիւը սկսւեց առաւօտեան ճիշտ ժամի 6-ին:
Մենք շտաբի միւս աստիճանաւորների հետ արդէն
թէյ խմած վերջացրած և կրակի շուրջը նստած
սպասում էինք բրիգադայի հրամանատարի կար-
գագրութեանը՝ առաջ անցնելու կամ սպասելու
նոյն տեղը: Բրիգադայի հրամանատարն այդ գի-
շեր մեզ մօտ չէր անցկացրել, այլ դիրքերում՝
զինւորների հետ միասին: Սակայն ոչ մի կար-
գագրութիւն չեկաւ: Այն ժամանակ վճռեցինք
խճուղիով քիչ առաջ գնալ և մօտենալ կուի
շրջանին, թէև այդ այնքան էլ անվտանգ չէր,
որովհետև օրը պայծառ էր, թշնամին խճուղու
վրայ որևէ շարժում նկատելուց իսկոյն ոմքա-
կոծում էր: Մենք հազիւ մի երկու քիլոմետր
մօտեցանք կուագաշտին, աւելին էլ չկարողա-
ցանք առաջ գնալ, որովհետև արգելած էր հրա-
մանատարի կողմից՝ ճանապարհը խիստ ոմքա-
կոծութեան ենթարկւած լինելու պատճառով:
Առանց այն էլ թշնամին արգէն նկատել էր
մեզ (շտաբը և գրուժինաներին իրանց բեռնած
սայլերով): Նա սկսեց շատ եռանգուն կերպով
ոմքակոծել: Նրան յաջողւեց նոյնիսկ մէկ ոռւմք
պայթեցնել ուղիղ սայլաշարքի մէջ, որից վնաս-
ւեց մէկ ձի իւր մի բեռն պաշարեղէնով:
Ճիշտ այն ժամանակ էր այդ, երբ տաճիկները

գրոն էին տեսել մերոնց վրայ և աշխատում էին
փախցնել Մակագ-Թէֆէից: Մերոնց մէջ իրա-
րանցում էր ընկեր, որը միայն հայերի շնորհիւ
հանգստացաւ և գրութիւնը վրկեց գիրքերում:
Իսկ մեզ մօտ գրութիւնը մնաց նոյնը, ուստի
վճռեցինք բեռները յետ քաշել: Մի քանի ձիա-
պաններ յետ քաշելը փախուստ կարծելով, այն-
պիսի արագութեամբ սկսան փախչել, որ քիչ
մնաց ուրիշներին էլ իրենց ընթացքի մէջ առ-
նէին:

Խճուղու վրայ նստած սպասում էի, երբ
բրիգադայի հրամանատարից լուր եկաւ, որ ես
գնամ դիրքերը, որովհետև արդէն բաւականա-
չափ վիրաւորներ կային: Ես ձիս հեծայ և ճանա-
պահնեցի: Քիչ յետոյ նկատեցի, որ մի ձիաւոր
հետևում է ինձ: Զանցաւ մի քանի ըոսէ, նա
ուսեց խօսել ինձ հետ, պատմելով թէ նա արդէն
եղել է դիրքերում և գիտէ, թէ որտեղ են վիրա-
ւորները: Զայնը կանացի էր, բայց հազնւած էր
աղամարդու պէս, զինւորական զվարկ ու հա-
մազգեստ, կարճ մանլիխերեան հրացան ու ատր-
ճանակ, հրացանի գանակ ու փամփուշտակալ...
Հետաքրքրեցի այդ շատախօս զինւորով և յետ
նայելով տեսայ, որ նա կին է:

— Դու կի՞ն ես, ի՞նչ է, — հարցըրի ես:

— Ի հարկէ, կի՞ն եմ. ի՞նչ է, գու կարծում
էիր, թէ տղամարդ եմ:

— Ի՞նչ ես անում այստեղ և որտեղից լոյս
աշխարհ ընկար այդպէս յանկարծ:

— Ես էլ եմ կամաւոր, Խասկով քաղաքացի եմ, եկել եմ թէ կուելու և թէ աղերանց վերքերը կապելու:

Եւ խկապէս կուելու համար գէնք ունէր և վիրակապութեան համար լիքը դեղօրայքով մի տոպակ՝ կախած աջ կողքից, ձախ թէին է լ կապած ունէր սպիտակ շորի վրայ կարած կարմիր խաչը:

Երեկի իմ բախտից, նա խօսում էր ոռոսերէն:

— Ոռոսերէն ո՞րտեղից գիտես, — հարցրի ես, նկատելով որ տեսքից ինտելիգենտ կնոջ տպաւորութիւն չի թողնում:

— Ամուսինս ուուս է, 78-ի պատերազմից յետոյ մացած Բուլղարիայում:

Այդպէս խօսելով բաւական ճանապարհ անցել էինք արդէն, երբ խճուղուց ներքև մի փոքրիկ անակի մօտ պատահեցինք առաջին վիրաւորներին: Ես կապեցի երկուսի վերքերն էլ, իսկ կինը իւր տոպարակից իսկոյն կաթիներ հանեց, մի կերպ ջուր գտաւ, խմեցրեց վիրաւորներին ու սիրտ տւաւ նրանց:

Այդտեղից ձիով առաջ գնալ այլևս չէր կարելի, որովհետև արդէն կրակի շրջանումն էինք և գնդակները շարունակ վզզում էին ամեն ուղղութեամբ. ուստի թողի ձիս, վերցրի բժշկական պայուսակս և ուղղակի խճուղիով քայլեցի դէպի միւս իջևանը, մինչև ուր դեռ առնւազը մի քելօմետր տարածութիւն կար: Շատ շոգ էր: Խճուղին ամայի էր, ոչ ոք անցու-

դարձ չէր անում, որովհետև թշնամու գնդակները շարունակ թափւում էին այստեղ, նրանցից պահելու տեղ չկար: Շտապ քայլելուց շատ յոզնել և համարեա շնչառապ էի դարձել, մի կողմից էլ գնդակներն էին անհանգստացնում իրենց վզզոցով: Յանկարծ խճուղու վրայ նկատեցի մի աղբիւր: Ես սաստիկ ծարաւ էի զգում, ուստի վճռեցի ինչ էլ որ լինի, մօտենալ աղբիւրին և ջուր խմել, նոյնիսկ եթէ սպանւէի էլ: «Թող խմեմ, յետոյ սպանւեմ», ասեցի մտքումս և մօտենալով քերան, յորդ աղբիւրին, ընկայ վրան...

Մի քանի գնդակներ նորից վզզացին մօտովս: Ես մնացել էի մտատանջութեան մէջ, չգիտէի ինչպէս շարունակեմ ճանապարհս, երբ յանկարծ լսեցի զինւորների ձայնը՝ «պառկիր, պարկիր»: Ես շհասկացայ այդ զինւորական «ամօթալի» խորհուրդը, միայն քաջալերւած նրանց ձայնից, հաւաքեցի ոյժերս և վազեցի դէպի նրանց...

Այդտեղ խճուղին ծուռում էր բլուրի յետեր, ուր կայարանի պէս մի ժամանակաւոր փայտէ մեծ գոմ էր շինւած, երկու փոքրիկ սենեակ էլ մէջը: Այդտեղ էին որոշել կենտրոնացնել բոլոր վերաւորներին: Երբ ես մտայ այդ գոմը, զինւորներով արդէն լիքն էր նա. այդտեղ կային թէ վիրաւորներ, թէ վիրաւորների հետ եկածներ և թէ գնդակներից պատապարւողներ, թէն գոմը բնաւ ապահով չէր, որովհետև հիւսիսային կող-

մից բաց էր թշնամու գնդակների առաջ: Վիրաւորների տնքոցը լսում էր դեռ հեռւից: Մարդկանց բազմութեան պատճառով առաջացել է աղմուկ, իրարանցում:

Երկար մտածելու տեղը չէր. մի կերպ կարգը վերականգնելով զինուրների մէջ, անմիջապէս վիրաւորներին օդնութեան հասցնելու գործը կանոնաւորեցի, հսկելով օդնականներիս վրայ և անձամբ կապելով ծանր վիրաւորներին: Հազիւ կարողանում էինք հասցնել, որովհետև շարունակ նորերն էին բերում:

Ծանր վիրաւորներին տեղաւորեցինք սենեակներում, իսկ թեթևներին հենց գոմի մէջ. գուրս տանելու ոչ մի հնար չկար, որովհետև գնդակները ամեն տեղ էլ դեռ համում էին, նոյնիսկ երկու զինուր վիրաւորւեցին հենց գոմ մտնելիս, գուան առջև:

Ծանր վիրաւորները շարունակ ճառում, հառաչում, խոր տնքում էին վերքերի ցաւից և շարունակ մայլի, մայլի (*մայրիկ*) կամ օհ, լիլ, լիլ կանչում և ջուր ուզում:

Յանկարծ տեսայ, որ նոյն կինը ծանր հիւանդների մօտ է արդէն և արտասունքն աշքերին խնամում է նրանց—ջուր է տալիս, ճակատները ջրով թթվում և քաղցր խօսքերով ողերում, սիրտ է տալիս նրանց: Այդ բոպէից այդ կնոջ ներկայութիւնը կատարեալ անհրաժեշտութիւն դարձաւ բոլորի համար. ով ջուր էր պահանջում, իսկոյն հասցնում էր, ով ուղղել էր կամենում,

իսկոյն հասնում օգնում էր, ով հաց էր ուզում, իսկոյն գտնում տալիս էր. մի խօսքով՝ կատարում էր հիւանդների բոլոր ցանկութիւնները: Եւ այդ բոլորն անում էր նա ուրախութեամբ, առանց յոգնելու, անտրառունջ: Ի՞նչպիսի քաղցր խօսքերով էր նա միսիթարում, քաջալերում ցաւից սաստիկ տանջւող հիւանդներին: Վերջապէս երե երկու ընկածներ բերին գրին պատի տակ, այդ բարի կինը փակեց նրանց աչքերը և լացեց, մայրական արցունքներ թափելով այդ վաղամեռ երիտասարդների վրայ...

Ահա այստեղ էր, որ ես առաջին անգամ լսեցի հայկական վաշտի մասին. տեղեկաց այ, որ հայերն էլ վիրաւորներ պիտի ունենան, որովհետև շատ առաջ են գնացած և շատ խիստէն են կուռում: Քիչ յետոյ եկաւ ԽI գրուժինայի ֆելդեր հաջի Աբրահամ Մանուկ Ակիմովիչը՝ մի հունդաբացի, երուսաղէմ ծնւած և այստեղի ոռւսաց դպրոցում էլ սովորած: Խ գրուժինան այդ օրը պահեստի ոյժ էր կազմում կուռող ուժերի, այսինքն IX, X և XII գրուժինաների և, ընտկանաբար, դիրք էր պահում կենսորնի, այսինքն Հայկական վաշտի յետեռում, ուստի տեսնում ու հետեռում էր, նրա իւրաքանչիւր քայլին:

Իմ հարցին՝ թէ ինչպէս է գնում գործը դիրքերում, ֆելդերը պատասխանեց, թէ վատչէ, ամենից լաւ հայերն են կուռում, որ նա արտայայտեց բառացի հետեւալ խօսքերով. „Բր-

менцы—вотъ молодцы! Мое имъ почтеніе, кланяюсь я имъ! шиши и фифиарկр վերցրեց ու գլուխ տւեց:

Քիչ յետոյ հասան և մի քանի հայ վիրաւորներ, երկուսը ծանը, մնացածը միջակ: Տղերքն իրենց պահում էին քաջի պէս և սաստիկ ցաւերը (օր. փշրւած ուկրներ) տանում էին համբերութեամբ: Մէկն ասեց. «Պարմն բժիշկ, լաւ կապիր, որ վէրքս շուտ առողջանայ, որպէսզի շուտով էլի կարողանամ կուի դուրս գալ»: Իսկ մի ուրիշը, երբ կապեցի ոտքի վէրքը, բոլորովին միամիտ կերպով հարցըրեց. «այժմ կարող եմ գնալ դիրքերը»:

Երեկոյեան մութն ընկած էր արդէն, երբ ինձ մօտ եկաւ նաև XII դրուժինայի հրամանատար պոդպորուչիկ կուներ:

Հենց որ ինձ տեսաւ նա, դիմեց հետեւալ խօսքերով. «Բժիշկ, օգնիր»:

Կարծելով, թէ վիրաւորւած է, իսկոյն հապայ և հարցըրի, թէ որտեղից է վիրաւորւած: Պարզւեց որ վիրաւորւած չէ, այլ սաստիկ յոգնած և թուլացած: Իսկոյն կաթիլներ տւի. իսկ այն բարի կինը որտեղից որ է մի բաժակ թէյ հասցըրեց և կուներ քիչ կազդուրեց: Բնական է, որ նրանից կարող էի ամենաճիշտ տեղեկութիւններն ստանալ տղաների մասին:

— Օ՛, առիւծներ են, կատարեալ առիւծներ, — պատասխանեց նա. — այսօր մեզ բոլորիս նրանք փրկեցին, եթէ նրանք չինէին, մենք բո-

լորսէլ ջարդւելու, զոհւելու էինք, բոլորս էլ... Այն, մեր կեանքով մենք նրանց ենք պարտական, նրանք փրկեցին դրութիւնը: Այդ ես առում եմ, և իբրև հրապարակախօս իմ բարոյական պարտքը կը համարեմ բոլղար հասարակութեան առաջ էլ կրկնել այս խօսքերը: Ի՞նչ պիսի քաջ տղերը կան, մարդ ուղղակի զարմանում է: Գնդակների տարափի տակ շատերը քրդական երդ էին երգում... Շատ քաջ է մանաւանդ Ասլանը, միաժամանակ և երգում էր և կրակում:

Այդ խօսքերը կունեւն խսկապէս շարունակ կրկնում էր, ուր որ և երբ որ խօսք էր բացւում Ուզուն-Համբիդերի կուի մասին: Գոնէ ես մի հինգ-վեց անգամ լսել եմ նրանից այդ միենոյն արտայայտութիւնները Ուզուն-Համբիդերի կուից շատ ժամանակ յետոյ, Պանադոս, Պլատանա և Ստերնա գիւղերում—Մարմարա ծովի ափին:

Հայերի մասին ուրիշ շատերից էլ շատ գոյգասանքներ լսեցի և շատ գոհ մնացի, որ տղերքը այդպէս լաւ և պատւաւոր հոչակ են ստացել: Սակայն մեծ վիշտ պատճառեց այն, որ նրանցից շուր սպանւել և 15-ը վիրաւորւել էին:

Ուշ գիշերին մի քանի բռպէսվ Անդրանիկն էլ եկաւ ինձ մօտ՝ իմանալու քանի վիրաւոր կայ: Շատ ուրախացայ նրան ողջ և առողջ տեսնելով: Չուզեցաւ մնալ մեզ մօտ, շտապեց տղաների մօտ՝ իւր հետ հաց տանելով նրանց համար: Մինչև առաւօտեան ժամի չորս և կեսը

եզան սայլերի վրայ բարձեցի վիրաւորներին և
ուղարկեցի դէպի յետ — Բուլղարիա: 160-ից
աւելի էին վիրաւորները: Դրա յաջորդ օրը պէտք
է հաւաքէինք սպանւածներին և հողին յանձնէ-
ինք: քանիսն էին, գեռ ճիշտը ոչ ոք չփիտէր:

3.

Հրամանն այնպէս էր, որ միւս առաւօտեան
առանց ժամանակ կորցնելու ամենքն էլ պէտք է
հալածէին փախչող թշնամուն, այնպէս որ Հայ-
կական վաշտը նոյն իսկ չկարողացաւ ամբողջու-
թեամբ մամնակցել իւր սպանւած ընկերների
թաղմանը:

Ուզուն-Համիզլերի բարձր գագաթի վրայ,
մի հաստարուն դարաւոր ծառի շւաքի տակ
փորւեց տղաների եղբայրական գերեզմանը:

Փոքրաթիւ հաւատարիմ ընկերներ իրենց
արտասունքներով թրջեցին գերեզմանը և իրենց
ընկերական ձեռքերով մի բուռն հող պցեցին
նրանց երեսներին:

Հանգիստ, անվրդով, յաւիտենական քնով
քնած են պատւաւոր դաշտում քաջի մահով
ընկածները: Առաւօտեան զով քամին նրանց
ճակատը վերջին անգամ էր շոյում, փայփայում
իւր զովարար ալիքներով: Այսուհետեւ նրանք
չեն տեսնելու ոչ ընկեր, ոչ բարեկամ: Նրանց
մայրերը, քոյրեն ու եղբայրները ի զուր են
սպասելու նրանց վերադարձին, հանդիպման
ժաղցը բովելին...

Միայն Ուզուն-Համիզլերի բարձր գագաթի
վրայ սաւառնող քամին է, որ տանելու է նրանց
փառաւոր մահւան լուրը դէպի հայրենեաց կող-
մերը, միսիթարելու վշտացած ընկերներին ու
ծնողներին, որ չտիրեն, չկակծան, որովհետեւ
քաջերը կուի ազնիւ դաշտում ընկան քաջերի
պէս և թշնառի, ստրկի ազատութեան համար...

IX.

ԳԻՒՄԻՒՐՁԻՆԷ ՔԱՂԱՔՈՒՄ

Ի զուր արագ քայլերով հետամուտ եղանք
թշնամուն: Նա այնպէս շտապով և արագու-
թեամբ էր յետ նահանջել, փախել, որ անհնա-
րին եղաւ ոչ միայն գերել, այլ և տեսնել փախ-
չելիս:

Մինչև Գիւմիւրջինէ քաղաքը հազիւ 25
քիլոմետր լինէր կուաղաշտից: Զնայելով ամ-
բողջ բրիգադան յոզնած էր երկու-երեք օրւայ
կուիւներից, սակայն պէտք էր հասնել մինչև
քաղաք: Յայտնի չէր դեռևս, թէ թշնամին կը
յանձնի քաղաքն առանց կուի, թէ դեռ դիմա-
դրութիւն պիտի ցոյց տայ:

Ճանապարհը շարունակ անցնում էր բարձր
լեռների և ձորերի միջով: շարունակ վայր էինք
իջնում դէպի Գիւմիւրջինէի դաշտը:

Ահա և վերջին բլուրը, որտեղից արդէն
երեսում է քաղաքը և որից զատ էլ բլուր կամ
սար չկայ: Մեր առաջ ընկած է Գիւմիւրջինէի

գաշտը, որի մէջ օձապոյտներ է կատարում
Արդա գետը:

Դեռ քաղաքին չհասած՝ տեսանք, որ պատ-
գամաւորութիւն է գալիս. թշնամին թողել—փա-
խել է, քաղաքը անձնատուր է լինում: Պատգա-
մաւորութեան մէջ կային հայեր, յոյներ՝ իրենց
քահանաներով, բուլղարներ և տաճիկներ...

Իրեւ նշան կատարեալ յաղթութեան և
ցնծութեան, գեներալը հրամայեց 21 անգամ
թնդանօթ արձակել, որ քաղաքը և նրա հետ ամ-
բողջ աշխարհն իմանայ, որ ազատութիւն է
այսուհետեւ այդ երկրի տաճկական ծանր լծի
տակ տանջնող ժողովուրդների համար:

Արդէն ուշ լինելու պատճառով վճռեց, որ
միայն միւս օրն առաւօտեան զօրքերը փառաւոր
մուտք գործեն քաղաքը:

Գիշերը անց կացրինք քաղաքից դուրս գաշ-
տի մէջ, բացօթեայ, մի բուլղարական գիւղի
արտերում:

Դեռ երեկոյեան մի թեթև անձրե եկաւ և
թրջեց խեղճ զինւորներին, որոնք գեռ ոչ մի
ծածկոց, վերարկու և առհասարակ կարգին հա-
գուստ չունեին:

Ես թոյտլութիւն ինգրեցի գնալ գիւղում
գիշերել. ծառաս գիշերելու տեղս չիմանալով՝
շորերս վերցրել ուղղակի քաղաք էր տարել:

Հրամանատարը սիրով թոյլատրեց, և ես
գնացի մի տուն, ուր գտայ և Անդրանիկին, որի
հետ միասին անցկացրինք գիշերը:

Միւս առաւօտը սաստիկ անձրե սկսեց և
տեղ երկու ժամ: Բոլորս էլ խիստ թրջւեցինք
բաց գաշտի մէջ՝ սպասելով քաղաք մաներու հրա-
մանին. թրջւեցինք մինչև «ոսկրներիս ծուծը»:
Սատւած գիտէ, թէ ինչի էլնք նմանում մեր
խեղճ, թրջւած տեսքով:

Ժողովուրդն արդէն խումբ-խումբ գալիս էր
գիմաւորելու. եկել էին և շատ հայեր հայ զին-
ւորներին տեսնելու:

Վերջապէս եկաւ հրամանը: Զօրքերը նւագա-
խմբի առաջնորդութեամբ քաղաք մտան զրօշակ-
ները պարզած: Զնայած վատ եղանակին, ամ-
բողջ քաղաքը ոտքի էր ելել գիմաւորելու իրենց
ազատողներին: Մեր բըիգադան ուղղեց դէպի
քաղաքի միջի հրապարակը, ուր շարւեց կանո-
նաւոր կարգով և ուր մէկ լուսանկարիչ հանեց
նրա պատկերը: Յետոյ վաշտերը խումբ-խումբ
գնացին դէպի իրենց յատկացւած բնակարան-
ները: Հայ վաշտին յատկացւած էր հայոց թաղը:

Դրօշակները պարզած, սիրուն, ներդաշնակ
երգեր երգելով՝ Հայկական վաշտն անցաւ ամ-
բողջ քաղաքի միջով և հասաւ հայկական թաղը
—եկեղեցու բակը: Ամբողջ հայ գաղութը (80
հայ տուն)՝ մեծ ու փոքր, կին ու աղջիկ, ծեր
ու երեխայ այդտեղ էին հաւաքւել իրենց աչքե-
րով տեսնելու Հայկական վաշտը եւ հայկական
գրօնակը: Եկեղեցու բակում երկսեռ դպրոցի
մանուկները կարգով շարւած՝ գիմաւորեցին
վաշտին հայկական երգերով, իսկ ժողովուրդը՝

բուռն ծափահարութիւններով և աղաղակներով։
 — Կեցցէ հայ վաշտը, կեցցէ Անդրանիկլը։
 Երգեցիկ խումբը երգեց Անդրանիկի երգը։
 Քահանան արտասւալից աչքերով, զգացւած
 մի ճառ արտասանեց իւր յոյժ ուրախութիւնն
 արտայայտելով, որ տաճկաց անիրաւ լծից աղա-
 տողների մէջ տեսաւ իւր հայ եղբայրներին,
 հայ որդիներին։ Դա մի մեծ, աննկարազրելի
 ուրախութիւն է ոչ միայն իրան, այլ և բոլոր
 հայ սրտերի համար, մի վեհ, դարերից ի վեր
 սպասւող մխիթարութիւն։ Օրհնեց ստրուկ ժո-
 ղովրդի աղատութեան համար կուտաշաշտ դուրս
 ելած անձնւէր հայ քաջերին, օրհնեց և կուփ
 պատաւաւոր դաշտում ընկածների անմահ յիշա-
 տակը, ապա բարի գալուստ մաղթեց բոլորին,
 որով և աւարտեց իւր սրտառուչ ճառը։ Միւս
 հոկտորներն էլ խօսեցին, արտայայտեցին իրենց
 դարերով փայփայած բաղդանքը, ուրախութիւնը,
 աղատաւծ տեսնելով իրենց երկիրը։ Տանջւած,
 այրւած սրտերից բղիսում էր անկեղծ ցնծու-
 թիւն, անկեղծ զգացմունքների արտայայտու-
 թիւն։

Բոլորից յետոյ խօսեց Գարեգինը և խօսեց,
 ինչպէս միշտ, սաստիկ զգացւած և կրակու-
 կերպով։

Շատերն ուրախութիւնից լաց էին լինում
 չկարողանալով գսափել իրենց արտասունքները։
 Ճառերը վերջացան, փառաւոր կերպով դրօ-
 շակները ներս տարան հրամանատարի համար

յատկացւած սենեակը, և պահակը՝ դանակը հրա-
 ցանի ծայրին գրած՝ իսկոյն պահապան կանգնեց
 դրօշակի առաջ...

Վաշտը տեղաւորւեց դպրոցի մէջ և սկսեց
 չորացնել իւր թրջած շորերը։ Տեղական բնակ-
 չութիւնը իսկոյն բերեց թափեց նրանց առաջ
 պատրաստ գուլպա, սպիտակեղին, տաք շորեր
 և այլն, այնպէս որ քիչ յետոյ բոլորն էլ
 փոխած իրենց թաց շորերը, գուրս էին եկել
 քաղաք զբոսանքի կամ հիւր էին գնացել հայերի
 տները։

Երկու օր մնացին Գիւմիւրջինէում հանգստա-
 նալու։ Դեռ առաջին իսկ օրը բրիգադայի հրա-
 մանատարը հայկական վաշտին ուղարկեց խա-
 ղաղացնելու և պահպանելու տաճկաց թաղը, ուր
 ուրիշ վաշտերից զինւորներ էին մտել և անկար-
 գութիւններ էին առաջ բերել իրենց տգեղ և
 պախարակելի վարմունքներով։ Հայկական վաշտը,
 իրեկ վստահելի և միանգամայն լոյալ զօրա-
 մաս, մեծ վստահութիւն էր վայելում և հաւատ
 էր ներշնչում բոլորին, մանաւանդ որ նրա
 գլուխն էր անցած բոլորին յայտնի հոչակաւոր
 խմբապետ Անդրանիկը, որը մի արտակարգ և
 արտասովոր ուշագրութեան առարկայ էր ժողո-
 վուրդների համար։ Ամենքն էլ կամենում էին
 տեսնել նրան, ողջունել նրան, սեղմել նրա
 ձեռքը... Այն տունը, ուր նա էր ապրում, սրբա-
 տեղի էր գարձել. մէկը մտնում, միւսը դուրս
 էր ելնում։

Թէ որքան յարգում և հաւատով էին վերաբերում դէպի Անդրանիկը բարձր հրամանատարները, ցոյց է տալիս ի միջի այլոց և այն փաստը, որ հայ բնակիչների զինաթափութեան գործը յանձնեցին նրան և երեք ոչ մի լշխանութիւն իրան թոյլ չտւեց խառնւելու կամ ստուգելու այդ գործը։ Հետեամքներն ընդունւեցին ոչ միայն կատարեալ հաւատով, այլ և մեծ շնորհակալութեամբ։

Հանգստութեան օրերն աննկատելի կերպով անցան, և երկու օրից յետոյ վաշտը՝ աշխոյժ և զւարթ՝ նորից շարունակեց իւր ճանապարհը։ Ամբողջ հայ հասարակութիւնը եկել էր ճանապարհ գցելու նրան, որ դրօշակը լայն պարզած, երգելով անցաւ խուռն բազմութեան միջով և շուտով դուրս եկաւ քաղաքից։ Մեր զօրաբանակը չափազանց մեծացել էր, որովհետեւ կը զայլից երեք ուղղութիւններով դուրս եկած սիւները Գիւմիւրջինէում միացած էին միմեանց հետ։ Այժմ հետեւում էինք թշնամուն ամբողջ զօրամատով։ Սակայն հետեւալ օրւանից երկու մասի բաժանուեցինք. դարձեալ մնաց մեր երրորդ բրիգադան արագաձիգ թնդանօթների հետ միախն։

Մինչև Կեդեալաց քաղաքը անցանք առանց միջնադէպերի, եթէ չհաշւենք մի թեթև իրարանցում, որ ծագեց մեր երկար քարաւանի մէջ և 35 տուններն անցնելու միջոցին։ Յանկարծ կամաւորների վրայ պարզւեցին մի քանի հրա-

շաները։ Ամենից իշխանութիւն, թէ մէր և ու, Ետների օրս ամրացել է թշնամին թէր Ճանապարհից հորեցւ նպաստակով։ Անկայ շուռով պարզվեց, որ թշնամին չկա, իրացան արջակոցները եղել են թէր Կաթավարներից։

Ճանապարհը շարունակեցին շատ արագ, առանց հանունավար հանգատության, որպիստեւ լոր յր առաջից, թէ թշնամին յուր գլուխվոր ովերաց հասել յր մարդկան զետք և փորձեր առնեմ անցնելու ընտանիք և պարզիաց ապամուշ գերի ընկայուց։

Ըստեմբերի 13-րդ գլուխեցին Մազդարանի ուկրտեան զյուղու, որի ընալիքներից շատերը փափու պատապարքել են Ծառերած լինց և այնուն 30-40 Բարդ այլ զյուղի սահմանել են տունիկ փախու պինդարների կողմոց, և ամբողջ զյուղը սփ եղ յր։ Եյդ բայց շատ աշդեց կաթավարների ուրախացրացան օրս։

Ջրու առաջնորդ շտագ-շտագ շարունակուն ինք յոր Ճանապարհո, երբ հասանակ Յի գումար տաճիկ զյուղերի, որոնց առհանգիւնի օրս Յաճանում ինք սպիտակ դրոշակեր ի նշան բույարության և աջնատուր լինելու։ Մայս դժբախտորունք այն յր, որ Մայս այդ դրոշակերն հանձելը, դաշտի օգջ պատահեցին Յի պրոտօնէթիք առնապարանի սպանակ ընկած ինք երկու թուղթարներ, իսկ Վարչու Յուս առքու և կրայր Յահանցի յր Յի նորամին Յանուկ շորերի մէջ փարարշան։

Թույլար կամաց պահանջման այդ և կայլ
տեսքի պահանջման ըստ եղանակի, օճախան
ամբա բայ և օճախ առաջանութիւն այդ ամեն
պահեր արյան պահե առ է եւ:

Առ լուս թի, բնակեա թե՛կ շերճ, սակա-
մարդեր ին պարզա՞ պահանջման
թի գորովո՞:

Առնայ, բնակեա թե՛կ շերճ, որ օճախ
առանձիւն թի անց, բայ առաջ և բարձրացած
երրորդ թօ տուրան պահանջման ինչու ասու

Թե՛կ թարի թե՛կ թի պահ տանի
զնուրեր և անցամ թի Տաճառի առ
տակ պահանջման պարզութիւն:

Հանգար որ ուսուց առաջի երաշանը
և լուս առաջի երջ, հետ երերդ, երրորդ,
և այդպիս բնակեա թի առաջանութիւն առանձ,
որ երրեր անհանջիւն օճախանջման առաջ:
Հանգար երաշան առաջութիւնների ամենամայ
կրուց Երա ծարժանութիւն: Տաճ լուս առ թի զնուր
զնուր: Թի ծայ, Թի առաջ թի բարձրացած որ
բարձր առաջ առաջան, հանգար առ թի
երերդ թօն: Կրուց Թի առաջ օճախ թօ
անցամ: Բայ կրայի առաջ առաջ Թի լուս
թի առաջան բարձր երջ, այդ այս և
ուժու, որ օճախ լեցաւատա, նաև այս
ամաց առանց կարութիւն ինչու: Թի հետ
հանգար անձ թի լուս թի և լուս թի առա
ջաներ, որին հետ արյան երանիթի Տաճ և
կրուց: Առաջանութիւն, առաջանութիւն...

Թի գայ առաջանութիւն գայ գայ երաց
իրեն կամ առաջ առաջ թի թի թի
տեղ գետի թօ: Առ անու 4-5 դրահ, որտեղ իր-
եց արյան տերեր, թի զարշ: Տաճառի -
շերժ թի երեան թի պահանջման առաջան
փորերով և զարդար գայ գետերով:

Երեր զնուր - Առաջանութիւն, պահանջման
և պահանջման - Թի օճախ ծարժան զնուր-
յի, այդպիս առաջ առաջ օճախ շերժի և
Տաճառի թի բնակեա պահ պահ առաջ: Պահ-
անջման հայ դրահ ասկան պահանջման զնուր-
յի պահ ամբողջութիւն Տաճառի թի
անցութեա, այդպիս այսուհետ թի թի հա-
խարեան գույն և հանգար զայ եւսի յայ
հայրեան հարդ առաջ...

Այս ամիս հետո, երբ Թե՛կ դեռաճա-
կան թի թի թի թի թի առաջանութիւն, այս
զնուրեր տեղ անցամ շերժանակ գո-
ւելու: Խարեան զնուրերի (Առաջան, հայ այս) բնակեան պահութիւն, այս զնուրերուն
Թի շայ, Թի համան անցութիւն թի Թաճառի
կրուց պահանջման գույնից, ան-
հանացան թի երկր երես կրուց կարախանու

Ենոյ որ երեսան ոչ համան առա-
ջանեան Օպանակի գույնը: Երա թի առաջանութիւնը
հայրեան թի շայ անց գայ գայ թի առաջերը
կամ Տաճառի գույնը առաջ, թի առաջ իրեց յ
բայ զնուր, օճախ անցամ կրայի պահ պահ-
անջման ընթիւն և բնակեա անհանջմանը:

Կամաց գործերն այս գիշեր զառ քառակար հերակ օգոստիկին ամեն բնորդ. Երանել ըստ կերպ ենթի և զառան Օրի, վեցուհին քառին և հինգուհիներուն, թափաքին գործերի պատ:

Իսկ առաջնորդան, եղած զառ վայ բուհին քառակար, Օսմանցին ի յուր անընդ հարաւոր քառակար վիճակից այս, ինչ որ օրն այս վիճակից որ հարաւոր ուրիշ քառակարի: Ենի քառեր քառակար վիճակից բարձրացան և զառայ քառակար յուր առիտայ օհարեալ և զեղուհի տներու կարտ Ֆրեն և կաքի է: Բայս այս տիգ հանեակ քառակար, որպիտ և նա Թի ձանու հետաշխարհակ մերս է: Այսօր կրօնի վիճակի շուրջ բարձրացան:

X.

ՅԱՀԵՐ ՓԱՇԱՅՔԻ ԶԵՐՈՒԹՅԸ

Վիւս օր Տայեթերի 15-ին Ֆր, Ֆի կայզան, որ օր Գևորգ Մատ առաջարյանք և աշխարհերարյանք: Անելու առաջ ընթառ Էր Հայկական քաջոր, որ կայ Բարքը ամենա-առաջն իշխու շշրան: Երան Յո վիճակից այս օր առաջ գնայ և անելու առաջ թշնամ ինչ ըսկարժեան քայորիք: Անա և մերժի բայ- տերը, որու հետեւան Տեսարին գերան ուներ, պահեան շորժո, իսկ Աւարդերի վրա Բարձրա- չերը (բառուրայտը) թնաշնարչերի թերաները

ուղղած թշնամու կողմը, որը բոնել էր լայնա- տարած, իւր եզերքից դուրս եկած Մարիցայի ափը, Մերհամլու գիւղի մօտ: Հայկական վաշտը Անդրանիկի և Գարեգինի առաջնորդութեամբ առանց երկիւղի և նոյնիսկ թագնւելու նախա- գուշութիւնների առաջ սլացաւ դէպի թշնամին, նպատակ գնելով կտրուկ շարժումներով ստիպել նրան կամ անձնատուր լինել և կամ ընդունել կոիւր: Այդպէս էր ծրագիրը, և հայ վաշտն իրա- գործում էր այդ արագ և աներկիւղ: Շուտով նա այնքան առաջացաւ, որ բոլորովին զատւեց գլխաւոր ոյժերից, այնպէս որ հարկ եղաւ նրան նշաններով ստիպել, որ կանգնի. բայց փողի ձայնը (որ փշում էր ինքը բրիգադայի հրամա- նատար Պրոտոգերովը՝ սիգնալիստի շրթունքը ճաքած լինելու պատճառով) չէր հասնում տղա- ներին, և նրանք գնում էին ու գնում դէպի թշնամու դիրքերը: Երկիւղ կար, որ թշնամին թնդանոթների կրակով կոչնչացնի Հայկական վաշտը:

Սակայն հայերը շուտով մտան ձորի մէջ և պաշտպանւած էին արդէն թնդանոթային կրա- կից: Նրանց կտրիճ և վճռական քայլը ազդեց գեռ տատանւող թշնամու վրայ, որ մնացել էր մի կողմից անանցանելի, սաստիկ վարարած Մա- րիցա գետի մէջ, միւս կողմից շրջապատւած էր կամաւորների յանդուղն խմբերով, որոնք աւելի պատրաստ էին կուելու մինչև արեան վերջին կաթիլը, քան հնարաւորութիւն տալու թշնամուն

գուրս գալու այդ ծուղակից։ Ուստի նա աւելի խելացի համարեց անձնատուր լինել, փրկել իւր կեանքը, քան շարունակել կոիւր։

Երկուս ու կէս ժամ տևեց թշնամի բանակի մեր առաջով անցնելը—10 հազար զինւոր, 242 սպայ, երեք գնդապետ և մէկ փաշայ։ Մէհմէդ-եավեր կրոջալեցու առաջնորդութեամբ նրանք շարան-շարան, կարգով անցան մեր առաջից, ճանապարհուելով դէպի Փերեջիկ քաղաքը, որտեղից պէտք է «եսիր» գնային Բուլղարիա։

Ասում են, թէ Եավեր փաշան ստիպւած է եղել անձնատուր լինել գլխաւորապէս այն պատճառով, որ գոնէ իրաւունք ունենայ գերի բռնըւելու դէպքում կենդանի մնացածների անձեռնմխելութեան վրայ, որովհետեւ կամաւորներին «բաշիրոգուկ» համարելով՝ կարծում էր, թէ նրանք կը կոտորեն կենդանի մնացածներին։ Այդ նոյն պատճառով նրա պայմաններից մէկն էլ այն էր, որ նրան մինչև գերութեան վայրն ուղեկցեն անպատճառ կանոնաւոր զօրքերը և ոչ կամաւորները…

Երբ շատերը զարմացած հարցըել են նրան։ թէ ինչու նա այդքան զօրքով և թնդանօթներով անձնատուր է եղել, բարի Եավեր փաշան պատասխանել է. «Պալդա գենիզ, գաբաղդա գօնդուզ», նա եափալլմ, — «յետեիցս ծովը, առաջիցս «խոզերը» (կամաւորները) — ինչ անեմ»…

Տաճիկ բանակը գերի բռնւած գնաց դէպի Բուլղարիա, իսկ մենք Երաժշտութիւնով և Եր-

գերով վերադարձանք Քիւչուկ-Վակը գիւղը, ուր երկու օր հանգիստ պէտք է առնէինք։

XI.

ՔԵՇԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Քիւչուկ-Վակը գիւղում երկու օր հանգրատանալուց յետոյ մենք շարունակեցինք մեր ճանապարհը դէպի Դիմուիկա։ Դեռ հաստատ յայտնի չէր, թէ այնաեղից դէպի ուր պէտքէ գնանք, արգեօք դէպի Անդրիանօպոլիս՝ պաշարած զօրքերին օգնութեան, թէ դէպի ուրիշ կողմ։ Զանազան ենթադրութիւններ էին արւում, սակայն ճշմարտութիւնն այն էր, որ շատ արագ էինք քայլում։ Անցնում էինք մինչև հիմքը աւելուած գիւղերով։ Հարևան յոյն գիւղերի բնակիչներն այդ գիւղերից սայլերով կրում էին ամեն ինչ, մինչև անգամ հրդեհից մնացած փայտեղէնը և պատերի քարերը… Մեծ քաղաք միայն Սովուն էր, ուր մնացինք մի գիշեր յոյների աներում, բայց առհասարակ ժամանակ չունեցանք քաղաքը տեսնելու, որովհետեւ անձրև էր գալիս և սաստիկ ցեխ էր փողոցներում։

Երկաթուղու գծի վրայ գտնւող Դիմուիկա քաղաքը չմտանք, որովհետեւ խոլերա կար այնտեղ, այլ անցանք մօտովը և շարունակեցինք մեր ճանապարհը դէպի Ուզուն-Քեօպրու և Քեշան։ Այդ էր Դիմուիկայում ստացած վերջին հրամանը։

Ամեն օր անձրև էր գալիս և մեզ լաւ թրջում: Զինորներից շատերը քայլում էին ոտաքորիկ, որովհետեւ երկար ճանապարհից և ցեխից տրեխները վաղուց փչացել էին, իսկ նորերը որտեղից պէտք է ստանային:

Շատ խղճուկ տեսարան էր ներկայացնում մեր ամբողջ բրիգադան այդ ժամանակ. մինչեւ անգամ հացն էլ չէր կանոնաւոր ստացւում և շատ անգամ կէս հացով էինք անցկացնում օրը: Մակայն բոլորն անտրտունջ տանում էին այդ նեղութիւնները, որ մէկ չէին, երկուս չէին, այլ անթիւ, անհամար: Անձրևի տակ, ցեխի մէջ, ոտաքորիկ, առանց վերմակների, մէկը ձմեռուայ հագուստով, միւսը նոյնիսկ ամառուայ, փամփուշտների, ուռմբների և ծանր Մանլիխներեան հրացանի բեռան տակ քայլում էին կամաւորները ամբողջ օրեր առանց հանգստութեան, առանց կանոնաւոր սննդի. իսկ տաք կերակուր վաղուց էր որ չէին տեսել...

Վերջապէս, նոյեմբերի 23-ին, մի սաստիկ անձրևոտ օր, հասանք Քեշան քաղաքը, ուր հազարաւոր տաճիկների և յոյների մէջ կային և 18 հայ ընտանիքներ: Շուկան թալանւած և վառւած էր և որ ամենից ուշագրաւն է, թալանւած էին մեծ մասամբ հայերի խանութները, այն էլ ում կողմից—հենց իրենց հարեան «բարի» յոյների կողմից...

Քեշանում երկար մնացինք, և որովհետեւ քաղաքում խոլերա և որովայնատիք հիւանդու-

թիւններ կային, ուստի մեր բիրգադային յանձնը թէ քաղաքի պահպանութիւնը և թէ նրա առողջապահական դրութեան հսկողութիւնը: Անտանելի էին տաճիկների դարերով կուտակած աղտոտութիւններն այդ քաղաքում:

Կարճ ժամանակում, շնորհիւ ձեռք առնւած կտրուկ և գործնական միջոցների, քաղաքը մաքրւեց և ընդունեց վայելուչ տեսք: Զինուրներին կեղսոտ թաղերից փոխադրեցինք աւելի մաքուր թաղեր, և կարելի է ասել, տղերքը մի քիչ հանգիստ առան և կազդուրեցին իրենց սպառած ոյժերը:

Իւրաքանչյուր վաշտ մի օր պահպանութիւն էր կատարում քաղաքում: Երբ հերթը հասաւ հայ տղերանց, նրանք այնպիսի հմտութեամբ և կանոնաւորութեամբ կատարեցին իրենց գործը, որ բոլոր զօրավարների ուշագրութիւնը գրաւեցին իրենց վրայ և արժանացան բացարձակ գովասանքների կոմանդանտի և ուրիշ սպաների կողմից:

Ես ինքս անձամբ եմ լսել շատ բարձրաստիճան սպաների գովասանքը նրանց վարժ և գեղեցիկ զինուորական գործելակերպի մասին, չնայած որ բուլղարերէն չէին իմանում:

Քեշանում, պարապ չմնալու համար հրամայւեց, որ գնդերն ամեն օր դուրս գան և քաղաքի մօտակայքում զինավարժութիւններ կատարեն: Հայերն էլ Գարեգինի առաջնորդութեամբ առաւտեան և կէսօրից յետոյ գնում

էին հրացանաձգութիւն և ուրիշ վարժութիւններ անում: Մէկ օր էլ ամբողջ զրուժինան միասին փորձնական պատերազմ խաղաց երկու բանակի բաժանուելով. հայերը պէտք է յարձակւէին բլուրի վրայ և այստեղ հաստատւած թշնամուն դանակներով գուրս քշէին դիրքերից...

Քեշանում մեր գնդին միացան 25—30 նորեկ կամաւորներ, գլխաւորապէս Ռուսաստանից: Նրանց գալով վաշտի կամաւորների թիւն աւելի ևս մեծացաւ:

Նրանց հետ միասին եկել էին 30—35 ռուս կամաւորներ, մեծ մասամբ տներից փախած աշակերտներ, կատարեալ երեխաններ: Բացի դրանցից նաև ուրիշ երկու հոգի, որոցից մէկը պող-պորուչիկ՝ Սիրիրէ զօրքերից, միւսը աւագ ենթասպայ:

Մեր կեանքի մէջ որևէ փոփոխութիւն մտցրած լինելու համար հրամանատարը հրամայեց բրիգադայի ինտելլիգենտ և ընդունակ ոյժերին մի երեկոյթ սարքել:

Եւ արդարեւ, գտնւեցին ամեն տեսակ ընդունակութեան տէր մարզիկ: Երեկոյթը շուտով վլուխ եկաւ, որին ներկայ եղան գեներալը և բոլոր սպաները: Ռուսները քառաձայն երգեցիկ խումբ կազմեցին և երգեցին շատ ոռւսական երգեր բաւական ներդաշնակ և գեղեցիկ, նոյնպէս պարեցին ռուս ժողովրդական պարեր: Բուշպարները զանազան ռատանաւորներ արտասանեցին և ծիծաղաշարժ անեկոտներ պատմեցին:

Հայերն էլ երեկոյթին մի փոքրիկ մասնակցութիւն ցոյց տւին. երկու տղայ դուրս էին եկել պարելու զանազան քրդական պարեր, իսկ երրորդը նւազում էր նոյն պարերի եղանակը դուդուկի վրայ: Պարողներից մէկը՝ Բալըշին, որ տաճկահայաստանցի էր և ձկնորսութեամբ էր պարապում, մի միջահասակ, գեղնած դէմքով, մեծ քթով և սև ու մեծ-մեծ աչքերով տղայ էր, խիստ շարժուն դիմագծերով: Ամբողջ գնդի սիրելին էր. նա էր գնդի «քեօսագեալդին», տխուր ըովէներին գնդին ուրախ տրամադրութիւն պատճառողը: Նա ուրախացնում էր միայն ու միայն իւր հումորիստական պարերով: Այժմ էլ դուրս եկաւ թէ չէ, բոլոր սպաները ծիծաղութուլցան: Մեծ փափախը մինչև ականջները խրած, ոտքերը ծռած դէպի հակառակ կողմեր, մէջքը կուզ շինած, փորին կապած տաճկական լայն գօտին, որի ծալքերի մէջ խրել էր մի մեծ դամա (երկար կոթով դաշոյն): Բալըշին պարում էր ծամածութիւններ անելով իւր սև աչքերով, երեսի բոլոր գծերով և մկաններով, ներքեն շրթունքը կախ տւած: Բալըշին պարում էր այնպէս սահուն, այնպէս թեթև, որ կարծես յատակին չէր կաչում. նա պարում էր իսակացնելով իւր մարմնի բոլոր մկանները այնպէս վարպետօրէն և միւնոյն ժամանակ այնքան ծիծաղելի կերպով, որ նայողները ակամայ և զարմանում և ծիծաղում, զւարձանում էին:

Շատ եմ տեսել ձկուն մարմնով պարողներ,

բայց Բալըշին բոլորին էլ գերազանցում էր։ Յանկարծ նա հանեց դաշոյնը և սկսեց նրանով պարել՝ մերթ ընդ մերթ վախեցնելով իւր հակառակորդին։

Բոլորին շատ դուր եկաւ Բալըշու «համարը», այնպէս որ նա երկար ծափահարութիւնների արժանացաւ ներկայ եղող սպաների կողմից (երեկոյթը տրւում էր միմիայն սպաների համար, զինւորներ չկային)։

Մինչդեռ մենք այդպէս անց էինք կացնում մեր օրերը Քեշանում, Անդրանիկը իւր անբաժան բարեկամ և հին ընկեր սրճարանապետ Ղուկաս Մինասեանի հետ գնաց Մալգարա քաղաքը, ուր մեծ հայկական գաղութ կար, և այնտեղից տղաների համար ընծաներ ուղարկեց. շորեղէն, ծխախոտ, ոտնամաններ և այլն։

Մի քանի օրից յետոյ ինքն էլ եկաւ, բայց էլի շուտով գնաց, այս անգամ Մալգարայից Ռուբոսթօ անցնելու, այստեղի հարուստ հայ գաղութն էլ այցելելու և տղաների համար անհրաժեշտ իրերի հոգացողութիւնն անելու։

XII.

ՄԱԼԳԱՐԱ - ՄԱՐՄԱՐԱ ԾՈՎ

Անգործութիւնն արդէն սկսել էր զգալի գառնալ տղերանց համար, որոնք իբրև երիտասարդ և եռանդով լի տղամարդիկ, շատ շուտով ձանձրանում էին հանգիստ և պարապ կեանքից։

Բարեբախտաբար հենց լաւ ժամանակին հրաման եկաւ, որ գնանք Մարմարայի ծովափը պահպանելու, որովհետև ենթադրութիւն կար, թէ շուտով կարող են պատերազմական գործողութիւնները նորոգւել և թշնամին զօրք կը հանի այդ ափերը։

Դեկտեմբերի 13-ն էր, երբ վաղ առաւօտեան դուրս եկանք Քեշանից և խճուղիով ուղղւեցինք դէպի Մալգարա քաղաքը։

Որովհետև մեր գնացքը խաղաղ նպաստակով և խաղաղ ժամանակ էր կատարւում, ուստի նկարագրութեան համար մի առանձին հետաքրքրութիւն չի ներկայացնում, մանաւանդ որ, բարեբախտաբար, ճանապարհին ոչ մի միջնադէպ տեղի չունեցաւ։

Միակ հետաքրքիր բանը Մալգարա քաղաքով անցնելն էր, ուր խոլերայի պատճառով հրամայւած էր անցնել քաղաքի միջով առանց կանգ առնելու և շուկայից առանց որևէ ուտելու բան գնելու։

Ամբողջ հայ գաղութը քաղաքից դուրս երկար ժամերով Հայկական վաշտի գալստեանն էր սպասում։ Կանայք, երեխայք բոլորն էլ դուրս էին թափւել փողոց՝ տեսնելու վաշտը, որ դրօշակը լայն պարզած՝ փառաւոր կերպով քաղաք մտաւ և քաղցրանչիւն երգերով անցաւ հայոց թաղով։ Քաղաքից դուրս միայն Հայկական վաշտին թոյլատրւեց մնալ մի ժամւայ չափ հանգըստանալու և ազգակիցների կարօտն առնելու։

XIII.

ՊԱՆԱԳՈՍ ԳԻՒՂՈՒՄ

Ինչպէս վերև ասացինք, Պանագոսը յունական գիւղ է և գտնւում է Ռոդոսթոյից 8 քիլոմետր հեռաւորութեան վրայ: Մարմարա ծովի ջինջ ալիքները մեղմիւ զարնւում էին աւազոտ ափերին, որոնք ծածկւած են գոյնզգոյն փոքրիկ գեղեցիկ քարերով: Տեսարանը գեղեցիկ էր, օդը մեղմ, ջուրը քաղցր, գինին առատ և համարեած ձրի. ահա այսպիսի անլիին էր Պանագոս գիւղը:

Տղերանց կեանքն էլ զգալի կերպով փոխւեց գէպի լաւը: Սնունդը լաւացաւ, կանոնաւորւեց. օրական երկու անգամ տաք կերպակուր, հացը միշտ առատ և լաւ, տօն օրերին էլ գինի: Որ ամենագիշաւորն է, հասաւ և հագուստեղէնը. ոռոսաց «Կարմիր խաչից» ստացւեցին վերակուներ և տրեխներ՝ լաւ ամուր կաշուց կարած, սպիտակեղէն և այլն, այնպէս որ տղերքն ամենքն էլ արդէն զինւորական համազգեստ ունէին և իսկական զինւորներից ոչնչով չէին տարբերւում, բացի իրենց ու զինարկներից և պղնձէ նշանից, որ պատկերացնում էր բուլղարական առիւծը ազատութեան դրօշակը ձեռքին, որի ծայրին գտնւում էր խաչը, իսկ առիւծի ոտքերի տակ ընկած էր կիսալուսինը:

Տղերքն ամեն օր շարունակում էին իրենց վարժութիւնները Մարմարայի ծովափին, իսկ իրենց հերթը հասած օրը ծովափի պահպանու-

Տիկնայք և օրիորդներ ծաղիկներով զարդարեցին հրամանատարի և զինւորների կը ծքերը՝ իրենց ուրախութիւնն արտայայտելով նըանց տեսնելուն համար: Ճառեր և բարեմաղթութիւններ արտասանւեցին երկու կողմից էլ, մինչև որ որոշւած ժամն անցաւ և տղերքը նորից շարունակեցին քայլել Ռոդոսթոյի խճուղիով դէպի Մարմարայի ծովափի:

Միւս օրը երեկոյեան հասանք մեզ համար որոշւած տեղը՝ յունական Պանագոս գիւղը, Մարմարա ծովի ափին, ուր յոյները աղ ու հացով դիմաւորեցին զօրքին և բնակարաններ յատկացրին բոլոր զինւորներին: Թէև ընդունելութիւնը սրտանց չէր, այնուամենայնիւ մենք շատ գոն էինք, որ հասանք այդ գեղեցիկ ծովափի, որ հարուստ էր հիանալի օղով և մթերաշատ գիւղերով, ուր կար մանաւանդ զինու անսպառ պաշար:

Այդպէս ուրեմն, գեկտեմբերի 15-ին Հայկական վաշտը հաստատւեց ծովափինեայ Պանագոս յոյն գիւղում, մոռացութեան տալով իւր մինչև այդտեղ կրած բոլոր զրկանքներն ու նեղութիւնները, որովհետեւ այժմ նրա առաջ բացւում էր ծովափինեայ առատ և քաղցր կեանքը՝ լի ամեն տեսակ յարմարութիւններով և յիշորութիւններով:

թիւնն էին կատարում: Քացի սովորական պարագմունքներից ամրացնում էին ծռվափը՝ դեսանտի ժամանակ թշնամուն կատաղի դիմադրութիւն ցոյց տալու համար: Մի որոշ տարածութիւն էլ յահճուած էր հայերին, որ ամրացնեն փոսեր, խրամատներ (տրանշէյներ) և օկոպներ փորելով:

Որովհետեւ Թողոսթօն շատ մօտ էր մեզ, ուստի հրամանատարների հրամաններով զինւորներից շատերին թոյլատրում էր կարճ ժամանակով գնալ քաղաք: Քաղաքացի հայերն էլ երբեմն-երբեմն վաշտին հիւր էին գալիս: Նրանք ուրիշ քաղաքների օրինակով ուղարկեցին ծխախոտ, ձերմակեղեն, ոտնամաններ:

Թողոսթոյի առաջնորդ Գէորգ ծ. վ. Ասլանեանը հիւր եկաւ Պանադոս և այցելեց բրիգադայի հրամանատար Պրոտոգերովին, որի վրայ նա շատ լաւ տպաւորութիւն թողեց իւր անկեղծութեամբ և խելացիութեամբ: Հայր սուրբը ինքն էլ շատ գոհ մնաց համակրելի և քաղաքավարի Պրոտոգերովից, որը մեծ յարգանք և պատկառանք ցոյց տւեց դէպի հայերի հոգեոր պետը: Իսկ երբ հայր սուրբը ճանապարհուեց դէպի Թողոսթօ, Պրոտոգերովը հրամայեց, որ ամբողջ Հայկական վաշտը սպառագինւած և պատերազմական կատարեալ կարգով շարւի գիւղից դուրս ճանապարհի վրայ և հայր սուրբին զինւորական պատիւներ տայ:

Հայր սուրբը չափազանց զգացւեց, մինչև

իսկ արտասւեց, երբ իւր մօտենալուն պէս հնչեցին Գարեգինի հայկական հրամանները, որոնց հետևեցին տղաների վարժւած և զեղեցիկ գործողութիւնները հրացանի հետ, յետոյ միահմուռ պատասխանեցին հայր սուրբի բարեկին և լուռ պատկառանքով լսեցին նրա ոգեսրւած և ազգութակերը: Իւր կարճ ճառի վերջում նա իւր գոհունակութիւնը և ուրախութիւնը յայտնեց, աւելացնելով, թէ ամեն կողմից գովասանքներ է լսում տղաների մասին և հպարտանում է դրանով: Օրհնեց նրանց, յաջողութիւն և առողջութիւն ցանկացաւ և, վերջապէս, իւր շնորհակալութիւնը յայտնելով տւած պատիւների համար, կառք նստեց և հեռացաւ: Իսկ տղերքը ուրախ և գլարթ մտան զիւղը և ցրւեցին իրենց տները:

Հայր սուրբը մէկ անգամ էլ այցելեց Պանադոս գիւղը. այս անգամ արդէն եկել էր քաղաքի հայութեան կողմից Ծննդեան տօնի օրւայ համար հրաւիրելու ամբողջ Հայկական վաշտին իւր կազմով, նոյնպէս երրորդ բրիգադայի հրամանատար Պրոտոգերովին իւր ամբողջ շտաբով և տամներկուերորդ գրութիւնայի հրամանատարին իւր աղիւտանտով:

Բոլորն էլ ուրախութեամբ ընդունեցին Թողոսթոյի հայ հասարակութեան հրաւերը և խոստացան անպատճառ ներկայ լինել յունւարի 6-ի տօնին հայոց եկեղեցում:

Այդ օրը հայր սուրբի հետ նկարւեցինք ամբողջ վաշտով և վերև թւած իշխանաւոր անձ-

նաւորութիւններով։ Հայր սուրբը նոյնպիսի փառքով ու պատով ճանապարհ գցւեց Ռողոսթօ, ինչպէս առաջին անգամ, տանելով իւր սրտի մէջ անջնջելի տպաւորութիւններ և յիշողութիւններ։

Տղերը սկսեցին պատրաստել քաղաք գնալու համար և անհամբերութեամբ սպասում էին այդ օրւան։ Որովհետև տօները հետևում էին մէկը միւսին, ուստի չնկատեցինք էլ, թէ ինչպէս անցան օրերը և հասաւ յունտարի 5-ը։ Այդ օրը բրիգադայի հրամանատարը նախօրօք հրահանգեց, թէ որ ժամին պէտք է դուրս ելնենք գիւղից, որպէսզի ժամանակին համենք ու պատրագին, և առաջուց կարգադրեց բոլոր մանրամասնութիւնները և անելիքները յաջորդ օրւայ մասին։ Նրա այդպիսի ուշադրութիւնը չվրիպեց հայերիս աչքից։

XIV.

ՌՈԴՈՍԹՈՅԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԻՒՐ

Միւս առաւտեան տեսանք, որ գիշերը սաստիկ անձրեւ է եկել, որից սարսափելի ցեխ էր գոյացել։ Անձրեւ կամաց-կամաց շարունակում էր գալ բայց ի հարկէ այդ հանգամանքը չըխանգարեց մեր գնալուն, միայն թէ զգալի կերպով վնասեց և փոխեց տղերանց տրամադրութիւնը։ Բայց դրա փոխարէն մի ուրիշ սիւրպը էր սպասում նրանց. երեկոյեան ստացւել էին

«Քաջուրեան խաչերը» զինւորներին բաժանելու համար։ Հրամանատարը հայերի խաչերը վերցրեց Ռողոսթոյի եկեղեցու բակում ժողովրդի ներկայութեամբ բաժանելու։

Մինչդեռ զինւորները ցեխերի միջով կը շտապեն դէպի քաղաք, մենք առիթից օգտւենք և մի քանի խօսք ասենք Ռողոսթոյի հայ գաղութի մասին։ Ռողոսթոյում կայ 15—16 հազար հայ բնակչութիւն, որը պարապում է թէ առևտով, թէ արհեստներով և թէ երկրագործութեամբ։ Շատ աշխատասէր և նահապետական բարքերով ապլող համեստ և պարկեշտ ժողովուրդ է Ռողոսթոյի հայ հասարակութիւնը։ Իւր դրացիների՝ տաճիկների և յոյների հետ հայն ապրում է համերաշխ, թէև յոյները իրենց ի բնէ նախանձու և խարդախ բնաւորութեամբ ամեն կերպ աշխատում են հայերին վխասել, ուր որ կարող են, ուր որ ձեռքները համում են. մի տեսակ թշնամութիւն, մի տեսակ ատելութիւն և մրցակութիւն կայ այդ երկու հասարակութիւնների մէջ։ Այդ բանը նկատում էին նոյնպէս բուլղարները իրենց կարճ տիրապետութեան ժամանակ։

Բայց մըթէ կարող է հայկի պարզամիտ և դիւրահաւատ զաւակը մրցել խորամանկ Ողիսևի ազգակիցների հետ, կամ հաւասարել նրանց, որոնք կանգ չեն առնում ոչ մի մեքենայութեան, ոչ մի հնարագիտութեան և ոչ մի նենգութեան առաջ։

Զէ՞ որ նրանք ընդունակ են նոյնիսկ աղօթ-
քի, զոհաբերութեան ժամանակ էլ որև է խար-
դախութիւն կամ թակարդ սարքելու:

Դեռ վաղուց է ասել դժբախտ Լաօկօօնը.
„Timeo Danaos et dona ferentes!“*)

Բայց վաղ թէ ուշ, երբ հայերի հետ ծանօ-
թանում են մօտիկից, բոլորն էլ մնում են հիա-
ցած նրանց չափազանց հիւրասիրութիւնից,
նրանց պարկեշտ և նահապետական-ընտանեկան
կեանքից, նրանց ամեն մի զոհողութիւն յանձն
առնելու պատրաստականութիւնից և նրանց
անկեղծ վերաբերմունքից դէպի իրենց բարեկամ
ազգերը:

Խեղճ հայ, ամեն տեղ էլ նա պատրաստ է
իւր հոգին տալու իւր հարևանների և բարեկամ-
ների համար, բայց որովհետեւ անընդունակ է
շողոքորթելու, քծնելու, հրաժարւելու իւր պատ-
րաւոր և բարոյական կեանքի մաքուր սկզբունք-
ներից, միշտ մնում է յետ ընկած և միշտ կը-
րում է ամեն տեսակ դառնութիւններ, մինչև որ
մի արտասովոր երեսյթ գայ և պարզ կերպով
ապացուցի մոլորւած ժողովուրդներին, թէ որն է
բարեկամը և որն է նինդամիտ թշնամին, ինչ-
պէս իրենց կաշու վրայ փորձեցին և համոզւե-
ցին բուլղարները յոյների վերաբերմամբ, բայց
աւաղ, շատ ուշ... Քաղցրալեզու, խորամանկ
յոյներն ամեն կերպ, նոյնիսկ իրենց գեղե-

ցիկ կանանց և աղջկերանց միջոցով գրաւել,
կախարդել էին միամիտ, „հաստագլուխ“ բուլ-
ղարներին—ինչպէս կոչում էին նրանք վերջին-
ներիս—և իմացել ամեն գաղտնիք, ամեն մտա-
դրութիւն...

Բուլղար կառավարութիւնը շատ լաւ էր
վերաբերում դէպի հայերը, չափազանց գնահա-
տելով նրանց ծառայութիւնները և նշանակու-
թիւնը՝ ապագայ տնտեսական-կուլտուրական մա-
քառման ժամանակ յոյն տարրի դէմ պատճէշ ծա-
ռայեցնելու համար: Հայերն էլ մէկի փոխարէն-
տասն էին հատուցանում, հաւատարմութեամբ
և անկեղծութեամբ վերաբերւելով դէպի նրանց:

Որդոսթոյի հայ գաղութը կարելի է հարուստ-
համարել, որովհետեւ երկիրը շատ առատ է և
պտղատու, արհեստներն էլ զարգացած:

Որդոսթոյի հոգեոր իշխանութիւնն էլ բա-
ւական հարուստ է, ունի լաւ և բազմաթիւ ար-
դիւնաւէտ տներ քաղաքի կենտրոնում, որոնք
մայր եկեղեցու սեպհականութիւնն են կազմում
և նւիրաբերւած են Քրիստոսի բևեռներից մէ-
կին, որ գտնուում է մայր եկեղեցում և պահ-
ուում է առանձին խորանի մէջ՝ զարդարւած
թանկագին քարերով: Դա գուրս է բերւում որոշ
ժամանակներ հեռու երկրներից ուխտ եկողների
համար: Մենք էլ փոխականապետ Պրոտոգերովի-
նետ անձամբ տեսանք և դիտեցինք այդ բևեռը:
Դա Որդոսթոյի համար, յամենայն դէպս, հարատու-
թեան մի անսպառ աղբիւր է:

*) Երկիւղ եմ կրում գանայեցիներից (յոյներից) նոյնիսկ եթք
նրանք զոհ են մատուցանում:

Արդէն մօտեցել էինք քաղաքին: Վերջին
անգամ աղերքը քիչ հանգիստ առան և կարգով
շարւած ուղղեցին դէպի քաղաք: Ամենից առաջ
ձիի վրայ գնում էր փոխ-գնդապետ Պրոտոգե-
րովը իւր շտաբով, հետոն էլ Անդրանիկը մի հիա-
նալի արաբական նժոյզի վրայ նատած: Զին ամ-
բողջ ժամանակ խաղում, պարում էր իւր տիրոջ
տակ: Շտաբից յետոյ անմիջապէս գալիս էր
վաշտը՝ իւր լայն պարզած գրօշակներով, առաջ-
նորդութեամբ իւր հրամանատարի, որը սուրը
հանած քայլում էր ամենքի առաջին: Տղերքը
գնում էին ծանր, զինւորական հաստատ քայլե-
րով, երկար, անվերջ շարքերով: Նրանց թիւն
արդէն 270-ից անց էր:

Քաղաքի սահմանագծի վրայ խուռն բազմու-
թիւն էր սպասում մեզ մի նւազախմբով, որը
կազմել էին Ռոգոսթոյի հայերը և համերգներ
էին տալիս կամ նուազում էին խնջոյքներում և
հարսանիքներում:

Վաշտը մօտենալուն պէս նւազախմումը
հնչեցրեց բուլղարական հիմնը՝ «Շումի, Մարի-
ցա»-ն, որը հասարակութեան կողմից ընդունեց
որոտընդուստ ուսաներով և ծափահարութիւննե-
րով:

Հիմնից անմիջապէս յետոյ երաժշտախումբը
նւազեց «Մեր Հայրենիք» մարշը, որի միջոցին
փողոցում երկշար կանգնած և երկար, գեղեցիկ
մազերը ուսներին փուած մօտ քսան սպիտակա-
զգեստ փոքրիկ աղջիկների մօտեցան և ծաղկե-

փնջեր մատուցին Պրոտոգերովին, Անդրանի-
կին, շտաբի անդամներին, Գարեգինին և ծաղկե-
ներով զարդարեցին զինւորների կրծքերն ու
դրօշակը:

Ժողովուրդը ծափահարում, ուռա էր կան-
չում անդադար լուսամուտներից և պաշտամբ-
ներից աիկիններ և օրիորդներ ծաղկեներ և
անուշահոտ հեղուկներ էին թափում ներքեով
անցնող սպաների և վաշտի վրայ:

Զնայած վատ եղանակին, ամբողջ հայ գա-
գութը հաւաքւել կիտւել էր փողոցների մէջ
քաղաքի: մի ծայրից մինչև մայր եկեղեցին, ուր,
ինչպէս որոշւած էր, ուղղակի պէտք է դիմէինք
ս. պատարագին ներկայ գտնուելու: Կեցցէների,
ուսաների, ծափահարութիւնների, ծաղկեների և
անուշահոտ հեղուկների անձրեկ տակ, երաժշտու-
թեան անընդհատ նւազածութիւնով մենք մի
կերպ վերջապէս հասանք մայր եկեղեցու ընդար-
ձակ գաւիթը, միշտ առաջնորդ ունենալով հրեշ-
տականման սպիտակազգեստ աղջիկներին, այդ
գեղեցիկ և անմեղ քերովեէներին: Գաւիթը լիքն
էր ահազին բազմութիւնով, որը պատկառանքով
ճանապարհ բացեց իշխանաւորների և վաշտի
առաջ և ազահ հայեացքներով ուղեկցեց մինչև
եկեղեցու ներսը: Այստեղ առանձին տեղ էր
պատրաստւած փոխ-գնդապետ Պրոտոգերովին,
Անդրանիկի և բրիգադայի բժշկի համար, ծախ-
կողմում սեղանի մօտ դրւած էին բազկաթոռ-
ներ: Վաշտը տեղաւորւեց աջ կողմում, իսկ գրօ-

շակները դրւեցին սեղանի առաջ։ Պատարագիչն ինքը հայր-սուրբն էր, որ մեծ դժւարութեամբ էր կարողանում առաջ տանել իւր գործը, որով հետև ժողովրդի ահազին, հոծ բազմութիւնը ուշքն ու միտքը վաշտի վրայ դարձրած, չէր կարողանում հարկաւոր խաղաղութիւնը, լուսութիւնը և լրջութիւնը պահպանել և ըստ երեսութին քիչ էր արամագիր հետևելու ժամասացութեանը։

Վերջապէս ջուրը օրհնւեց և եկեղեցական արարողութիւնը վերջացաւ։ Մինչդեռ պատարագիչը պատրաստում էր սեղանից իջնելու, պողպուշիկ Գարեգինը թոյլտութիւն խնդրեց փոխ-գնդապետից և արտասանեց մի ոգեսրիչ, կրակոտ և զգացմունքով լի ճառ նախ հայերէն և ապա բուլղարերէն։

«Բուլղար և Մակեդոնացի եղբայրներ. Երբ մօտիկ անցեալում կարգում և լսում էի Մակեդոնիայում տեղի ունեցող մասսայական ջարդերի, քրիստոնէական բնակչութեան և ամբողջ գիւղերի մասսայական սիստեմատիկ կոտորածների և ոչնչացման մասին, երբ կարգում և լսում էի քրիստոնէական ինտելիգենցիայի դէմ մղւող վայրագ հալածանքների, մակեդոնացի ստրկի ամենատարրական իրաւունքների խախտման մասին դպրոցական և դատաստանական շրջաններում, երբ կարգում և լսում էի այդ դժբախտ և բազմաչարչար ժողովրդի պաշտպանների և բարեկամների մասսայական աքսորների

մասին,—նա, իմ սարկացրած և դժբախտ հայրենիքի՝ Տաճկա-Հայաստանի ողբերգական քոյրը— Մակեդոնիան իմ կրակոտ երկակայութեան մէջ պատկերանում էր որպէս մի ահազին Գողգոթա, որի բարձրութեան վրայ խաչւում էր Քրիստոս-ժողովուրդը, Մակեդոնական ժողովուրդը։

«Նա պատկերանում էր իմ երևակայութեան մէջ առանց արեգակի և առանց գալնան մի երկիր, արեան և արցունքի մի հովիտ, սգով պատած մի վայր, որը խորհրդաւոր կերպով մըմընջում է, թէ այնտեղ ժողովուրդն է տառապում և կուռմ արիւնուշտ սուլթանների ծանր լծի դէմ։

«Եւ այդ սուրբ պատկերը—խաչւած ժողովուրդը—ինձ դէպի իրեն էր քաշում, ինձ գրաւում էր. Իմ հովին ձգտում էր դէպի նրան, դէպի այդ ողբերգական ճակատագիր ունեցող ժողովուրդը։

«Այն, Մակեդոնացի եղբայրներ, այդ ողբերգական օրերին, կուի այդ սպասումի ժամանակ ես, ինչպէս և հայ ժողովուրդը, որ սիրում ենք Մակեդոնիան, նրա տանջանքները և նրա ապագայ ազատութիւնը,—մենք ձեզ հետ էինք մեր մտքերով, մենք ձեզ հետ էինք մեր զգացմունքներով։

«Մենք եղբայրներ էինք մեր դժբախտութիւններով, մենք եղբայրներ էինք մեր ցանկութիւններով։

«Մեր ժողովուրդները եղբայրացան տաճկական կախաղանների վրայ և տաճկական բանաե-

բում, եղբայրացան եղիլնէի (Ազրիանօպոլսի) կախաղանների վրայ: Յիշեցէք Մերջանովին և Պետօին:

«Խաղաղ թէ հալածական, մենք միշտ եղել ենք ձեզ հետ. մենք ձեզ հետ ենք և այժմ, կուի դաշտում. մենք կը մնանք ձեզ հետ նաև ձեր հայրենիքի բախտաւորութեան և ազատութեան ժամանակ:

«Թոյլ տւէք, եղբայրներ, յուսալու, որ Մակեդոնիայի ազատութիւնը կատարեալ է, որ նա միանգամ ընդմիշտ ազատուած է տաճկական ծանր լծի տակից և այսուհետև կապի ազատ և երջանիկ կեանքի քաղցր հրապոյրներով: Բայց թոյլ տւէք յուսալու, որ նա իւր երջանկութեան մէջ չի մոռանալ կարեկից լինելու իւր դեռևս դժբախտ քրոջը՝ Տաճկա-Հայաստանին և հարկաւոր դէպքում օգնութեան ձեռք կը կարկառէ նրան՝ տաճկական լծի տակից ազատւելու համար:

— Կեցցէ ազատ Մակեդոնիան:

— Թող փայլի խաչը, թող կորչի կիսալուսինը. թող կորչի Տաճկաստանը»:

Երբ հոետորը վերջացրեց իւր ճառը, բոլորն էլ խոր զգացւած՝ իրանց գոհութիւնն արտայայտեցին. աղջկերանց և տղերանց երգեցիկ խումբը երգեց մի քանի հայկական երգեր, որոնք առանձին բաւականութիւն պատճառեցին մեզ բոլորիս, որովհետև երգւում էին արտասովոր տրամադրութեան տակ և արտասովոր պարագաներում:

Դուրս ելանք եկեղեցուց: Բակում ամբողջ վաշտը կարգով շարւեց: Եկաւ և հայր-սուրբը պատարագչի զգեստով և կանգնեց վաշտի առաջ, առաջնորդարանի սանդուղքների մօտ: Ամեն աղգերից բաղկացած ահազին բաղմութիւնը լցրել էր մօտակայ փողոցները, լուսամուտները, պատշգամբները: Բոլորն էլ սրտատրով սպասում էին տեսնելու, թէ ինչով պիտի վերջանայ այդ Հայկական տօնը:

Երբ ամենքը լռեցին, փոխ-գնդապետ Պրոտոքերովը դաւանալով զինուրներին և ժողովրդին՝ բարձր ձայնով հետեւեալ խօսքերն արտասանեց:

«Այսօր, ձեր ամենամեծ տօնի օրը, ես այստեղ կը բաժանեմ «Քաջութեան խաչերը»: Դուք, հայեր, զուք բոլորդ էլ հերոսներ էիք և բոլորդ էլ կուսոմ էիք որպէս առիւծներ Ուզուն-Համիդյերի և Բալքան-Թորեսիի կրիւներում: Սակայն քաջութեան խաչը հազիւագիւտ բան է և նա տրւում է ամենից քաջերին: Թող այն խաչերը, որ այժմ կըստանան ձեր ընկերները, ծառայեն որպէս հապարտութիւն ամբողջ Հայկական վաշտի համար: Սակայն այսպիսի մի ուրախ և երջանիկ բոպէին չպէտք է մոռացութեան տանք նրան, որ բուլղարական զօրաբանակի գլուխն է կանգնած,

— Բուլղարիայի թագաւորին: Նրա իմաստութեան շնորհիւ մինչև այժմ զէնքը յաջողութեամբ կատարեց ազատազրութեան մեծ զործը: Կեցցէ ցար Ֆերդինանդը: Ուռա»:

Որտապից ուռան երիցս թնդացրեց օղբք

Նւագախումբը նւագեց „Ռումի, Մարիսա“ հիմնը, որի միջոցին փոխ-գնդապետ Պրոտոքերովը սկսեց բաժանել խաչերը, անձամբ զարդարելով ստացողների կրծքերը և առաջինը շնորհաւորելով նոր «կաւալերներին»:

Ամենից առաջ նա զարդարեց Անդրանիկի կուրծքը զինւորական քաջութեան ոսկէ խաչով, շնորհաւորեց նրան և երեք անգամ համբուրեց նրա հետ: Բոլոր ներկայ եղող բարձրաստիճան անձինք հետևեցին նրա օրինակին և ջերմագին շնորհաւորեցին Անդրանիկին, իսկ հայր-սուրբը օրինեց նրան:

Ժողովրդի ցնծութիւնը սահման չունէր. շատերը արտասում էին այդ սրտաշարժ տեսարանը դիտելիս: Օդը թնդում էր կեցցէներից և ուռաներից, ծափահարութիւնները անլսելի էին դարձնում երաժշտութիւնը: Երգեցիկ խումբը երգեց Անդրանիկին նվիրւած երգը, որի մելոդիան չափազանց դուրեկան և քաղցր էր:

Փոխ-գնդապետ Պրոտոքերովը տեսնելով այդ ամենը, չկարողացաւ զսպել իրեն և դառնալով գէպի ժողովուրդը՝ յուզւած ձայնով ասաց.

«Մի ժողովուրդ, որ գնահատում և յարգում է իւր հերոսներին, երբէք չի մեռնի: Այդպիսի ժողովրդի ապագան պայծառ է և նրա փրկութիւնը մօտ: Կեցցէ Անդրանիկը»:

Նորից ծով բազմութիւնը թնդացրեց օդը իւր ուժգին կեցցէներով, երաժշտութիւնը լցրեց ամբողջ թաղը իւր ներդաշնակ հնչիւններով,

Երեխաների երգեցիկ խումբը իւր քաղցր, անուշ դայլայլիկներով...

Հանդէսը վերջացաւ: Իշխանաւոր անձինք բարձրացան առաջնորդական սենեակները, իսկ զինւորները բաժանւեցին ոսողութեան նորին մէջ: Կատարեալ կոիւ էր, միմեանց ձեռքից խլում էին, վիճում, տաքանում. ամենքն էլ ուզում էին այդ օրը իրենց տանը մի թանկագին հիւր ունենալ:

Մենք քիչ հանգիստ առանք հայր սուրբի մօտ, ուր շնորհաւորութեան և այցելութեան եկան քաղաքի երևելիներից շատերը, հիւպատումները և այլն:

Ժամի ճիշտ մէկին գնացինք Հայկական ակումբը, ուր Ռողոսթոյի հայ հասարակութիւնը բանկետ էր տալիս Հայկական վաշտի բարձր հրամանատարներին և որին հրաւիրւած էին Ռողոսթոյի շրջանի նահանգապետ (վալի) դոկտոր իւան Դիմիտրով, Ռողոսթոյի կոմենդանտ գնդապետ Յեկով, Ռողոսթոյի քաղաքագլուխը և քաղաքային խորհրդի հայ անդամը, նահանգապետի օգնականը, թաղային խորհրդի անդամը և այլն: Ամբողջ ձաշի ընթացքում նւագում էր կոմենդանտ Յեկովի կողմից ուղարկւած 28-րդ գնդի նւագախումբը:

Շքեղ և ճոխ սեղան էր պատրաստած ընդդարձակ սենեակի մէջ, որ զարդարւած էր բուշդարական թագավարի պատկերով և ծաղիկներով:

Հիւրերը հաւաքւած էին արդէն: Նրանք շար-

ւեցին սեղանի շուրջը։ Հայր սուրբը օրհնեց սեղանը և քիչ յետոյ՝ կենդանութիւն մացնելու համար՝ առաջարկեց առաջին բաժակը խմել բուշարական թագաւորի և նրա յաղթող և անյաղթ դորքի կենացը։

Ոգեստութեամբ ընդունւեցին հայր սուրբի խօսքերը և երաժշտութիւնը նւագեց հիմնը։

Փակագծի մէջ ասենք, որ թարգմանի գերը կատարում էր Պրոտոգերովի բրիգադայի բժիշկը, որ ազգով հայ էր։

Ճաշկերոյթը քանի գնաց տաքացաւ, սեղանակիցների տրամադրութիւնը շատ բարձրացաւ և սրտակցութեան ու եղբայրութեան ճառերը թնդացըին Հայկական ակումբի սրահը՝ ուրախութիւն, անհուն ցնծութիւն պատճառելով ուկնդիրներին։

Պոկտոր իւան Դիմիտրովը մի շատ գեղեցիկ և բանաստեղծական ճառ արտասանեց, ցոյց տալով, որ ոչ միայն ծանօթ է հայ ժողովը դին, այլև նրա գրականութեանը։

«Մի ժողովը տանջանքները, — ասաց նա, — վկայում են նրա հոգեկան հարստութեան մասին։ Եթէ փողոցի մէջ հանդիպէք հային (տաճկահային), դուք իսկոյն կը ճանաչէք նրան, նրա աչքերի մէջ հանգել է ուրախութեան փայլը, նրա գէմքը կըում է տիրութեան կնիք։ Իւր կեանքի մէջ նա իրեն իւր հայրենիքի դժբախտութիւնից չի բաժանում։ Նոյնիսկ երբ նա երգում է և խօսում, նրա երգերի մէջ լսւում են

խեղճ ստրկի հեծեծանքները, իսկ նրա ձայնի մէջ փրկութեան անյագ ծարաւը։»

Նա առաջ բերաւ այստեղ «Արաքսի արտասուքը» ոտանաւորից ամենասրտաշարժ տողերը և վերջացրեց իւր ճառը, առաջարկելով խմել հայ ազգի բախտաւորութեան և ապագայի կենացը։

Դոկտոր Դիմիտրովի ճառը մեծ ազգեցութիւն արաւ հանդիսականների վրայ և ընդունւեց բուռն ոգեստութեամբ։

Կենացները յաջորդեցին մէկը միւսին. բոլորն էլ մէկ-մէկ ճառ արտասանեցին, ընդգծելով հայերի և բուլղարների սրտակցութիւնը, եղբայրութիւնը, կուլտուրական ձգտումները, համերաշխ ապրուստի խաղաղ զարգացման տեսչը։ Խօսեցին պ.պ. Ցեկով, Պրոտոգերով, բժիշկը և հայր սուրբը։

Հերթը հասաւ Անդրանիկին։ Քաջ և անվեհ հեր՝ կուտի դաշտում, նա խորամիտ և ճարտարախօս էր խորհուրդների, ճաշկերոյթների ժամանակ. բնութիւնը շատ բարեբախտ կերպով ներդաշնակել էր նրա մէջ մտքի ոյժը հոգու անվեհերութեան հետ։

«Մենք տօնում ենք այստեղ բուլղարական զօրքի յաղթութիւնը, բայց չպէտք է այս ուրախ ըոսէին մոռանանք մեր այն թանկագին ընկերներին, որ թշնամու զնդակները իւրեցին մեր շարքերից։ Նրանք իրենց քաջութեան զոհերն են, և մենք պատրաստ ենք նրանց յետելից զնալու։

Թող յաւիտեանս օրհնւած լինի սպանւած հերոսների յիշատակը»:

Բոլոր սեղանակիցները յուզւած այդ կարճ, բայց ազդու ճառից, ոտքի կանգնեցին՝ յարգելով պատփի դաշտում ընկածների սուրբ յիշատակը:

Այդպէս շարունակեց բանկետը դեռ երկար, մերթ ընդ մերթ ընդհատելով երաժշտութեան քաղցր հնչիւններով:

Վերջապէս, բոլորն էլ չափազանց գոհ, ցըրւեցին: Փոխ-զնդապետ Պրոտոզերովը իւր շտաբով հրաւիրւեց մի պատւաւոր հայի ընտանիք՝ քիչ հանգիստ առնելու և ժամանակ անցկացնելու:

Հայի տունը լիքն էր ընտիր հասարակութիւնով: Նա մեզ չափազանց անկեղծօրէն ընդունեց և ըստ սովորութեան հիւրասիրեց երեւի պատրաստած քաղցրեղէններով և սուրճով:

Այդ ընտանիքը մի այնպիսի հմայիչ տպաւորութիւն թողեց մեզ վրայ, մանաւանդ Պրոտոզերովի և նրա ընկերների վրայ իւր նահապետական պարկեշտութեամբ, առաքինութեամբ, հիւրասիրութեամբ և անկեղծութեամբ, որ ամենքն էլ հիացած մնացին:

Սպասաւորում էին թէ մայրը, թէ իւր զաւակները՝ որդին և նազելի, ու գեղեցիկ տասնեւից տարեկան Արմենուհին:

Մինչև երեկոյեան ժամի 12-ը հիանալի ժամանակ անցկացրինք այդտեղ. երդ, երաժշտութիւն, պար—ամեն բան այդ աննման հայ գերդաստանի անդամների ձեռքով գալիս էր: Զւար-

ճախօսութիւնը և առատ ու ճոխ հիւրասիրութիւնը կաշկանդել էին մեր սրաերը, մխիթարել մեր հոգիները. մեր, որ երկար ամիսների ընթացքում կարօտ էինք մնացել ընտանեկան հրապոյրի և հմայքի. մոռացնել էին տւել մեզ մեր քաշած բոլոր նեղութիւնները և չարչարանքները պատերազմի դաշտում և փոխադրել մի կախարդական, մի նոր աշխարհի...

Իսկ գիշերը նոյն տանը գեղեցիկ զարդարած սենեակի մէջ, փափուկ, մաքուր և տաք անկողնում քնեցինք այնպիսի փառաւոր և խոր քնով, որ միանգամայն մոռացանք մեր չոր, ցուրտ և խոնաւ անկողինները դաշտերում, առանց «գօշակի», առանց սաւանների, առանց տաք վերմակի, շատ անգամ անձրեկի տակ, քամու դիմաց:

Քաղցր քնեցինք այդ գիշերը, և հետագայ մեր գաւնութիւնների ժամանակ կրնակի քաղցրութիւնով էինք յիշում այդ:

Միւս օրն առաւօտեան Հայկական վաշտը նոյն պատւով ճանապարհ ընկաւ գէպի Պանադոս, անմոռանալի յիշատակներ և յիշողութիւններ տանելով Ռոդոսթոյի հայ գաղութի ցոյց տւած ուշադրութեան, հիւրասիրութեան և հոգատարութեան մասին:

Մեծ ափսոսանքով թողեցինք մենք այդ գեղեցիկ ծովափնեայ քաղաքը, որն այնքան անկեղծօրէն հիւրասիրեց մեզ, յիշեցրեց մեզ բոլորիս հեռուում մեզ սպասող մեր մօտիկներին և բարեկամներին, յուզեց մեզ, զգացումների, յիշողու-

թիւնների երամներ զարթեցնելով մեր ուղեղի
մէջ...

Փոխ-զնդապետ Պրոտոպերովը միշտ սիրում
էր յիշել իւր այդ տպաւորութիւնների մասին և
միշտ ընդգծում էր իւր հիացմունքը, իւր զար-
մանքը և իւր յարգանքը հայ ընտանիքի առաքի-
նութեան, նահապետական բարքերի և սովորու-
թիւնների մասին. և խեղճը չէր ծածկում, որ
իւր աչքը միշտ մի այդպիսի նահապետական
ընտանիքի վրայ է եղել, և եթէ մինչև այժմ չի
ամուսնացել, պատճառն այն է, որ այդպիսի մէ-
կին չէ հանդիպել իւր կեանքի մէջ:

XV.

ՆՈՐԻՑ ՊԱՏԵՐԱԶՄ

Միատեսակ, տաղտկալի կեանք էինք վարում
Մարմարայի ծովափին. ամեն օր համարեա միե-
նոյնը: Անդպար սպասում էինք պատերազմի
վերջանալուն, խաղաղութիւն կնքւելուն: Ամեն
օր սենսացիօն լուրեր էին տարածւում. մէկը՝
թէ խաղաղութիւնը արդէն կնքւել է, միւսը՝ թէ
Օդրին ընկել է, երբորդը՝ թէ բանակցութիւն-
ները խուել են... ինչքան մարդ, այնքան էլ են-
թագրութիւններ, կարծիքներ:

Կիրակիներն էին քիչ փոփոխութիւն մացը-
նում մեր գիւղական կեանքի մէջ: Հրապարակի
վրայ զինւորները պարում են երգում էին, հայերն
էլ իրենց զաւալջին վերցրած՝ բոլորի ուշագրու-

թիւնն էին գրաւում իրենց գեղեցիկ խաղերով
և պարերով: Բալըզու բենեֆիսն էր կիրակին.
Էլ հունար, էլ օյխն չէր մնում, ցոյց էր տալիս,
ուրախացնում բոլորին, մոռացնել տալիս կեանքի
տիսրութիւնները և միակերպութիւնը:

Այն տունը, ուր Անդրանիկն էր ապրում,
դարձել էր սրբի գուռ, ամեն օր թէ Ռողոսիոյից
և թէ ուրիշ տեղերից եկած այցելուներով լիքն էր:
Գալիս էին տեսնելու նրան. մօտը քիչ նատում,
ձայնը լուսմ և էլի վեր կենում գնում:

Այդպէս մօտեցաւ յունւարի 21-ը, բանակ-
ցութիւնների վերջին օրը: Որովհետեւ գրութիւնը
շատ լուրջ էր, ուստի հրաման եկաւ, որ այդ
օրն արգէն առաջին վիրքերում լինինք, որպէսզի
պատերազմ յայտարարւելու գէպքում պատրաստ
լինինք թշնամուն վիմագրելու. մանաւանդ որ
Լոնգոնից նախազգուշացրել էին, թէ տաճիկները
պատրաստութիւններ են տեսնում Գալլիպոլի
թերակզու վրայով ներս խուժելու և օգնութեան
գնալու Օդրինի բերդապահ զօրքին:

Ուստի ամսի 20-ին, մի ձիւնոտ և ցուրտ
օր, ամբողջ բրիգադայով գուրս եկանք Պանադոս
գիւղից և ուղենորւեցինք գէպի արևմտեան կողմը,
նպատակ ունենալով կուի գէպքում գրաւել Շար-
քեօյ քաղաքը:

Սարսափելի, աննկարազրելի ցեխ էր ճանա-
պարհներին. մարդիկ կիսով չափ խրւում էին
ցեխի մէջ, որտեղից գուրս գալուց տրեխ ու
կօշիկ մնում էր այնտեղ:

Այդ հերիք չէր, նոյն օրը ճաշից յետով մի յորդառատ անձրև եկաւ, որով մեր գրութիւնը աւելի վատթարացրաւ:

Այսպէս թէ այնպէս, մեծ դժւարութիւններով բարձրացանք Մարմարայի ծովափի լեռների գլուխը, որոնք ծածկւած էին ձիւնով:

Երբ ամսի ջջի առաւօտեան նորից նայեցինք լեռների գագաթներից մեր առաջն ընկած Մարմարա ծովին, պատկերն արդէն բոլորովին այլ էր. զրահանաւերը եկել պաշարել էին ծովափի գիւղերը և կոփւ էին մղում մեր զօրքերի հետ, թնդացնելով իրենց ահագին թնդանօթները: Մեր զօրքերը այդ ծովային հրէշներին պատասխանում էին լեռնային փոքրիկ թնդանօթներով:

Մեր բրիգադան, որ պահեստի ոյժ էր կուռղ զօրքերի համար, միայն հեռակ գիտում էր կուրի այդ հազւագիւտ տեսարանը: Սար ու ձոր գոռում գոչում էր թնդանօթների ահեղ որոտման երից, որոնց արձագանգը քանիցս անդամ կրկնելով, լցնում էր մարդկանց սրտերը ահ ու դողով, ճնշում նրանց նողին:

Այդպէս ուրեմն, պատերազմը վերսկուեց և ով գիտէ երբ պէտք է վերջանար: Զէինք սպասում, որ ջարդած Տաճկաստանը նորից սիսկ կանի կուրի գիմելու, որովհետեւ նրա ամբողջ պետական խարխուլ սիստեմը փլւեց վերջնականապէս, նրա զինւորական ոյժը, եթէ սպառած էլ չէր, սակայն անընդունակ էր կուելու և յաղթութիւններ տանելու: Բայց էնվեր-բէյի աւանդութիւններ տանելու:

տիւրան սկսւեց, և մենք համոզւած էինք, որ նա ոչ մի օգուտ չի տալու Տաճկաստանին, ընդհակառակը, բուլղարներին ստիպելու է Միդիանոս սահմանագծի փոխարէն պահանջել Միդիանոգոսթո:

Երկու օր տեսց այդ ծովային ցոյցը, որի նպատակն էր, երկի, մեր ուշադրութիւնը զբաղեցնել Մարմարայի ծովափով, որպէսզի Գալլիպոլիի զօրաբանակը կարողանայ ճեղքել բուլղար զօրքերի շարքերը և անցնել դէպի Քեշան՝ Օդրինի բանակին օգնութեան հասնելու: Սակայն ամեն ինչ ապարդիւն անցաւ, և տաճիկները ստիպւած եղան մաքրել ամբողջ ծովափը և փակւած մնացին Գալլիպոլիի թերակղու վրայ:

Մէնք չմասնակցեցինք այդ կուին, այլ շարունակեցինք մնալ միւս բրիգադաների ուեզերվում: Երկու օրից յետոյ հրաման եկաւ վերադառնալ հին տեղերը՝ Ռոդոսիցից մինչև Շարբեօյ ծովափը պահպանելու: Որովհետեւ պահպանութեան տեղը աւելացել էր, ուստի մեր բրիգադան բաժին-բաժին եղաւ ծովափնեայ բոլոր գիւղերի մէջ:

Հայկական վաշտը հաստատւեց Պլատանոս գեղեցիկ տեսարան ունեցող գիւղի մէջ, ուր և անցկացը առաջին օրերը անհանգիստ դրութեան մէջ, որովհետեւ համարեա ամեն օր ծովի վրայ երևում էին պատերազմական նաւեր:

Թշնամին պատրաստում էր մի նոր փորձ կամ ծրագիր իրագործելու, սակայն չէինք կա-

բողանում իմանալ թէ ուր և ինչ է անելու.
ուստի մեծ աշալը ջութեամբ էինք հսկում ծովա-
փի վրայ գիշեր և ցերեկ:

Երեք օր չանցած, Մարմարա ծովի ամբողջ
տարածութեան վրայ նորից սկսեցին մեծ-մեծ
թնդանօթների զոռոցները, որոնք լսելի էին ամ-
բողջ շրջակայքում, բոլոր գիւղերում:

Շուտով պարզեց, որ թշնամին Շար-Քեօյի
մօտ փորձում է զօրք հանել ցամաք: Գեներալի
հրամանով ամբողջ կամաւրութիւնը պէտք է
շտապով գնար Շար-Քեօյի մօտերքը և թոյլ չտար
թշնամուն ցամաք ելնելու:

Մեր բրիգադայից XII դրուժինան էր ամե-
նից մօտիկ Շար-Քեօյին. և որովհետև երկիւղ
կար, որ թշնամին ամեն ջանք գործ կը դնէ և
կը վերցնի Շար-Քեօյի և, հետեւաբար, ամբողջ
շրջակայքի վրայ իշխող Սուրբ Եղիա սարը, և
այդ գէպքում մեր դրութիւնը զգալի կերպով կը
վատանայ և նոյնիսկ գուցէ ամբողջ կուի ըն-
թացքը փոխւի, —ուստի այդ կարեւոր բարձրու-
թիւնը ապահովելու համար գեներալը անձամբ
հրամայեց XII դրուժինային մի վաշտ ուղարկել
սարը ապահովելու համար: Ինչ ասել կուղէ, որ
ուղարկւեց Հայկական վաշտը, որ իսկոյն կա-
տարեց հրամանը և մի քանի ժամից յետոյ հաստա-
հաստատեց Սուրբ Եղիայի բարձրութեան վրայ:

Սաստիկ ցուրտ էր գիշերւայ պահուն, աղերքը
մեծ նեղութիւններ կրեցին, սակայն քաջու-
թեամբ աւանում էին զբկանքները, որովհետև

ուրախ էին կատարելու իրենց պարտականու-
թիւնը:

Անդրանիկը մի յիսնեակ վերցըեց և գիշեր
ժամանակ իջաւ Շտերնա գիւղը, ուր աշալուրջ
կերպով հսկում էր Ս. Եղիայի գագաթը տանող
բոլոր ճանապարհների և շաւիղների վրայ:

Հայ վաշտն ամբողջ կուի ժամանակ պաշտ-
պանում էր Ս. Եղիայի գագաթը: Սաստիկ ցրտից
պատողարւելու համար նա փոսեր փորեց, ծա-
ռերից և ճիւղերից տնակներ շինեց, որպէսզի
մի կերպ կարողանայ ցրտին դիմանալ:

Գեներալի յունւարի 28-ի հրամանը շատ
կարծ էր և ազգու. «Հրամայում եմ կամաւրու-
թեանը գրոհ տալ թշնամու վրայ և թափել նրան
ծովը»:

Մինչև այդ օրը թշնամին ուղմանաւերի
հովանաւորութեան տակ՝ տասը հազար մարդ
էր թափել ափի վրայ, նորից վերցըել Շար-
Քեօյը և սպանել մեր կամաւրներից աւելի քան
հարիւր մարդ, նոյնքան էլ կոտորել քաղաքացի
յոյներից:

Սակայն զօրքը փոխանակ շտապով գրաւե-
լու մօտակայ բարձրութիւնները և այնտեղ հաս-
տատւելու, սկսում է քաղաքում զբաղւել կոտո-
րածով և թալանով, որի վրայ կորցնում է ամբողջ
24 ժամ: Այժմ արդէն ուշ էր, մենք արդէն
վերցըել էինք բոլոր իշխող բարձրութիւնները և
թէւ անզօր էինք ծովային թնդանօթների գէմ
կուելու, սակայն երկիւղ չէինք կրում տաճիկ-

ներից, որովհետև նլանք այլիս հնարաւորութիւն չունէին ծովափից հեռանալու դէպի երկրի խորքը, չէին համարձակւիլ իրենց նաւերի հովանաւորութեան տակից դուրս գալու, քանի ու չէին կարողացել ժամանակին ցամաք հանել թշնդանօթներ և հարկաւոր պարագաներ։

Երկրը դողում էր թնդանօթների ձայնից, լեռները դրսկում էին, գնդակները մօտենալուց սարսափելի ձայն էին հանում օդի մէջ. մարդ, ձի, անասուն սարսափահար եղած՝ թագնւելու տեղ էին որոնում։ Երբ այդ գնդակները զարկւում էին գետնին, ահագին փոսեր էին փորում։

Համաձայն գեներալի հրամանին հետևակ զօրքը մօտեցաւ ծովափին որքան հնարաւոր էր, իսկ լեռնային թնդանօթները մօտեցան այնքան, որ կարողանան անմիջապէս ոմբակոծել թշնամուգիշերով շինած Պոնտօնի կամուրջը և նաւակները, որոնցով զրահանաւերից զինւոր էին իջեցնում ցամաք։ Դժւար էր այդ բանը, որովհետև զրահանաւեր անընդհատ համազարկեր էին տալիս իրենց բոլոր թնդանօթներից... Բայց հրամանն այդպէս էր։

Գեներալը և մեր ամբողջ շտաբը նստած ձաշում էինք ժամի մօտ երկուսին, երբ յանկարձ լուր եկաւ սարի գլխի դիտարանից, թէ թշնամին պատրաստում է փախուստի դիմելու, որովհետև մեր թնդանօթներին յաջողւել է ոմբակոծել կամուրջը, որն արդէն փլւել է...
Տեսարանը սարսափելի էր. ոռոմքները պայ-

թում էին մարդկանցով լիքը նաւակների վրայ, մարդկանց գլուխներին, այնպէս որ մի աննկարագրելի իրարանցում ընկաւ թշնամու բանակին մէջ. եթէ քիչ ուշանային և նաւ չմտէին, պէտք է բոլորովին թողնէին յետ գնալու միտքը։

Մեր բանակի մէջ մեծ ուրախութիւն առաջացաւ. Ժամի 5-ին սկսւեց լնդհանուր գրոհը, որի արդիւնքն այն եղաւ, որ թշնամին իսկապէս ծովը քշեց և Շար-Քեօյ քաղաքը յետ առնւեց։ Տաճիկ զօրքը ջարդւած նաւերով դէպի Գալլիպուլի փախաւ, ծովում, ափի մօտ թողնելով շատ խորտակւած և փշրւած նաւակներ։

Շար-Քեօյի տեսարանը աննկարագրելի է... Կոտորւած, սպանւած, այլանդակւած զինւորներ, քաղաքացիներ...

Նոյն այդ օրերին Գալլիպուլի զօրաբանակն էլ մեծ ջարդ է ուտում բուլղարական զօրքի կողմից և ունենում է այնքան սոսկալի կորուստ, որ այլև ոչ կարողանում, ոչ էլ ցանկանում է նորից յարձակում գործել և դէպի Օդրին անցնել։

Շար-Քեօյի զօրամասը գտնւում էր հոչակաւոր էնվէր-բէյի հրամանատարութեան տակ, բայց նա միայն մի գիշեր կարողացաւ Շար-Քեօյ ապրել յոյն գիւղապետի տանը։

Շար-Քեօյի յաղթութիւնից յետոյ մենք կրկին վերագարձանք մեր հին տեղերը։ Հայկական վաշտը նորից զնաց Պատանոս գիւղը և դարձեալ հաստատեց նոյն բնակարաններում, պահպանութեան առնելով իւր բաժին ծովափը։

Այսպէս ուրեմն, երկրորդ յաղթութիւնից յետոյ նորից վերադարձանք մի քանի օր առաջ թողած գիւղերը, և որովհետև պատերազմը շարունակւում էր, ուսախ կարիքը պահանջում էր, որ ծովափը պահպանւի ամենախիստ կերպով, որպէսզի չինի թէ թշնամին նորից փորձեր անի զօրք իջեցնելու ցամաք։ Մեր բախտիցն էր, թէ ինչից, այդ տարւայ ձմեռը չաեմնւած ու չաւած ցրակը բերեց. վեարւար ամսին 10—15 անգամ այնպիսի մեծ քանակութեամբ ձիւն եկաւ, հիւսիսային սաստիկ ցուրտ քամին այնքան փշեց, որ փակւեցին բոլոր ճանապարհները, ձիւնի մէջ կորան գիւղերի տները և գիրքերի մէջ սաստիկ տուժեցին կուռղները։ Հարիւրաւոր, հազարաւոր զինւորներ Բուլայիրի գիրքերում առանց կրակի, առանց տնակների, առանց որևէ ապաստարանի սառան ու մեռան տեղն ու տեղը, մի քանի հազար զինւորներ էլ ոտներից կամ ձեռքերից ցրտահար եղան, որոնք յետոյ ամիսներով բժշկւում էին Բուլզարիայում։

Ցրտին զոհ զնացին նոյնպէս մեծ քանակութնամբ ձիեր և տաւարներ։ Յուրան ու բուքը փակել, անանցանելի էին դարձրել բոլոր ճանապարհները, որի պատճառով զինւորները հացի մեծ պակասութիւն ունեցան և ստիպւեցին օրերով առանց հացի մնալ *):

*) Հացը գալիս էր 30—40 վերստ հեռաւորութեան վրայ զանուող խանութներից։

Եղան զօրամասեր, ինչպէս Բուլայիրում, որոնք եօթն օր շարունակ հաց չկարողանալով ստանալ, մասամբ սովամահ եղան, մասամբ էլ ցրտից մահացան։

Մեր բրիգադան, չնորհիւ փոխ-զնդապետ Պրոտոգերովի ձեռք առած գործնական և եռանդուն միջոցների, ձմեռւայ այդ սաստիկ ցրտերի ժամանակ շատ քիչ տուժեց և համարեա թէ հացի նեղութիւն չունեցաւ։ Ամենից վատ անցկացրեց Հայկական վաշտը, որովհետև 12-րդ գրուժինան ամենից հեռու էր գտնւում և Պլատանոս գիւղի ճանապարհները շատ դժւարանցանելի էին. Բացի զբանից այդ գրուժինայի մէջ մատակարարման գործը վատ էր գրւած գրուժինայի հրամանաստարի անփորձութեան պատճառով։

Այդ սաստիկ ցրտերի ժամանակ մեր բրիգադան միայն երեք վնասւած զինւոր ունեցաւ, նրանց ոտների մատները սառան ցրտից, թէկ ոչ այնքան ծանր։

Ահա այդ առթիւ էր, որ երբ քամին դադարեց և հնար եղաւ տներից դուրս գալ, ես զնացի հիւսնդներին տեսնելու, այնտեղից էլ այցելելու Պլատանոս գիւղը և տղաների նիստ ու կացին ծանօթանալու։

Միիթարական շատ քիչ բան գտայ այնտեղ. տղաների նեղութեան օրերն էին, որովհետև հացի, ընդեղէնի և կանաչեղէնի մեծ պակասութիւն էր զգացւում. միւս կողմից էլ ցուրտը,

կուփ անորոշ ժամանակով ձգձգւելը ազդել ու չղայնացրել էին տղաներին, որոնք անհամբեր սպասում էին կուփ վերջանալուն, որ տուն վերադառնան:

Սակայն, ինչպէս վերև ասացի, հրամանատարի կտրուկ միջոցների շնորհիւ հացը հասաւ, լրացւեցին մի քանի պակասներ և մի երկու օրից յետոյ կեանքը նորից ընդունեց իւր նորմալ ընթացքը:

Տղաների մտքերը որոշ չափով հանգստացան, բայց և այնպէս նրանք անդործութիւնից ձանձրանում, յոգնում էին: Շատերը նոյնիսկ խնդրում, աղաչում էին, որ իրանց ուղարկեն Օդրին կամ Զաթալջա՝ կոփւներին մասնակցելու, «որովհետեւ — ասում էին նրանք — մեզ համար աւելի մեծ ուրախութիւն է կուել և մեռնել, քան թէ այստեղ անգործ նատել և ուտել»:

Եւ միայն հայերը չէին, որ ձանձրանում էին, ամենքի բերանից նոյն գանգատն էր լսում:

Ահա այդ առթիւ էր, որ գեներալը հրամայեց թոյլ տալ զինւորներին ներկայացումներ և երեկոյթներ սարքել և ուրախանալ:

Առաջինը հայերն եղան, որ Պլատանոսի դպրոցի բեմի վրայ տւին մի ներկայացում: Վաշտի մէջ կային խսկական գերասաններ, օրինակ՝ մէկ զինւոր, որին Գաւրօշ էին անւանում, շատ շնորհքով խաղում էր կոմիքական գերերը: Իւր ասելով, նա ծառայել է գերասանական խմբի մէջ:

Մէկ օր, երբ Անդրանիկի հետ տնից դուրս ելանք և մօտեցանք գիւղամիջի սրճարանին, նկատեցինք մի ձեռագիր աֆիշ սրճարանի պատին կպցրած, որի մէջ յայտարարուում էր ի գիտութիւն հասարակութեան, որ հայկական թատրոնական խումբը «Օդէօն» թատրոնի մեծ սրահի մէջ կը տայ գալանելիկայացում:

Ասելն անգամ աւելորդ է, որ նշանակւած ժամին դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր. ամեն բան մեծ հոգացողութեամբ էր կարգադրւած, օրինակելի էր նաև կարգապահութիւնը:

Երբ սպաները բռնեցին իրենց տեղերը, վարագոյը բարձրացաւ և սկսւեց ներկայացումը: Ներկայացնում էին տաճկերէն լեզով մի կոմեդիա, որի մէջ թէ տղամարդկանց և թէ կանանց գերերը խաղում էին Գաւրօշն ու իւր ընկերները: Գաւրօշն այնքան հմուտ և գեղեցիկ էր խաղում, որ զարմացրեց ամենքիս: Դահլիճը նրա սրախօսութիւններից և խաղից շատ գոհ՝ շարունակ ուրախ քրքջում էր. գոհ էին մանաւանդ տեղացի յոյները, որոնք տիրապետելով տաճկերէնի նըրբութիւններին, մեծ հաճոյք էին զգում:

Ներկայացումից յետոյ զբւեցին կենդանի պատկերներ զինւորական կեանքից, երգւեցին երգեր, տեղի ունեցան պարեր, որոնց, ինչ կասկած, մասնակցեց նաև Բալըզին:

Երեկոյթը մեծ բաւականութիւն պատճառեց ամենքին և բոլորն էլ ուրախ տրամադրութեան մէջ:

տակ հեռացան իրենց աները, յոյս ունենալով,
որ այդ վերջինը չի լինի:

Այսպէս, օրերը յաջորդում էին իրար: Վեր-
ջապէս հասաւ մարտի 13-ը, որը բերաւ մեզ
Օդրինի անկման լուրը: Ի՞նչ ուրախութիւն,
ինչ հրձանք... Նորից Մարմարա ծովի ափերը
և մօտակայ լեռները թնդացին թնդանօթների և
հրացանների որուներից, սակայն նրանք այս
անգամ ուրախութիւն, յաղթութիւն էին աւե-
տում ամենքին:

Գաւրօշը անշուշտ օգտւեց այդ հանգաման-
քից և փողոցային ցոյցեր կազմակերպեց՝ իւր
ընկերներին զւարճութիւն պատճառելու նպա-
տակով:

Սակայն մի քանի օրից յեաոյ դարձեալ
սկսեց նոյն միակերպ ու տաղտկալի կեանքը:
Օդրինն էլ ընկաւ, բայց պատերազմը դեռ չէր
վերջանում և յայտնի էլ չէր, թէ երբ կը վեր-
ջանայ:

Հայկական վաշտը ճշտութեամբ կատարում
էր իւր բոլոր պարտականութիւնները և իւր
ազատ ժամերը անց էր կացնում իւր հրամա-
նատարի հետ, որը ամեն կերպ աշխատում էր
անհկատելի դարձնել նրանց համար ժամանակը.
կարդում էր նրանց համար, պատմում և ուսու-
ցանում նրանց:

Այդ ժամանակներում գեներալի հրամանով
մեր բրիգադան եկաւ մասնագէտ զինագործ
փոխ-գնդապետ Բոսեւը՝ զինւորների գէնքերը

ստուգելու համար: Երբ վաշտը քաղաքից դուրս
շարւած էր, նա եկաւ և հերթով նայեց բոլորի
գէնքերին, ապա դառնալով դրուժինայի հրամա-
նատարին, ասաց.

— Ուրախութեամբ եմ նայում ես այս վաշ-
տին, որքան առողջ, զւարթ և խոշոր տղամար-
դիկ են: Սրանք մասնակցել են արգեօք կոփ-
ների մէջ:

— Այն էլ մի քանի անգամ,—պատասխա-
նեց հրամանատարը:—Իմ դրուժինան ահա այս է

— Հայկական վաշտը: Վճռական բոպէներին իմ
ամբողջ յոյսը միայն սրա վրայ եմ դնում:

— Իսկ կան քաջութեան խաչեր ստացած-
ներ:

— Քսանհինդ հոգուց աւելի, —պատասխա-
նեց դրուժինայի հրամանատարը:—Պարոն պող-
պորուչիկն էլ է պարզեատրւած քաջութեան
խաչով, —ասաց նա, ցոյց տալով Գարեգինին:

— Հերոսական վաշտ է, —ասաց փոխ-գնդա-
պետը և շնորհակալութիւն յայտնելով հրամա-
նատարին, հեռացաւ:

Բնական է, որ այդպիսի գովասանքները բեր-
նից բերան անցնէին և տարածւէին ամբողջ գիւ-
ղում, նախանձ յարուցանելով միւս գնդերի մէջ:

Կարձ ժամանակից յետոյ վաշտը տեղափոխ-
ւեց Շտերնա գիւղը, որ գտնւում է սուրբ Եղի-
այի լեռան ստորոտին: Այստեղ փոխադրւեց և
շտաբը, այնպէս որ ամբողջ օրը մեր աչքի առաջն
էր Հայկական վաշտի կեանքը:

Սակայն վաշտի մէջ մի քանի անհանգիստ անձնաւորութիւններ հանգիստ չմնացին և շարունակ պղտորում էին իրենց ընկերների մըտքերը։ Դրա հետևանքն այն եղաւ, որ տեղի ունեցան մի քանի տիսուր միջնադէպեր, որոնց առաջն առնելու համար նպատակայարմար համարւեց առժամանակ հայկական վաշտի հրամանատարութիւնը յանձնել մի նոր անձնաւորութեան, իսկ Գարեգինին նշանակել տասներորդ դրուժինայի երրորդ վաշտի հրամանատար։

Բայց զինւորներն այնքան էին սիրում իրենց հրամանատարին, այնպէս էին պաշտում նրան, որ այդ լուրն առնելուն պէս ապշած մնացին։ Ապա եկան շարւեցին Գարեգինի տան առաջ պտակով, ծաղիկներով, ոտանաւորներով...

Դուրս եկաւ Գարեգինը, որ իւր անձը, իւր միտքն ու ուղեղը զոհաբերել էր վաշտին այդ եօթն ամսւայ ընթացքում, և մի քանի միխթարական խօսք ասաց իւր զինւորներին, որոնց այլևս չպէտք է տեսնէր, որովհետև 10-րդ դրուժինան ապրում էր ուրիշ գիւղում։ Բայց արտասունքները չթողին նրան շարունակելու։

Իսկ ինչպէս էին լալիս տղերքը, ուղղակի աննկարագրելի է։ Արտասունքը գետի պէս էր հոսում նրանց այտերից։

Պրոտոգերովը, որ հարեան տան լուսամուտից գիտում էր այդ սրտաշարժ տեսարանը, չկարողացաւ սպակել իրեն և սենեակից դուրս գնաց՝ իւր յուղմունքը ծածկելու համար։

— Զարմանալի տղերք են, — ասաց նա քիչ յետոյ, — լալիս են կատարեալ երեխաների պէս. այդպէս էլ սիրոյ արտայայտութիւն...

Գարեգինը գնաց և վաշտը մնաց որբացած բառիս բուն նշանակութեամբ, որովհետև Անդրանիկն էլ հիւանդ էր, հին յօդացաւը շարժւել էր։ Նա ստիպւած էր Ռոդոսի գնալ տաք բաղնիքներ ընդունելու։

Նոր հրամանատարը ահազին ուժով և խոշոր կազմւածքով մի կոպիտ, վայրենի, և գինեմոլ մարդ էր։

Աստւած գիտէ, թէ ինչեր քաշեցին տղերքը։ Միակ միխթարութիւնն այն էր սակայն, որ այդ երկար չտեսց, թէ չէ տղերքը իսկ և իսկ պէտք է տանջւէին, որովհետև մեզ համար անհնար էր լինում միշտ նրանց պաշտպան հանդիսանալ ամեն մի անարդարութեան գէմ։

Հայրենիքից հեռու, օտար երկնքների տակ, օտար հայրենիքի ազատութեան համար եկած՝ նրանք անտրասունջ տանում էին իրենց տանջանքները յանուն գաղափարի, յանուն ստրուկ մակեղոնացու ազատութեան՝ իրանց կեանքի, իրանց զրկանքների ու նեղութիւնների գնով...

XVI.

Դ Է Պ Ի Տ Ո Ւ Ն

Ապրիլի 18-ին հրաման ստացւեց, թէ Մակեդոն-Օդրինեան կամաւորութիւնը լրացրել է

իւր ծառայութիւնը կուի դաշտում և այժմ յետ
է կանչում Մակեղոնիա՝ քաղաքների բերդա-
պահ ոյժը կազմելու համար:

Անհուն ուրախութիւն պատեց բոլորի սրբ-
տերին, որովհետև նրանց մեծամասնութիւնը մա-
կեղոնացիներ էին, որոնք երկար տարիներից
յետոյ հնարաւորութիւն էին ստանում վերա-
դառնալ իրենց ազատւած հայրենիքը:

Բոլոր պատրաստութիւնները արագութեամբ
պլուխ բերեցին և ամսի 20-ին արդէն ամեն
ինչ պատրաստ էր:

Մի անձրեսոտ օր էր ապրիլի 21-ը, երբ
դուրս եկանք Շտերնա գիւղից՝ վերջին անգամ
գիտելով Մարմարա ծովի գեղեցիկ տեսարանը,
որից ընդմիշտ պէտք է բաժանեէլնք մի կէս
ժամից յետոյ, երբ անցնէինք սարը:

Արագ քայլում էին տղերքը անձրեկի տակ,
ցեխերի միջով ուրախ ու գւարթ, քայլում էին
այնպէս, որ յետեկի վաշտերը չէին կարողանում
համել նրանց, հայրոյում, գժգոհում և զարմա-
նում էին արմենցիների տոկունութեան և եռան-
դի վրայ, որոնք ոչ յոդածութիւն գիտէին, ոչ
քաղց, ոչ ծարաւ, այլ միշտ քայլում էին յառաջ
և յառաջ:

Անցնում էինք այրւած, քարուքանդ եղած
գիւղերով, որոնց հետքն անգամ չէր մնացել, խոտը
ծածկել էր ամեն բան, չքացրել բոնութեան,
սպանութեան ամեն մի հետք:

Դաշտերը զարդարւել էին գոյնզգոյն գեղե-

ցիկ ծաղիկների գորգերով և հրապուրում էին
անցորդների տեսողութիւնը իրենց գոյների ար-
տակարգ հարմոնիայով, արտակարգ գեղեցկու-
թիւնով։ Սոխակները գիշեր ու ցերեկ լցնում
էին օդը իրենց դայլայիկներով, իրենց զմայլե-
ցնող երգերով։ Ես առաջին անգամն էի տես-
նում այդքան մեծ քանակութեամբ սոխակներ,
որոնք երգում էին շատ մեծ ոգևորութեամբ և
առանձին գեղեցկութեան ելեկջներ էին հանում
իրենց արծաթեայ անմոման կոկորդներից։ Մինչև
Մալգարա քաղաքը համելը ուղղակի միմիթար-
ւեցինք նրանց երգերից, զմայլեցինք և հոգե-
պէս վերակենդանացանք։ Բնութեան հմայքն ու
հրապոյըն էլ մի կողմից էին ազգում մեր հոգու
վրայ, և լինում էին բոպէներ, երբ չէինք կա-
մենում դուրս գալ, անջատւել այդ գեղեցիկ
բնութեան ծոցից։

Գեղեցիկ է բնութիւնը գարնան սկզբին,
երբ սար ու ձոր, դաշտ ու հովիտ, թռչուն ու
գաղան հրաշագեղ գարնան երգն են երգում,
վերակենդանութեան և սիրոյ անման մեղեղին
գեղգեղում...

Հասանք Մալգարա, ուր մնացինք մէկ օր
հանգստանալու։ Ժողովուրդը տիսուր էր, որովհե-
տեւ յայտնի էր, որ Մալգարան մնում է տաճիկ-
ներին... Տաճիկ անունը յիշելիս մարդ, կին և
երեխայ դողում էին։

— Մեզ կը կոտորեն, տսում էին նրանք:
ի՞նչ ասես, ի՞նչ պատասխանես, հակառակը

պնդել չես կարող, չէ՞ որ նրանք ճանաշում են վայրենի, գազան տաճիկին: Համաձայնել նրանց հետ կը նշանակէ նրանց կենդանի մորթել...

Եւ նրանք չփալւեցին. տաճիկը գալուն պէս ջարդեց, կոտորեց նրանց և կրակեց, թալանեց հայերի շէն և հարուստ շուկան:

Մալգարայից անցանք Քեշան, Փերէ Մերհ համլու գիւղի մօտով, ուր գերի էինք վերցրել եավեր փաշային: Այժմ դատարկութիւն և ամայութիւն էր տիրում այդ կողմերում. գիւղ, տուն և բնակչութիւն չէր երևում:

Եգէյեան (Արշակելագ) ծովի ափին, Դեղէաղաջ քաղաքում, մնացինք երկու օր քիչ հանգըստանալու. սակայն յորդառատ անձրեները մեզ դադար չտւին, իսկ սաստիկ կայծակները զարնելով՝ սպանեցին մեր բրիգադայից երկու զինուր և վիրաւորեցին մի քանիսին:

Դեղէաղաջը մի գեղեցիկ փոքրիկ քաղաք է, որի մէջ կայ բաւականաշափ հայ գաղթականութիւն, հայոց եկեղեցի և գպրոց-մանկական պարտէզ:

Այդտեղ ես ծանօթացայ մի ուրիշ հայ վօյվոդայի հետ, որը կուի ժամանակ գործում էր Մակեդոնիայի խորքերում մակեդոնացի միւս վօյվոդաների հետ: Դրանք ամեն տեսակի միշոցներով խանգարում էին թշնամուն, խգելով հաղորդակցութիւնը, հեռագրաթերը, փլելով կամուրջները, կոտորելով, թալանելով կամ փախցնելով տաճիկ բնակչութիւնը: Այդ վօյվոդա-

ները իրենց չետաներով կուի սկզբում ուղարկւած էին կառավարութեան կողմից, և երբ տաճիկ տարրը ոչնչացւեց կամ դուրս վռնդեց Մակեդոնիայից, նրանք եկան միացան մեր կամաւրութեանը:

Մակեդոնացիների մէջ մեծ հոչակ էր հանել Յովհաննէս Զաւուշ վօյվոդան, որ մի բարձրահասակ, չափազանց երկար բեխերով, վիթխարի տղամարդ էր, ոտքից մինչև զլուխ զինւած: Նրա քաջութեան մասին առասպելներ էին պատմում, գովաբանում նրան մինչև երկինք:

Նա կոիւ էր գնացել միմիայն վրէժինդրութեան համար, միմիայն իւր սիրտը յագեցնելու, միմիթարելու համար քաշած զրկանքների և տանջանքների պատճառով:

Բայց չնայած որ Յովհաննէսը շատ լաւ համբաւ ունէր որպէս քաջ մարդ և մեծ յարգանք վայելում բոլորի կողմից, այնուամենայնիւնա շատ պարզ և հասարակ մարդ էր իւր խելքով և դատողութիւններով. չունէր այն խելքութիւնը, ողջախոնութիւնը և տակտը, որով գրաւում էր մարդկանց մեր միակ և աննման Անդրանիկ վօյվոդան:

Անդրանիկ և Յովհաննէս... երկինք և երկիր — ահա այդքան էր զանազանութիւնը... Բայց և այնպէս քաջ էր Յովհաննէս Զաւուշը և քաջի պէս էլ նահատակւեց Մակեդոնիայում, Սուլթանթէփէի ահսելի կուռում: Դրուժինայի հրամանաւարը երկիւղից չէր երևում, որի պատճառով

դրուժինայի մէջ մեծ անկարգութիւն էր առաջ եկել: Ուստի Զաւուշը դրուժինայի գլուխն անցած՝ յորդորում էր առաջ անցնել և գրոհ տալ թշնամու վրայ. ինքն էլ քաջաբար առաջ է գնում, սակայն շանթահար ընկնում է թշնամու շրապնելի տակ, որը թուցնում է նրա գլուխը և սպանում տեղն ու տեղը:

Այսպէս մեռնում է քաջը, բայց նրա ընկեր փօյփաները այժմ էլ կենդանի են, որովհետեւ դրուժինաների մէջ աւելի անվտանգ պաշտօններ գտնելով, խոյս են տւել թշնամուն դէմ առ դէմ ենելուց:

Մեռաւ Յովհաննէսը: Մինչև վերջն էլ չիմացայ, թէ արդեօք ունէր նա ծնողներ, որոնք պէտք է ապարդիւն սպասէին նրան, արդեօք ունէր կին, երեխայ, որոնք գոնէ լային այդ արկածախնդիր, անվեհեր հերոսի վաղաժամ մահը...

Դեղէաղաջից Գիւմիւրջինա հասանք երկու օրւայ մէջ: Այստեղ մեզ ընդունելու համար մեծ պատրաստութիւն էին տեսել և յաղթական կամար շինել հետևեալ մակագրութեամբ. «Բարնվեկաք, մեր սիրելի ազատիչներ, Մակեդոնօ-օդբինցիներ»:

Հայ գաղութն էլ ծաղիկներով և ծափահարութիւններով գիմաւորեց Հայկական վաշտին, որին սակայն չթոյլատրեցին բնակութիւն հաստատել հայոց թաղում, այլ քշեցին դէպի տաճկաց կեղաոտ և քարուքանդ եղած մասը: Այսպէս, տասն օրից աւելի հանգստացանք

այդտեղ: Դեռ յայտնի չէր, թէ ուր պիտի գնանք Բայց և այնպէս բուլղարները բացարձակ կերպով պատերազմներու սերբերի և յոյների դէմ և տենդային արագութեամբ տաճկաց սահմանից զօրք էին փոխադրում Մակեդոնիայի խորքերը: Մեր բրիգադայի հրամանատար փոխ-գնդապետ Պրոտոգերովը ևս հրաման ստացաւ նոր չետաներ կազմակերպել և ուղարկել յունաց և սերբերի սահմանագլուխները, որ յարմար բովէին սնցնեն սահմանը և նոյն գործունէութիւնը ցոյց տան, ինչ որ արել են տաճիկների դէմ: Պրոտոգերովը մեզ թողեց Գիւմիւրջինա և ինքը գնաց Մերէս, Դոյրան և Սարումիցա՝ տեղն ու տեղը ժողովրդական օգնութիւն և ապստամբութիւն կազմակերպելու:

Պարզ էր, որ առանց պատերազմի չէին կարողանալու բաժանել տաճիկներից մնացած ժառանգութիւնը—կուտածաղիկ Մակեդոնիան: Բուլղարացիք կամենում էին ոչինչ չտալ յոյներին և սերբերին, մենակ վերցնել բոլոր գրաւած երկիրները, բայց նրանք այնքան միամիտ չէին, որ միջոցներ ձեռք չառնէին զիմադրելու բուլղարների այդ աշխարհակալական գոռող տեսչանըներին:

Թէև մեր Հայկական վաշտի գործը վերջացած կարելի էր համարել և նոյնիւ սպասում էր, որ նրան կարձակեն հենց Գիւմիւրջինայում, որովհետեւ անհնարին էր հայերին մասնակցելու դաշնակիցների միջև ծագելիք եղբայրասպան դաշնակիցների միջև ծագելիք եղբայրասպան

պատերազմին, — այնուամենայնիւ, քանի որ Տաճկաստանի հետ դեռ հաշտութիւն չէր կնքւած, վաշտը իւր բարոյական պարտականութիւնը համարեց զէնքի տակ մնալ մինչև հաշտութիւն կնքելը:

Գիւմիւրջինայի մէջ էինք դեռ, երբ Անդրանիկն էլ եկաւ միացաւ մեզ: Նա արդէն զինւորական համագետառով էր, նրան պարգետրւած էր պող-պորուչիկի աստիճան իւր ցոյց տաշքաջութեան և ծառայութիւնների համար:

Մայիսի 12-ին երկաթուղի նստեցինք Գիւմիւրջինայից մինչև Դեմիր-Հիսար, որտեղից էլի սկսեցինք քայլել ոտքով: Անցանք Մակեդոնիայի մի քանի քաղաքներ՝ Պետրիչ, Ստրումիցա, Ռադովիչ և Շտիպ, ուր մնացինք 6 օր: Ստրումիցա և Շտիպ քաղաքներում սերբական բերդապահ զօրք կար, որ մեր գալուց յետոյ իսկոյն քաշւեց, երկրի խորքերը դնաց:

Թէև ոտքով քայլելը մի առանձին հաճոյք չէր այդ շոգերին, այլ մեծ նեղութիւն, բայց որ ովհետև ճանապարհները լի էին շէն գիւղերով, սառնորակ աղբիւրներով; Կեռասի այգիներով, կաթով ու մածնով, ուստի տղերքը լաւ ժամանակ անց կացրին:

Շտիպ քաղաքում յայտնեցին, որ Տաճկաստանի հետ հաշտութիւնն արդէն կնքել է: Գեներալի հրամանով գրութիւնայի հրամանատարը կամեցաւ իմանալ, թէ հայերն արդեօք կամե-

նում են տուն դառնալ, թէ դեռ մնում են ծառայութեան մէջ:

Հայերը բոլորն էլ յայտնեցին, որ իրենց պարտքը կատարած են համարում և կամենում են հեռանալ:

Շտիպ քաղաքից, սերբերի աչքերի առաջ, մենք թնդանօթներով և զինւորական կարգով անցանք կոչան քաղաքը, որի մօտ գտնում էր Սուլթան-Թէփէ ամենաբարձր սարը, որ իւր ամբովեամբ հաւասարելով Օդրինին և Պորտ-Արտուրին և լինելով սերբերի ամենապինդ դիրքերից մէկը, պէտք է ամենամեծ դերը խաղարպատերազմի ընթացքում:

Այդ քաղաքում մայիսի 27-ին Հայկական վաշտը պաշտօնապէս կազմակուծւեց և վերադարձեց բոլոր պետական իրերը:

Տղերքն արդէն ազատ զբունում էին կոչան քաղաքում. միւս օրն առաւտեան պէտք է ճանապարհւէին դէպի Սոֆիա. սպասում էին իրենց խնդրի պատասխանին, որ ուղղել էին գեներալին՝ թոյլ տալ Գարեգինին իրանց մինչև Սոֆիա առաջնորդելու համար: Բայց Գարեգինն անդէն կոչանից 20—30 քիլոմետր հեռաւորութեան վրայ՝ Սուլթան-Թէփէի դիրքերի դէմ գերք էր բռնել իւր Մակեդոնական վաշտով:

Միւս օրը տղերքը իրենց խմբապետների առաջնորդութեամբ վերջին անգամ շարւեցին քաղաքի մէջ, զրօշակը լայն պարզեցին և կազմու պատրաստ սպասում էին շարժւելու հրամա-

նին։ Նրանք այդ խորհրդաւոր ըոսլէին չմոռացան իրենց սիրելի հրամանատարին և հետեւեալ համակը գրեցին։

«Պաշտելին հրամանատար. Դու մեզ ոգևորում էիր զոհել մեր անձը սարկի ազատութեան համար. դու եօթհարիւրամեայ փոշիների միջից հանեցիր մեր ազգային զրօշակը և տարածեցիր մեր՝ հայ կամաւորներիս գլխին, որոնցից դու կազմեցիր առաջին Հայկական վաշտը։

«Դու տարար մեզ թշնամու դէմ, տանջւեցիր մեզ հետ միասին, մեզնից էլ աւելի ծանր, բայց տանջւեցիր առանց տրտունջի, միշտ ժըպտալով, որով ոգեորում էիր մեր տանջւած ողբտերը և թարմացնում մեր յոդնած հոգիները։

«Դու առաջնորդեցիր մեզ Մեստանլուի, Աւգուն-Համիդլերի, Բալքան-Թորէսիի, Մերհամլուի և Շար-Քեօյի կոփւներում։ Եւ ամենուրեք մենք քեզ հետևում էինք՝ ոգեորւած քո հերոսութիւնով և քաջութիւնով։

«Դու պսակեցիր մեր գլուխները դափնեայ պսակներով, իսկ Հայկական վաշտը՝ անմահ փառքով, բայց չար ճակատագիրը իւեց քեզ մեր գրկից, չթողնելով, որ մենք ուրախանանք քո թափած անխոնջ աշխատանքի պտուղներով։»

«Այժմ քո վաշտը կազմալուծած է։ Մենք հեռանում ենք Մակեդոնիայից, որի ազատութեան համար արիւն թափեցինք։ Մենք վերադառնում ենք Բուլղարիա առանց ոգեորութեան և ուրախութեան, որովհետեւ վերագառնում ենք

առանց մեզ համար փառք վաստակողին, առանց քեզ։


«Այս ըոսլէիս մենք աւելի քան երբեկցէ խոնարհուում ենք քո տանջանքների առաջ, աւելի քան երբեկցէ սիրով արտասանում ենք քո անունը։

«Քո տանջւած, բայց յանդուգն և կրակոտ հայեացքը խոր տպւել է մեր սրտերի մէջ և երբէք չի ջնջւիլ այնաեղից։

«Յտեսութիւն, սիրելին հրամանատար։

«Հաւատացած եղիր, որ երբ էլի պէտք լինի սարկի համար կուելու, մենք պատրաստ ենք»...

Աւագ խմբապետը վերջին անգամ տւեց «Ճախ թևետ առաջ—մարշ» հրամանը, և վաշտն առաջ քայլեց քաղաքից գուրս ելող խճուղիով և շուտով անհետացաւ հեռուում...



ՅԱԻԵԼԻԱՌ

Պատմէն.

Ճ Տ Ա Բ

ՄԵԿԵԴՈՒՑ-ՕԴԻՐՆԵՑՆ

ԿԸՄԸՌՈՌՈՒԹԵՑՆ

ՇԱՐՔԱՑԻՆ ԲԱԺԻՆ

№ 3483.

31 օգոստոսի 1913 թ.
ք. Սովիս.

ՎԿԱՅԱԿԱՆ.

Մակեդոնո-Օդրինեան կամաւորութեան կազմակերպման ժամանակ՝ ի նկատի առնելով հայերի համակրութիւնը գէպի Բուղարիան, երկու ժողովրդների անցեալը և այն կարևորութիւնը, որ հայերը պատերազմ դուրս գան իրենց առանձին զօրամասով, թոյլատրեց, որ մի Հայկական վաշտ կազմակերպւի Հայոց ազգային դրօշակով և հայ սպաներով ու վօյվողաներով (Հրաման կամաւորութեան № 2, § 8, 1912 թ. հոկտեմբերի 3-ից):

Հայկական վաշտը վերջնականապէս կազմակերպւեց 1912 թ. հոկտեմբերի 8-ին և նոյն ամսի 16-ին մտաւ XII-րդ Լօգէնգրադեան դրուժինայի կազմի մէջ:

Վաշտի սկզբնական կազմն էր—մէկ սպայ՝ վաշտի հրամանատար՝ պողպորուչիկ Գարեգին Նժդեհ, մէկ վօյվոդա՝ Անդրանիկ Տ. Ռւզունեան և 229 կամաւոր։ Արշաւանքի ժամանակ Թրակիայում վաշտին միացան 42 կամաւորներ ևս, որոնց հետ վաշտի կազմը հասաւ 273 մարդու։

Պատերազմի առաջին շրջանում, կըոջալիւ եան զօրաբանակի մէջ այդ վաշտը մասնակցեց Սոֆիա—Սամոկով—Կոստնեց Բանիա —Պլովդիւ —Տրոնովո—Սէյմէն—Խասկովո—Կըոջալի—Մետանլի—Գիւմիւրջինա—Փերէ—Սոֆլու—Դիմոտիկա—Ռւզուն-Քեօպրու—Քէշան—Մալգարա—Թողոսթօ արշաւանքներին և հետևեալ կոիւներին։

1) Մեստանլիի կուին — 4-ին նոյեմբերի 1912 թ.

2) Ռւզուն-Համիլլերի կուին — 6-ին նոյեմբերի 1912 թ.

3) Բալքան-Թորեսիի կուին — 7-ին նոյեմբերի 1912 թ.

4) Մերհամլիի կուին — 15-ին նոյեմբերի 1912 թ. (Եավեր-փաշայի զօրաբանակի գերութիւն):

Ամբողջ կամաւորութեան կազմի հետ միասին Տաճկաստանի դէմ մղած պատերազմի երկրորդ շրջանում ակտիւ մասնակցութիւն ունեցաւ հետևեալ կոիւների մէջ։

1) Մերեֆթէ քաղաքի գրաման կուի մէջ՝ 22-ին յունարի 1913 թ.

2) Շար-Քեօյ քաղաքի գրաւան կուի մէջ՝ 23-ին յունարի 1913 թ.

3) Շար-Քեօյի մօտ տաճկական դեսանտի ոչնչացման կոիւների մէջ՝ յունարի 26, 27, 28-ին 1913 թ. և Շար-Քեօյ—Մալգարա—Քեշան—Իբրալա—Փերէ—Դէղէաղաջ—Գիւմիւրջինա—Դէմիր-Հիսար—Պետրիչ—Մարումիցա—Ծաղկալ—Կոչանէ—Սոֆիա արշաւանքների մէջ։

Հայկական վաշտը պաշտպանել է Մարմարայի ծովափը 1912 թ. գեկտեմբերի 16-ից մինչև 1913 թ. յունարի 20-ը և նոյն թւի յունարի 29-ից մինչև մարտի 22-ը։ Պահակային (պատրուլ) ծառայութիւնը կատարում էր եռանդագին։

Գերազանց ծառայութեան համար վաշտի անդամներից բարձր աստիճան են ստացել՝ մէկ հոգի—Անդրանիկ Տէր-Ռւզունեան — պողպորուչիկի աստիճան, 8 հոգի կըտսեր ենթասպայի աստիճան և 16 հոգի եփրէյտէրի աստիճան։

Պարզեներ ստացել են՝ պողպորուչիկ Գարեգին Նժդեհ — մէկ սպայական քաջութեան խոչ, Անդրանիկ Տէր-Ռւզունեան — մէկ զինուորական խաչ երկրորդ աստիճանի, մէկ հոգի երրորդ աստիճանի և 23 հոգի չորրորդ աստիճանի, որոնցից մէկը կպցրած է Ազգային գրօշակի վրայ, և տասը հոգի՝ շքանշան «զինուորական ծառայութեանց համար»։

Վաշտն արձակւած է 1913 թ. մայիսի 23-ին

Կոչանէ քաղաքում, Տաճկաստանի հետ հաշտութիւնը կնքելուց յետոյ:

Ընդհանրապէս Հայկական վաշտը, չնայած հագուստի բացակայութեան և իւր բազմամարդութեան, միշտ եղել է ուժեղ իւր տոկունորեամբ, դիսցիլինայով եւ դիմացկանուրեամբ եւ չափազանց բազ կուխների մէջ:

Այդ վաշտի մէջ բոլոր մասնակցողները կարող են հպարտանալ իրենց քաջ գործերով: Իսկ Տաճկա-Հայաստանը պէտք է հաւատացած լինի, որ շնորհիւ այդպիսի որդիների, որոնք ընդունակ են մեռնելու մի օտար գործի համար, մօտիկ ապագայում կարող է ունենալ երջանիկ և յարատե ապահովութիւն:

Կամաւորութեան հրամանատար՝
Գեներալ-մայոր Գեներ.

Կնիք

Շտարի կառավարիչ՝
Ընդհանուր շտարի մայոր ԴԱՐՎԻՆԳՈՎ.

Աւագ ազիւտանտ՝
Կապիտան ՆԻԿՈՂՈՎ.

ՎԵՐԶԱՐԱՆ

Մենք աւարտեցինք մեր աշխատանքը և յանձնում ենք այն լնթերցողի ներողամիտ ուշադրութեանը: Զգում ենք, որ մեր այս աշխատութեան թերութիւնները բազմաթիւ են թէ լեզուի և թէ նիւթի մշակման կողմից, սակայն մենք մեզ թոյլ ենք տալիս հասարակութեան առաջ գուրս բերելու Հայկական վաշտի պատմութիւնը, որը մի շտապ, թերի գրւածք լինելով հանգերձ, ունի այնու ամենայնիւ որոշ հասարական արժէք, որոց նշանակութիւն:

Մենք շտապ գրեցինք այս գրքոյկը, կատարելով մեր սրտի ուխտը: Եթէ երբ և իցէ մեր այս համեստ աշխատութիւնը յաջողւի երկրորդ անգամ լոյս ընծայելու, մեր պարտքն ենք համարում ուղղել, լուցնել նրա բոլոր թերաթիւնները:

„Feci quod potui, facient meliora potentes!“

Արմեն Սիւնի.

6—12 դեկտեմբերի 1913 թ.



6181

